



L.A. Care
Medi-Cal

L.A. Care Health Plan-ի Անդամի տեղեկագիրք

Ինչ պետք է իմանաք Ձեր նպաստների մասին

Ապահովագրության ապացույցի և պայմանների
բացահայտման միասնական ձևաթուղթ



2020 Չայերեն

Ուրիշ լեզուներ և ձևաչափեր

Ուրիշ լեզուներ

Այս Անդամի տեղեկագիրքը և ծրագրի ուրիշ նյութեր կարող եք անվճար ստանալ ուրիշ լեզուներով: Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711):**

Յեռախոսագանգն անվճար է: Կարդացեք այս Անդամի տեղեկագիրքը՝ առողջական ինսամֆի լեզվական օգնության ծառայությունների, ինչպես՝ բանավոր թարգմանչի և թարգմանչական ծառայությունների մասին ավելին իմանալու համար:

Ուրիշ ձևաչափեր

Այս տեղեկությունն անվճար կարող եք ստանալ ուրիշ օժանդակ ձևաչափերով, ինչպես՝ բրայլյան այբուբենով, 18 չափանոց խոշոր տառատեսակով և ձայնագրված: Չանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով: Յեռախոսագանգն անվճար է:

Բանավոր թարգմանչի ծառայություններ

Պարտավոր չեք որպես բանավոր թարգմանչի օգտվել ընտանիքի անդամից կամ ընկերից: Անվճար բանավոր թարգմանչի, լեզվական և մշակութային ծառայությունների և օրը 24 ժամ, շաբաթը 7 օր տրամադրելի օգնության, կամ այս տեղեկագիրքը ուրիշ լեզվով ստանալու համար գանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711):** L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Յեռախոսագանգն անվճար է: Կամ գանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Ուրիշ լեզուներ և ձևաչափեր

- Free language assistance services are available. You can request interpreting or translation services, information in your language or in another format, or auxiliary aids and services. Call L.A. Care at **1-888-839-9909 (TTY 711)**, 24 hours a day, 7 days a week, including holidays. The call is free.
- Los servicios de asistencia de idiomas están disponibles de forma gratuita. Puede solicitar servicios de traducción e interpretación, información en su idioma o en otro formato, o servicios o dispositivos auxiliares. Llame a L.A. Care al **1-888-839-9909 (TTY 711)**, las 24 horas del día, los 7 días de la semana, incluso los días festivos. La llamada es gratuita.

- خدمات المساعدة اللغوية متاحة مجانًا. يمكنك طلب خدمات الترجمة الفورية أو الترجمة التحريرية أو معلومات بلغتك أو بتنسيق آخر أو مساعدات وخدمات إضافية. اتصل بـ L.A. Care على الرقم **1-888-839-9909 (TTY 711)** على مدار الساعة وطوال أيام الأسبوع، بما في ذلك أيام العطلات. المكالمات مجانية.

- Տրամադրելի են լեզվական օգնության անվճար ծառայություններ: Կարող եք խնդրել բանավոր թարգմանչական կամ թարգմանչական ծառայություններ, Ձեր լեզվով կամ տարբեր ձևաչափով տեղեկություն, կամ օժանդակ օգնություններ և ծառայություններ: Զանգահարեք L.A. Care **1-888-839-9909** համարով (TTY 711), օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Այս հեռախոսազանգն անվճար է:
- 提供免費語言協助服務。您可申請口譯或翻譯服務，您使用之語言版本或其他格式的資訊，或輔助援助和服務。請致電 L.A. Care 電話 **1-888-839-9909 (TTY 711)**，服務時間為每週 7 天，每天 24 小時（包含假日）。上述電話均為免費。

- خدمات رایگان امداد زبانی موجود می باشد. می توانید برای خدمات ترجمه شفاهی یا کتبی، اطلاعات به زبان خودتان یا فرمت دیگر، یا امدادها و خدمات اضافی درخواست کنید. با L.A. Care به شماره **1-888-839-9909 (TTY 711)** در 24 ساعت شبانه روز و 7 روز هفته شامل روزهای تعطیل تماس بگیرید. این تماس رایگان است.

- मुफ्त भाषा सहायता सेवाएं उपलब्ध हैं। आप दुभाषिया या अनुवाद सेवाओं, आपकी भाषा या किसी अन्य प्रारूप में जानकारी, या सहायक उपकरणों और सेवाओं के लिए अनुरोध कर सकते हैं। आप L.A. Care को **1-888-839-9909 (TTY 711)** नंबर पर फ़ोन करें, दिन में 24 घंटे, सप्ताह में 7 दिन, छुट्टियों सहित। कॉल मुफ्त है।
- Muaj kev pab txhais lus pub dawb rau koj. Koj tuaj yeem thov kom muab cov ntaub ntawv txhais ua lus lossis txhais ua ntawv rau koj lossis muab txhais ua lwm yam lossis muab khoom pab thiab lwm yam kev pab cuam. Hu rau L.A. Care ntawm tus xov tooj **1-888-839-9909 (TTY 711)**, tuaj yeem hu tau txhua txhua 24 teev hauv ib hnuv, 7 hnuv hauv ib vij thiab suab nrog cov hnuv so tib si, tus xov tooj no hu dawb xwb.
- 言語支援サービスを無料でご利用いただけます。通訳・翻訳サービス、日本語や他の形式での情報、補助具・サービスをリクエストすることができます。L.A. Careまでフリーダイヤル **1-888-839-9909 (TTY 711)**にてご連絡ください。祝休日を含め毎日24時間、年中無休で受け付けています。



Զանգահարեք L.A. Care-ի Անդամների սպասարկում՝ **1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք www.lacare.org:

- សេវាជំនួយខាងភាសա គឺមានដោយឥតគិតថ្លៃ។ អ្នកអាចស្នើសុំសេវាបកប្រែផ្ទាល់មាត់ ឬការបកប្រែ ស្នើសុំព័ត៌មាន ជាភាសាខ្មែរ ឬជាទម្រង់មួយទៀត ឬជំនួយជ្រាមជ្រួង និងសេវា។ ទូរស័ព្ទទៅ L.A. Care តាមលេខ **1-888-839-9909 (TTY 711)** បាន 24 ម៉ោងមួយថ្ងៃ 7 ថ្ងៃ មួយអាទិត្យ រួមទាំងថ្ងៃបុណ្យផង។ ការហៅនេះគឺឥតគិតថ្លៃឡើយ។
- 무료 언어 지원 서비스를 이용하실 수 있습니다. 귀하는 통역 또는 번역 서비스, 귀하가 사용하는 언어 또는 기타 다른 형식으로 된 정보 또는 보조 지원 및 서비스 등을 요청하실 수 있습니다. 공휴일을 포함해 주 7 일, 하루 24 시간 동안 L.A. Care, **1-888-839-9909 (TTY 711)** 번으로 문의하십시오. 이 전화는 무료로 이용하실 수 있습니다.
- ພາສາອັງກິດ ມີບໍລິການຊ່ວຍເຫຼືອດ້ານພາສາໂດຍບໍ່ເສຍຄ່າ. ທ່ານສາມາດຂໍຮັບບໍລິການນາຍພາສາ ຫຼື ແປພາສາໄດ້, ສໍາລັບຂໍ້ມູນໃນພາສາຂອງທ່ານ ຫຼື ໃນຮູບແບບອື່ນ, ຫຼື ເຄື່ອງມືຊ່ວຍເຫຼືອ ແລະ ບໍລິການເສີມ. ໃຫ້ໂທຫາ L.A. Care ໄດ້ທີ **1-888-839-9909 (TTY 711)**, 24 ຊົ່ວໂມງຕໍ່ມື້, 7 ມື້ຕໍ່ອາທິດ, ວອມເຖິງວັນພັກຕ່າງໆ. ການໂທແມ່ນບໍ່ເສຍຄ່າ.
- ਮੁਫਤ ਭਾਸ਼ਾ ਸਹਾਇਤਾ ਸੇਵਾਵਾਂ ਉਪਲਬਧ ਹਨ। ਤੁਸੀਂ ਦੁਆਰੀਆਂ ਜਾਂ ਅਨੁਵਾਦ ਸੇਵਾਵਾਂ, ਆਪਣੀ ਭਾਸ਼ਾ ਜਾਂ ਕਿਸੇ ਹੋਰ ਫੋਰਮੈਟ ਵਿੱਚ ਜਾਣਕਾਰੀ, ਜਾਂ ਸਹਾਇਕ ਉਪਕਰਣਾਂ ਅਤੇ ਸੇਵਾਵਾਂ ਲਈ ਬੇਨਤੀ ਕਰ ਸਕਦੇ ਹੋ। L.A. Care ਨੂੰ **1-888-839-9909 (TTY 711)** ਨੰਬਰ ਉੱਤੇ ਕਾਲ ਕਰੋ, ਇੱਕ ਦਿਨ ਵਿੱਚ 24 ਘੰਟੇ, ਹਫ਼ਤੇ ਵਿੱਚ 7 ਦਿਨ, ਛੁੱਟੀਆਂ ਸਮੇਤ। ਕਾਲ ਮੁਫਤ ਹੈ।
- Мы предоставляем бесплатные услуги перевода. У вас есть возможность подать запрос о предоставлении услуг устного и письменного перевода, информации на вашем языке или в другом формате, а также вспомогательных средств и услуг. Звоните в L.A. Care по телефону **1-888-839-9909 (TTY 711)**. Мы работаем круглосуточно, без выходных и праздничных дней. Звонок бесплатный.
- Available ang mga libreng serbisyo ng tulong sa wika. Maaari kang humiling ng mga serbisyo ng pag-interpret o pagsasaling-wika, impormasyon na nasa iyong wika o nasa ibang format, o mga karagdagang tulong at serbisyo. Tawagan ang L.A. Care sa **1-888-839-9909 (TTY 711)**, 24 na oras sa isang araw, 7 araw sa isang linggo, kabilang ang mga holiday. Libre ang tawag.
- มีบริการช่วยเหลือภาษาฟรี คุณสามารถขอรับบริการการแปลหรือล่าม ข้อมูลในภาษาของคุณหรือในรูปแบบอื่น หรือความช่วยเหลือและบริการเสริมต่าง ๆ ได้ โทร L.A. Care ที่ **1-888-839-9909 (TTY 711)** ตลอด 24 ชั่วโมง 7 วันต่อสัปดาห์รวมทั้งวันหยุด โทรฟรี
- Có các dịch vụ hỗ trợ ngôn ngữ miễn phí dành cho quý vị. Quý vị có thể yêu cầu dịch vụ biên dịch hoặc phiên dịch, thông tin bằng ngôn ngữ của quý vị hoặc bằng các định dạng khác, hay các dịch vụ và thiết bị hỗ trợ ngôn ngữ. Xin vui lòng gọi L.A. Care tại **1-888-839-9909 (TTY 711)**, 24 giờ một ngày, 7 ngày một tuần, kể cả ngày lễ. Cuộc gọi này miễn phí.



Հանրահայտք L.A. Care-ի **Արհիշելու և օգնելու 1-888-839-9909 (TTY 711):**
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 Ժամ, 2աբաբաթը 7 օր, ներառյալ՝ տեղական օրերը: Հեռախոսազանգը
 անվճար է: Կամ զանգահայտք Կալիֆոռնիայի փոխանցման հեռախոսազանգ՝ **711:** Այցելեք
 անցանց՝ **lacare.org:**

Ոչ խտրականության ծանուցագիր

Խտրականությունը դեմ է օրենքին: L.A. Care-ը հետևում է նահանգային և դաշնային քաղաքացիական իրավունքների օրենքներին: L.A. Care-ը ապօրինաբար խտրականություն չի գործադրում, անձանց չի բացառում կամ նրանց հետ տարբեր չի վարվում սեռի, ցեղի, գույնի, կրոնի, նախնիների, ազգային ծագման, ազգային խմբերի նույնականացման, տարիքի, հոգեկան հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական վիճակի, գենետիկական տեղեկությունների, ամուսնական կարգավիճակի, գենտերի, սեռական ինքնության կամ սեռական հակումների պատճառով:

L.A. Care-ը մատուցում է՝

- Անվճար օգնություններ և ծառայություններ հաշմանդամներին, որպեսզի օգնի, որ ավելի լավ հաղորդակցեն, ինչպես՝
 - խուլուհամրերի լեզվի որակյալ բանավոր թարգմանիչներ
 - Գրավոր տեղեկություն այլ ձևաչափերով (խոշոր տառատեսակ, ձայնագրություն, էլեկտրոնային մատչելի ձևաչափեր և այլ ձևաչափեր)
- Անվճար լեզվական ծառայություններ անձանց, ում առաջին լեզուն անգլերենը չէ, ինչպես՝
 - Որակյալ բանավոր թարգմանիչներ
 - Ուրիշ լեզուներով գրված տեղեկություն

Եթե այս ծառայությունների կարիքն ունեք, զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)** համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը:

Ինչպես ներկայացնել բողոքը

Եթե համոզված եք, որ L.A. Care-ին չի հաջողվել այս ծառայությունները մատուցել, կամ ապօրինաբար խտրականություն է գործադրել մի ուրիշ ճանապարհով՝ սեռի, ցեղի, գույնի, կրոնի, նախնիների, ազգային ծագման, ազգային խմբերի նույնականացման, տարիքի, հոգեկան հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական վիճակի, գենետիկական տեղեկությունների, ամուսնական կարգավիճակի, գենտերի, սեռական ինքնության կամ սեռական հակումների հիմքի վրա, կարող եք բողոք ներկայացնել L.A. Care-ի Քաղաքացիական իրավունքների համակարգողին: Կարող եք բողոք ներկայացնել անձամբ, գրավոր, հեռախոսով, կամ էլ. փոստով՝



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Civil Rights Coordinator
c/o Compliance Department
1055 West 7th Street, 10th Floor
Los Angeles, CA 90017
(213) 694-1250 լրացուցիչ հեռախոսահամար՝ 6758 (TTY **711**)
Էլ. փոստ՝ **civilrightscordinator@lacare.org**

Եթե բողոք ներկայացնելու հարցում օգնության կարիք ունեք, L.A. Care-ի Զաղաքացիական իրավունքների համակարգողը կարող է օգնել Ձեզ:

Կարող եք նույնպես քաղաքացիական իրավունքների գանգատ ներկայացնել Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժնի (Department of Health Care Services) Զաղաքացիական իրավունքների գրասենյակ (Office of Civil Rights) գրավոր, հեռախոսով կամ Էլ. փոստով՝

Deputy Director, Office of Civil Rights
Department of Health Care Services
Office of Civil Rights
P.O. Box 997413, MS 0009
Sacramento, CA 95899-7413
1-916-440-7370 (TTY **711** Կալիֆորնիա նահանգի փոխանցում)
Էլ. փոստ՝ **CivilRights@dhcs.ca.gov**

Կարող եք գանգատի ձևաթղթերն ստանալ այստեղից՝ **dhcs.ca.gov/Pages/Language_Access.aspx**:

Եթե համոզված եք, որ Ձեզ դեմ խտրականություն է գործադրվել ցեղի, գույնի, ազգային ծագման, տարիքի, հաշմանդամության կամ սեռի հիմքի վրա, կարող եք նաև քաղաքացիական իրավունքների գանգատ ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդու ծառայությունների նախարարության Զաղաքացիական իրավունքների գրասենյակ գրավոր, հեռախոսով կամ առցանց՝

U.S. Department of Health and Human Services
200 Independence Avenue, SW
Room 509F, HHH Building
Washington, D.C. 20201
1-800-368-1019 (TTY **1-800-537-7697**)
Գանգատի կայքամուտք՝ **ocrportal.hhs.gov/ocr/cp/wizard_cp.jsf**

Գանգատի ձևաթղթերը կարող եք ստանալ այստեղից՝ **hhs.gov/ocr/office/file/index.html**:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ գանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Բարի գալու՛ստ L.A. Care

Շնորհակալ ենք, որ միացել եք L.A. Care Health Plan-ին (L.A. Care): L.A. Care-ը առողջապահական մի ծրագիր է անձանց համար, ովքեր Medi-Cal ունեն: L.A. Care-ը նաև կոչվում է Local Initiative Health Authority for Los Angeles County: Սակայն Դուք կարող եք մեզ անվանել «L.A. Care»: L.A. Care-ը Կալիֆորնիա նահանգի հետ գործելով, օգնում է, որ ստանաք Ձեզ անհրաժեշտ առողջական ինսամբը: L.A. Care-ը տեղական բնույթի հանրային եռություն է: Ի դեպ, մենք երկրում հանրորեն շահագործվող ամենից ընդարձակ առողջապահական ծրագիրն ենք: Մենք սպասարկում ենք անձանց, ովքեր բնակվում են Լոս Անջելես վարչաշրջանում (կոչվում է՝ մեր «սպասարկման տարածք»): L.A. Care-ը նաև գործում է չորս (4) Առողջապահական ծրագրի գործընկերների հետ (L.A. Care-ը համարվում է նույնպես «Առողջապահական ծրագրի գործընկեր»), մեր անդամներին առողջական ինսամբի ծառայություններ մատուցելու համար: Միանալով L.A. Care-ին՝ Medi-Cal-ի անդամը կարող է որոշել ծառայություններն ստանալ ստորև նշված Առողջապահական ծրագրի գործընկերներից որևէ մեկի միջոցով, քանի դեռ առկա է ծրագրի ընտրանքը:

- Anthem Blue Cross
- Blue Shield of California Promise Health Plan
- Kaiser Permanente
- L.A. Care Health Plan

Անդամի տեղեկագիրք

Այս Անդամի տեղեկագիրքը Ձեզ բացատրում է Ձեր ապահովագրությունը L.A. Care-ի ներքո: Խնդրում ենք այն կարդալ ուշադիր և լրիվ: Այն կօգնի, որ հասկանաք Ձեր նպաստներն ու ծառայությունները և օգտվեք նրանցից: Այն նաև բացատրում է Ձեր իրավունքները և պարտավորությունները որպես L.A. Care-ի անդամ: Եթե ունեք հատուկ առողջական կարիքներ, անպայման կարդացեք Ձեզ վերաբերող բաժինները:

Այս Անդամի տեղեկագիրքը կոչվում է նաև Ապահովագրության ապացույցի (Evidence of Coverage, EOC) և բացահայտման միասնական ձևաթուղթ: Այն ամփոփում է L.A. Care-ի կանոնների և քաղաքականությունների և հիմնվում է L.A. Care-ի և Առողջական ինսամբի սպասարկման բաժնի (Department of Health Care Services, DHCS) միջև կնքված պայմանագրի վրա: Եթե ցանկանում եք իմանալ ապահովագրության ճշգրիտ ընդհանուր դրույթներն ու պայմանները, կարող եք ողջ պայմանագրի պատճենը խնդրել L.A. Care-ից **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Չանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով խնդրելու պատճենը L.A. Care-ի և DHCS-ի միջև կնքված պայմանագրի: Կարող եք նաև խնդրել Անդամի տեղեկագրի մի ուրիշ անվճար պատճեն կամ այցելել L.A. Care-ի կայքը՝ **lacare.org**, Անդամի տեղեկագիրքը աչքի անցկացնելու համար: Կարող եք նաև խնդրել անվճար պատճենը L.A. Care-ի ոչ-սեփականատիրական կլինիկական և վարչական քաղաքականությունների և ընթացակարգերի, կամ իմանալ այս տեղեկությունը L.A. Care-ի կայքից ձեռք բերելու միջոցի մասին:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Դիմեք մեզ

L.A. Care-ն այստեղ է օգնելու համար: Եթե հարցեր ունեք, գանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Յեռախոսազանգն անվճար է:

Կարող եք նաև որևէ ժամանակ առցանց այցելել հետևյալ կայքը՝ **lacare.org**:

Շնորհակալություն,
L.A. Care Health Plan
1055 West 7th Street, 10th Floor
Los Angeles, CA 90017



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Յեռախոսազանգն անվճար է: Կամ գանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Բովանդակություն

Ուրիշ լեզուներ և ձևաչափեր	1
Ուրիշ լեզուներ.....	1
Ուրիշ ձևաչափեր.....	1
Բանավոր թարգմանչի ծառայություններ.....	1
Ոչ խտրականության ծանուցագիր	4
Բարի գալու՛ստ L.A. Care	6
Անդամի տեղեկագիրք.....	6
Դիմեք մեզ.....	7
Բովանդակություն	8
1. Որպես անդամ սկսելը	10
Ինչպես ստանալ օգնությունը.....	10
Ով կարող է անդամակցել.....	10
Ճանաչողական քարտեր.....	11
Որպես անդամ ներգրավվելու եղանակներ.....	12
2. Ձեր առողջապահական ծրագրի մասին	13
Առողջապահական ծրագրի ակնարկ.....	13
Ինչպես է գործում Ձեր ծրագիրը.....	14
Առողջապահական ծրագրեր փոխելը.....	14
Խնամքի շարունակում.....	16
Ծախքեր.....	19
3. Ինչպես ինամք ստանալ	21
Առողջական ինամքի ծառայություններ ստանալը.....	21
Որտեղ ստանալ ինամքը.....	26
Բարոյական առարկություն.....	27
Մատակարարների ցանց.....	28
Առաջնային ինամքի մատակարար (PCP).....	30



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**:
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

4. Նպաստներ և ծառայություններ	38
Ինչ է ապահովագրում Ձեր առողջապահական ծրագիրը	38
Medi-Cal-ի նպաստներ.....	39
Համակարգված խնամքի նախաձեռնության (CCI) նպաստներ	55
Ինչ չի ապահովագրում Ձեր առողջապահական ծրագիրը.....	55
Ծառայություններ, որոնք չեք կարող ստանալ L.A. Care-ի կամ Medi-Cal-ի միջոցով.....	57
Ուրիշ ծրագրեր և ծառայություններ Medi-Cal ունեցողների համար.....	59
Խնամքի համակարգում	61
Նոր և առկա տեխնոլոգիաների գնահատում	63
5. Իրավունքներ և պարտավորություններ.....	64
Ձեր իրավունքները.....	64
Ձեր պարտավորությունները.....	66
Գաղտնիության գործելակերպի ծանուցագիր.....	67
Օրենքների մասին ծանուցագիր	75
Ծանուցագիր Medi-Cal-ի՝ որպես վերջին ելքի վճարողի վերաբերյալ.....	75
Ծանուցագիր անշարժ գույքի միջոցով վճարված գումարի վերադարձման վերաբերյալ	76
Գործողության ծանուցագիր	76
6. Խնդիրների հաղորդում և լուծում.....	77
Գանգատներ	78
Բողոքարկումներ.....	79
Ինչ անել բողոքարկման որոշման համաձայն չլինելու դեպքում.....	80
Բժշկական անկախ վերանայումներ (IMR).....	80
Նահանգային լսումներ.....	81
Խարդախություն, վատնում և չարաշահում	82
7. Կարևոր թվանշաններ և բառեր, որոնք պետք է իմանալ.....	84
Կարևոր հեռախոսահամարներ	84
Բառեր, որոնք պետք է իմանալ.....	87
8. Խորհուրդներ L.A. Care-ի անդամների համար	99



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711:** Այցելեք առցանց՝ **lacare.org**:

1. Որպես անդամ սկսելը

Ինչպես ստանալ օգնություն

L.A. Care-ը ցանկանում է, որ գոհ լինեք Ձեր առողջական խնամքից: Եթե Ձեր խնամքի վերաբերյալ ունեք որևէ հարց կամ մտահոգություն, L.A. Care-ը ցանկանում է լսել Ձեզանից:

Անդամների սպասարկում

L.A. Care-ի **Անդամների սպասարկումը** այստեղ է Ձեզ օգնելու համար: L.A. Care-ը կարող է՝

- Պատասխանել Ձեր առողջապահական ծրագրին և ապահովագրված ծառայություններին վերաբերող հարցերին
- Օգնել, որ ընտրեք Առաջնային խնամքի մատակարար (Primary Care Provider, PCP)
- Բացատրել որտեղ ստանալ Ձեզ անհրաժեշտ խնամքը
- Մատուցել բանավոր թարգմանչի ծառայություններ, եթե անգլերեն չեք խոսում
- Մատուցել ուրիշ լեզուներով և ձևաչափերով տեղեկություն
- Առաջարկել նոր ճանաչողական քարտի փոխարինում
- Պատասխանել մատակարարի ուղարկած հաշվին վերաբերող հարցերի
- Պատասխանել Ձեր լուծել չկարողացած խնդիրների վերաբերյալ հարցերի
- Օգնել փոխադրական ժամադրության ապահովման

Օգնության կարիքի դեպքում զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է:

Կարող եք նաև որևէ ժամանակ առցանց այցելել հետևյալ կայքը՝ **lacare.org**:

Ով կարող է անդամակցել

Դուք որակավորվում եք L.A. Care-ի համար, քանի որ որակավորվում եք Medi-Cal-ի համար և բնակվում եք Լոս Անջելես վարչաշրջանում: Ձեր Medi-Cal-ի ապահովագրության կամ Ձեր Medi-Cal-ի վերանորոգման ժամանակի վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում խնդրում ենք զանգահարել Medi-Cal-ի գործի աշխատողին: Կարող եք նաև զանգահարել Լոս Անջելեսի Հանրային սոցիալական սպասարկման բաժին (Department of Public Social Services) **1-866-613-3777** համարով: Թերևս նաև Medi-Cal-ի համար որակավորվեք Սոցիալական ապահովության միջոցով: Եթե հարցեր ունեք Սոցիալական ապահովության կամ Լրացուցիչ սոցիալական եկամտի վերաբերյալ, զանգահարեք Սոցիալական ապահովության վարչություն (Social Security Administration) **1-800-772-1213** համարով:



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում**՝ **1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Անդամագրման վերաբերյալ հարցերի համար զանգահարեք Առողջական ինսամֆի ընտրանքներ (Health Care Options) **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077**) համարով: Կամ այցելեք հետևյալ կայքը՝ **healthcareoptions.dhcs.ca.gov**:

Անցումային Medi-Cal



Անցումային Medi-Cal-ը կոչվում է նաև «Աշխատող անձանց Medi-Cal»: Անցումային Medi-Cal ստանալու հնարավորություն կարող եք ունենալ, եթե Medi-Cal-ով այլևս ապահովագրված չեք հետևյալ պատճառներով՝

- Սկսել եք ավելի շատ գումար վաստակել:
- Ձեր ընտանիքը սկսել է ստանալ երեխայի կամ կողակցի աջակցության ավելի խոշոր նպաստ:

Medi-Cal-ի համար որակավորվելու վերաբերյալ հարցեր կարող եք տալ Ձեր տեղական վարչաշրջանի առողջապահության և մարդու ծառայությունների գրասենյակին: Ձեր տեղական գրասենյակը գտեք հետևյալ կայքում՝ **dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/CountyOffices.aspx** կամ զանգահարեք Առողջական ինսամֆի ընտրանքներ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077**) համարով:

Ճանաչողական քարտեր

Որպես L.A. Care-ի անդամ, Դուք կստանաք L.A. Care-ի ճանաչողական քարտ: Ձեր L.A. Care-ի ճանաչողական քարտը և Medi-Cal-ի Նպաստների ճանաչողական քարտը (Benefits Identification Card, BIC) պարտավոր եք ցույց տալ որևէ առողջական ինսամֆի ծառայություն կամ դեղատոմսային դեղ ստանալու պահին: Պարտավոր եք միշտ Ձեզ հետ կրել բոլոր առողջապահական քարտերը: Հետևյալը L.A. Care-ի ճանաչողական քարտի օրինակ է, որը ցույց է տալիս, թե ինչպիսին կլինի Ձերը՝



Ձեր L.A. Care-ի ճանաչողական քարտը անդամագրվելուն հաջորդող մի քանի շաբաթից չստանալու, կամ Ձեր քարտը վսասված, կորած, կամ գողացված լինելու դեպքում, անմիջապես զանգահարեք **Անդամների սպասարկում:** L.A. Care-ը Ձեզ մի նոր քարտ կուղարկի: Չանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում**՝ **1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Որպես անդամ ներգրավվելու եղանակներ

L.A. Care-ը ցանկանում է լսել Ձեզանից: Ամեն տարի, L.A. Care-ը հանդիպումներ է ունենում քննարկելու համար, թե ինչն է հաջող ընթանում և L.A. Care-ը ինչպես կարող է բարելավել: Անդամները հրավիրվում են մասնակցելու: Եկեք հանդիպման:

L.A. Care-ի Տարածաշրջանային համայնքային խորհրդատու հանձնաժողովներ

L.A. Care-ը ունի տասնմեկ Տարածաշրջանային համայնքային խորհրդատու հանձնաժողով (Regional Community Advisory Committee, RCAC) Լոս Անջելես վարչաշրջանում (RCAC-ը արտասանվում է «ռաֆ»): Այս խումբը բաղկանում է L.A. Care-ի անդամներից, մատակարարներից և առողջական խնամքի պաշտպաններից: Նրանց նպատակն է իրենց համայնքների ձայնը հասցնել L.A. Care-ի Կառավարիչների խորհրդին, որը ուղղություն է տալիս առողջական խնամքի ծրագրերին՝ մեր անդամներին ծառայելու համար: Այս խմբին միանալը կամավոր է: Խումբը քննարկում է ինչպես բարելավել L.A. Care-ի քաղաքականությունները և պատասխանատու է հետևյալին՝

- Օգնել, որ L.A. Care-ը հասկանա Ձեր տարածքում բնակվող անձանց ազդող առողջական խնամքի հարցերը
- Գործել որպես աչքերն ու ականջները L.A. Care-ի՝ 11 RCAC շրջաններում, Լոս Անջելես վարչաշրջանի ողջ տարածքում
- Առողջապահական տեղեկություններ մատուցել Ձեր համայնքի անձանց

Եթե ցանկանում եք մաս կազմել այս խմբին, զանգահարեք **1-888-522-2732** համարով: Կարող եք նաև հավելյալ տեղեկություն գտնել առցանց՝ **lacare.org** կայքում:

L.A. Care-ի Կառավարիչների խորհրդի նիստեր

Կառավարիչների խորհուրդը սահմանում է L.A. Care-ի քաղաքականությունը: Որևէ անձ կարող է մասնակցել նիստերին: Կառավարիչների խորհրդի նիստերն անցկացվում են յուրաքանչյուր ամսվա առաջին հինգշաբթին, կ.հ. 2-ին: Կառավարիչների խորհրդի նիստերի վերաբերյալ հավելյալ տեղեկություն կարող եք գտնել **lacare.org** կայքում:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

2. Ձեր առողջապահական ծրագրի մասին

Առողջապահական ծրագրի ակնարկ

L.A. Care-ը առողջապահական ծրագիր է Medi-Cal ունեցողների համար Lnu Անշելես վարչաշրջանում: L.A. Care-ը Կալիֆորնիա նահանգի հետ գործելով, օգնում է, որ ստանաք Ձեզ անհրաժեշտ առողջական խնամքը:

Կարող եք L.A. Care-ի **Անդամների սպասարկման** ներկայացուցիչներից մեկի հետ խոսելով ավելին իմանալ առողջապահական ծրագրի և այն հօգուտ Ձեզ օգտագործելու կերպի մասին: Չանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Երբ է սկսվում և ավարտվում Ձեր ապահովագրությունը

L.A. Care-ին անդամագրվելուց հետո, Դուք պետք է ստանաք L.A. Care-ի անդամի ճանաչողական քարտ երկու շաբաթից: Խնդրում ենք այս քարտը ցույց տալ ամեն անգամ, որ որևէ ծառայություն եք ստանում L.A. Care-ի ներքո:

Ձեր ապահովագրությունն ուժի մեջ է մտնում առողջապահական ծրագրում անդամագրության լրացման հաջորդող ամսվա 1-ին օրը: Ստուգեք փոստով Ձեզ ուղարկված L.A. Care-ի անդամի ճանաչողական քարտը՝ ապահովագրության գործուն ամսաթվի համար:

Կարող եք որևէ ժամանակ խնդրել Ձեր L.A. Care-ի ապահովագրության դադարեցումը և ընտրել մի ուրիշ առողջապահական ծրագիր: Մի նոր ծրագիր ընտրելու օգնության համար զանգահարեք Առողջական խնամքի ընտրանքներ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077**) համարով: կամ այցելեք հետևյալ կայքը՝ **healthcareoptions.dhcs.ca.gov**: Կարող եք նաև խնդրել Ձեր Medi-Cal-ի դադարեցումը:

Երբեմն L.A. Care-ը այլևս չի կարողանա ծառայել Ձեզ: L.A. Care-ը պարտավոր է դադարեցնել Ձեր ապահովագրությունը, եթե՝

- Փոխադրվում եք վարչաշրջանից դուրս կամ գտնվում եք բանտում
- Այլևս Medi-Cal չունեք
- Որակավորվում եք որոշակի հրաժարման ծրագրերի
- Ձեզ անհրաժեշտ է գլխավոր օրգանի փոխապատվաստում (բացառությամբ երիկամների և եղջերաթաղանթի փոխապատվաստումներից)
- Ունեք ոչ-կառավարական կամ կառավարական հովանավորությամբ գործող ուրիշ առողջապահական ապահովագրություն



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում** **1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Ամերիկյան հնդկացիների առողջապահական ծառայություններ

Եթե Ամերիկյան հնդկացի եք, իրավունք ունեք առողջական խնամքի ծառայություններն ստանալու Զնդկացիների առողջապահական ծառայության հաստատություններում: Դուք նաև կարող եք շարունակել անդամակցությունը L.A. Care-ին կամ ապանդամագրվել դրանից՝ միաժամանակ առողջական խնամքի ծառայություններ ստանալով այս վայրերից: Ամերիկյան հնդկացիները որևէ ժամանակ և որևէ պատճառով իրավունք ունեն չանդամագրվել Medi-Cal-ի կառավարվող առողջական խնամքի ծրագրին կամ կարող են հեռանալ իրենց առողջապահական ծրագրերից՝ վերադառնալով սովորական (վճարովի սպասարկումով) Medi-Cal-ի:

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել Ամերիկյան հնդկացիների առողջապահական ծառայություններ **1-916-930-3927** համարով կամ այցելել Ամերիկյան հնդկացիների առողջապահական ծառայությունների կայքը՝ **ihhs.gov**:

Ինչպես է գործում Ձեր ծրագիրը

L.A. Care-ը DHCS-ի հետ պայմանագիր կնքած առողջապահական ծրագիր է: L.A. Care-ը կառավարվող խնամքի առողջապահական ծրագիր է: Կառավարվող խնամքի ծրագրերը առողջական խնամքի մատչելիությունը բարելավող և խնամքի որակը երաշխավորող՝ առողջական խնամքի աղբյուրների նյութապես արդյունավետ ծրագրեր են: L.A. Care-ը L.A. Care-ի սպասարկման տարածքում գործում է բժիշկների, հիվանդանոցների, դեղատների և ուրիշ առողջական խնամքի մատակարարների հետ, Ձեզ՝ անդամին առողջական խնամք մատուցելու համար:

L.A. Care-ի **Անդամների սպասարկման** ներկայացուցիչը Ձեզ կբացատրի, թե ինչպես է գործումը L.A. Care-ը, ինչպես կարող եք ստանալ Ձեզ անհրաժեշտ խնամքը, ինչպես ապահովել մատակարարի ժամադրությունները և ինչպես պարզել, թե արդյո՞ք որակավորվում եք փոխադրական ծառայությունների համար:

Ավելին իմանալու համար զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY **711**) համարով: Անդամների սպասարկման մասին տեղեկությունը կարող եք նաև գտնել առցանց հետևյալ կայքում՝ **lacare.org**:

Առողջապահական ծրագրեր փոխելը

Կարող եք L.A. Care-ից հեռանալ և ուրիշ առողջապահական ծրագրի միանալ որևէ ժամանակ: Մի նոր ծրագիր ընտրելու համար զանգահարեք Առողջական խնամքի ընտրանքներ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077**) համարով: Կարող եք զանգահարել կ.ա. 8:00-ից կ.հ. 6:00-ը, երկուշաբթիից ուրբաթ: Կամ այցելեք հետևյալ կայքը՝ **healthcareoptions.dhcs.ca.gov**: Առողջապահական ծրագրեր փոխելու կերպի մասին օգնության համար կարող եք նաև զանգահարել L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY **711**) համարով:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

L.A. Care-ից հեռանալու Ձեր խնդրանքն ընթացքի մեջ դնելու համար պահանջվում է առավելագույնը 45 օր: Իմանալու համար, որ Առողջական խնամքի ընտրանքները երբ է վավերացրել Ձեր խնդրանքը, զանգահարեք **1-800-430-4263** համարով: Եթե ցանկանում եք L.A. Care-ից ավելի շուտ հեռանալ, կարող եք Առողջական խնամքի ընտրանքներից խնդրել արագացված (արագ) ապանդամագրում: Եթե Ձեր խնդրանքի դրդապատճառը համապատասխանում է արագացված ապանդամագրման կանոններին, կստանաք մի նամակ, որը Ձեզ կասի, որ ապանդամագրվել եք:

Նպաստառուները, ովքեր կարող են արագացված ապանդամագրում խնդրել, ներառում են՝ առանց դրանցով սահմանափակվելու՝ ինամակալի խնամքի կամ Որդեգրության օգնության ծրագրերի ներքո ծառայություններ ստացող երեխաները. հատուկ առողջական խնամքի կարիք ունեցող անդամները, ներառած՝ առանց դրանցով սահմանափակվելու՝ գլխավոր օրգանի փոխապատվաստումները. և անդամները, ովքեր արդեն անդամագրվել են ուրիշ Medi-Cal, Medicare կամ առևտրական եղանակով կառավարվող խնամքի ծրագրի:

Կարող եք L.A. Care-ից հեռանալը խնդրել անձամբ Ձեր տեղական վարչաշրջանի առողջապահության և մարդու ծառայությունների գրասենյակում: Ձեր տեղական գրասենյակը գտեք հետևյալ կայքում՝ **dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/CountyOffices.aspx**: Կամ զանգահարեք Առողջական խնամքի ընտրանքներ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077**) համարով: Առողջապահական ծրագրեր փոխելու կերպի մասին օգնության համար կարող եք նաև զանգահարել L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Նոր վարչաշրջան փոխադրվող քոլեջական ուսանողներ

Եթե քոլեջ հաճախելու նպատակով Կալիֆորնիայում փոխադրվում եք մի նոր վարչաշրջան, L.A. Care-ը կապահովագրի արտակարգ իրավիճակի ծառայությունները Ձեր նոր վարչաշրջանում: Արտակարգ իրավիճակի ծառայությունները տրամադրելի են Medi-Cal-ի բոլոր անդամներին նահանգով մեկ, անկախ՝ բնակության վարչաշրջանից:

Եթե անդամագրվել եք Medi-Cal-ին և քոլեջ եք հաճախելու ուրիշ վարչաշրջանում, պարտավոր չեք Medi-Cal-ի համար դիմել այդ վարչաշրջանում: Medi-Cal-ի նոր դիմումի անհրաժեշտություն չի լինի եթե դեռևս 21 տարիքը չեք թևակոխել, միայն ժամանակավորապես գտնվում եք տնից դուրս և շարունակում եք ընտանիքում նկատվել որպես կախյալ հարկատու:

Երբ տնից ժամանակավորապես եք հեռանում քոլեջ հաճախելու համար, Ձեզ տրամադրելի է երկու ընտրանք՝ Դուք կարող եք՝

- Ձեր տեղական վարչաշրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակին իմացնել, որ ժամանակավորապես փոխադրվում եք քոլեջ հաճախելու համար և ներկայացնել նոր վարչաշրջանում Ձեր հասցեն: Վարչաշրջանը Նահանգի տվյալների շտեմարանում կթարմացնի գործի արձանագրությունները Ձեր նոր հասցեով և վարչաշրջանի կոդով: Եթե L.A. Care-ը չի գործում նոր վարչաշրջանում, պարտավոր կլինեք փոխել Ձեր առողջապահական ծրագիրը՝ ընտրելով նոր վարչաշրջանում առկա ընտրանքները: Հարցերի և նոր առողջապահական



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

2 | Ձեր առողջապահական ծրագրի մասին

Ծրագրին անդամագրման ուշացումը կանխարգելելու համար գանգահարեք Առողջական ինսամֆի ընտրանքներ **1-800-430-4263** (TTY **1-800-430-7077**) համարով:

ԿԱՍ

- Որոշեք չփոխել Ձեր առողջապահական ծրագիրը, երբ ժամանակավորապես փոխադրվում եք քոլեջ հաճախելու համար ուրիշ վարչաշրջանում: Նոր վարչաշրջանում Ձեզ մատչելի կլինեն միայն շտապ օգնության կայանի ծառայությունները: Սովորական կամ կանխարգելիչ առողջական ինսամֆի համար, պարտավոր եք օգտվել L.A. Care-ի մատակարարների սովորական ցանցից, որը գտնվում է Ձեր ընտանիքի բնակության վարչաշրջանում:

Ինսամֆի շարունակում

Եթե ներկայումս այցելում եք մատակարարների, որոնք մաս չեն կազմում L.A. Care-ի ցանցին, որոշ դեպքերում թերևս կարողանաք շարունակել այցելել նրանց մինչև 12 ամիս: Եթե Ձեր մատակարարները L.A. Care-ի ցանցին չմիանան մինչև 12 ամիսների ավարտը, պարտավոր կլինեք անցնել L.A. Care-ի ցանցի մատակարարների: Ձեր մատակարարներին կարող եք շարունակել այցելել երբ բոլոր հետևյալ պայմանները բավարարվում են՝

- L.A. Care-ը վճռում է, որ ունեք Ձեր արտացանցային մատակարարի հետ առկա հարաբերություն: Առկա հարաբերությունը նշանակում է, որ արտացանցային PCP-ին կամ մասնագետին այցելել եք առնվազն մի անգամ L.A. Care-ում Ձեր սկզբնական անդամագրության ամսաթվին նախորդած 12 ամիսների ընթացքում՝ ոչ-արտակարգ իրավիճակի այցի համար. և
- Ձեր արտացանցային մատակարարը պատրաստ է ընդունել L.A. Care-ի պայմանագրային դրույքներից կամ Medi-Cal-ի վճարովի ծառայության (Fee For Service, FFS) դրույքներից որը որ ավելի բարձր է. և
- Ձեր արտացանցային մատակարարը լրացնում է L.A. Care-ի կիրառելի մասնագիտական չափանիշները և ինսամֆի որակի ոչ մի ապահորակավորող հարց չունի. և
- Ձեր արտացանցային մատակարարը Կալիֆորնիա նահանգի ծրագրի վավերացված մատակարար է. և
- Մատակարարը L.A. Care-ին ներկայացնում է բուժման վերաբերող կարևոր տեղեկությունները:

Անդամները, նրանց լիազորված ներկայացուցիչները կամ մատակարարները կարող են ինսամֆի շարունակման ուղղակի ինդրանք ներկայացնել L.A. Care-ին գրավոր կամ հեռախոսով, L.A. Care-ի **Անդամների սպասարկում** գանգահարելով **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Անդամը որևէ ժամանակ կարող է մատակարարներին փոխելով անցնել L.A. Care-ի ցանցում գտնվող մատակարարի:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում** **1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ գանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

L.A. Care-ից հեռացող մատակարարներ

Եթե Ձեր մատակարարը դադարեցնի իր գործակցությունը L.A. Care-ի հետ, թերևս կարողանաք շարունակել ծառայություններն ստանալ այդ մատակարարից: Սա խնամքի շարունակման մի ուրիշ կերպ է: L.A. Care-ը խնամքի շարունակման ծառայություններ է մատուցում հետևյալի համար՝

- Սուր վիճակներ՝ Բժշկական մի այնպիսի վիճակ, որն ընդգրկում է ախտանիշների հանկարծահաս առաջացումը մի հիվանդության, փաստվածքի կամ ուրիշ բժշկական խնդրի պատճառով, որը պահանջում է շուտափույթ բժշկական ուշադրություն և ունի սահմանափակ տևողություն: Խնամքի շարունակումը մատուցվում է սուր վիճակի տևողությանը:
- Քրոնիկ վիճակներ՝ Բժշկական մի վիճակ, սովորաբար դանդաղ զարգացման և երկարատև բնույթի, և տարբեր՝ լուրջ քրոնիկ վիճակից, որը պահանջում է հարատև խնամք: Խնամքի շարունակումը մատուցվում է քրոնիկ վիճակի տևողությանը, բայց չպետք է գերազանցի 90 օրը՝ պայմանագրի դադարեցման ամսաթվից
- Լուրջ քրոնիկ վիճակներ՝ Ախտի, հիվանդության կամ ուրիշ բժշկական վիճակի հետևանքով առաջացած բժշկական վիճակ կամ բժշկական խանգարում, որն ունի լուրջ բնույթ և հարատևում է առանց լրիվ առողջանալու կամ վատանում է երկար ժամանակի ընթացքում կամ պահանջում է շարունակական բուժում՝ պահպանելու համար նվազման թափը կամ արգելելու համար վատթարացումը: Ծառայությունների ամբողջացումը կմատուցվի բուժումն ամբողջացնելու և մի ուրիշ մատակարարի անվտանգ փոխանցումը դասավորելու համար անհրաժեշտ ժամանակահատվածում, ըստ L.A. Care-ի հայեցողության, խորհրդակցելով անդամի և ցանցին ոչ-մասնակից մատակարարի հետ: Խնամքի շարունակումը մատուցվում է քրոնիկ վիճակի տևողությանը, բայց չպետք է գերազանցի 12 ամիսը՝ պայմանագրի դադարեցման ամսաթվից կամ 12 ամիսը՝ ապահովագրության գործուն ամսաթվից
- Հղիություն՝ Խնամքի շարունակումը մատուցվում է հղիության երեք եռամսյակների ընթացքում (այսինքն՝ հղիության ողջ տևողությանը) և անմիջական հետ-ծննդաբերական շրջանում
- Մահացու հիվանդություն՝ Անհատի բժշկական վիճակը, ինչպես այն վկայվել է բժշկի կողմից, որը առաջացնում է մեկ տարուց ոչ ավելի ապրելու ակտիվորոշում, եթե հիվանդությունը շարունակի իր բնական ընթացքը: Ապահովագրված ծառայությունների ամբողջացումը կմատուցվի մահացու հիվանդության ողջ տևողությանը
- Նորածին երեխայի խնամք՝ Ծննդից մինչև 36 ամսական դառնալը, խնամքի շարունակումը մատուցվում է, բայց չպետք է գերազանցի 12 ամիսը՝ պայմանագրի դադարեցման ամսաթվից կամ 12 ամիսը՝ նոր անդամագրված անդամի ապահովագրության գործուն ամսաթվից
- Վիրահատության կամ Ուրիշ գործողության կատարումը՝ Լիազորված ծրագրի կողմից՝ փաստագրված բուժման ընթացքում, և հանձնարարված և փաստագրված մատակարարի կողմից՝ իրականացվելու համար պայմանագրի դադարեցման ամսաթվին հաջորդող 180 օրացուցային օրվա ընթացքում
- Մայրական հոգեկան առողջություն՝ Անդամները, ովքեր ենթակա են մայրական հոգեկան առողջության վիճակի կամ ունեն այն, ինչպես նաև ունեն իրենց բժշկից կամ թերապևտից մի կշում, ապահովագրված ծառայությունները կարող են լրացնել առավելագույնը 12 ամսով



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

2 | Ձեր առողջապահական ծրագրի մասին

- Յոգեկան առողջության սուր վիճակ՝ Յոգեկան առողջության այնպիսի վիճակ, որը ընդգրկում է առաջացումը հանկարծահաս ախտանիշների, որոնք շուտափույթ ուշադրություն են պահանջում հոգեկան առողջության նկատմամբ և ունեն սահմանափակ տևողություն: 90-օրյա անցումային ժամանակամիջոց կամ հիվանդության սուր ժամանակահատվածի ընթացքում, որը որ ավելի կարճ լինի, շարունակելու համար բուժման ընթացքը ոչ-մասնակից հոգեկան առողջության մասնագետի կողմից
- Յոգեկան առողջության լուրջ քրոնիկ վիճակ՝ Յոգեկան առողջության այնպիսի վիճակ, որն ունի լուրջ բնույթ և պահանջում է շարունակական բուժում՝ պահպանելու համար նվազման թափը կամ արգելելու համար վատթարացումը: 90-օրյա անցումային ժամանակամիջոց կամ հիվանդության սուր ժամանակահատվածի ընթացքում, որը որ ավելի կարճ լինի, շարունակելու համար բուժման ընթացքը ոչ-մասնակից հոգեկան առողջության մասնագետի կողմից: Ծառայությունների ամբողջացումը կմատուցվի բուժումն ամբողջացնելու և մի ուրիշ մատակարարի անվտանգ փոխանցումը դասավորելու համար անհրաժեշտ ժամանակահատվածում, ըստ L.A. Care-ի հայեցողության, խորհրդակցելով անդամի և ցանցին ոչ-մասնակից մատակարարի հետ

L.A. Care-ը ինսամքի շարունակման ծառայություններ չի մատուցում, եթե՝

- Մատակարարը չի կամենում շարունակել անդամի բուժումը կամ ընդունել L.A. Care-ի վճարման կամ այլ ընդհանուր դրույթները
- Անդամի համար նշանակվել է մատակարարների խումբ և ոչ թե անհատ մատակարար, և նրան անընդհատ մատչելի են մատակարարները պայմանագիր կնքած խմբում
- L.A. Care-ը պայմանագիրը դադարեցրել է հիմնվելով պրոֆեսիոնալ վերանայման գործողության վրա, ինչպես այն սահմանվել է 1986 թ. Առողջական ինսամքի որակի բարելավման օրենքի (Health Care Quality Improvement Act) (բարեփոխման համաձայն), 42 U.S.C. §11101 և այլ հոդվածներում, կամ՝ հիմնվելով բժշկական ուղղիչ դրոպատոճառի կամ պատճառի վրա, ինչպես այն սահմանվել է Կալիֆորնիայի գործարարական և զբաղմունքային օրենսգրքի (California Business and Professions Code) 805 հոդվածով, կամ՝ խարդախության կամ հանցագործ գործունեության համար
- Ծառայությունները չեն ապահովագրվում Medi-Cal-ի կողմից
- Ինսամքի շարունակման ինդրանքը վերաբերում է Տևական օգտագործման բժշկական սարքի, փոխադրության, ուրիշ օժանդակ ծառայությունների, կամ ամբողջական ապահովագրությունից առանձնացված ծառայությունների

Ինսամքի շարունակման և իրավասության առանձնահատկությունների վերաբերյալ ավելին իմանալու համար զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Ծախքեր

Անդամի ծախքեր

L.A. Care-ը ծառայում է անձանց, ովքեր որակավորվում են Medi-Cal-ի համար: L.A. Care-ի անդամները պարտավոր **չեն** վճարել ապահովագրված ծառայությունների համար: Դուք ապահովագներ և հանելիներ չէք ունենա: Ապահովագրված ծառայությունների ցանկի համար տեսեք «Նպաստներ և ծառայություններ» բաժինը:

Ծախսաբաժնով անդամների համար

Թերևս ծախսաբաժին վճարեք ամեն ամիս: Ձեր ծախսաբաժնի գումարը կախված է Ձեր եկամուտից և միջոցներից: Յուրաքանչյուր ամիս Դուք կվճարեք Ձեր սեփական բժշկական հաշիվները մինչև Ձեր վճարած գումարը հավասարվի Ձեր ծախսաբաժնին: Այնուհետև, Ձեր ինսամքը կհոգացվի L.A. Care-ի կողմից այդ ամսվա համար: Դուք L.A. Care-ի կողմից չէք ապահովագրվի մինչև վճարեք Ձեր ողջ ծախսաբաժինը ամսվա համար: Տվյալ ամսում Ձեր ծախսաբաժինը բավարարելուց հետո, կարող եք գնալ L.A. Care-ի որևէ բժշկի: Եթե ծախսաբաժնով անդամ եք, պարտավոր չէք PCP ընտրել:

Ինչպես է վճարվում մատակարարը

L.A. Care-ը մատակարարներին վճարում է հետևյալ եղանակներով՝

- Գլխահարկային վճարումներ
 - L.A. Care-ը մի շարք մատակարարների վճարում է յուրաքանչյուր ամիս մի սահմանված գումար L.A. Care-ի յուրաքանչյուր անդամի համար: Սա կոչվում է գլխահարկային վճարում: L.A. Care-ը և մատակարարները համագործակցաբար որոշում են վճարման գումարը:
- Վճարովի ծառայության վճարումներ
 - Մի շարք մատակարարներ L.A. Care-ի անդամներին ինսամք մատուցելուց հետո L.A. Care-ին հաշիվ են ուղարկում իրենց մատուցած ծառայությունների համար: Սա կոչվում է վճարովի ծառայության վճարում: L.A. Care-ը և մատակարարները համագործակցաբար որոշում են յուրաքանչյուր ծառայության արժեքը:

Ավելին իմանալու համար, թե ինչպես է L.A. Care-ը վճարում մատակարարներին, զանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով: Հավելյալ տեղեկության համար մատակարարները պարտավոր են զանգահարել L.A. Care **1-866-522-2736** համարով:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

2 | Ձեր առողջապահական ծրագրի մասին

Մատակարարներին խթանող ծրագրեր՝

L.A. Care-ը ունի մատակարարներին խթանող ծրագրեր՝ L.A. Care-ի մատակարարների մոտ Ձեր խնամքը և փորձառությունը բարելավելու համար: Այս ծրագրերն օգնում են բարելավել՝

- Խնամքի որակը
- Խնամքի և ծառայությունների մատչելիությունն ու առկայությունը
- Մատուցվող բուժումները
- Անդամի բավարարությունը

Այս ծրագրերի վերաբերյալ ավելին իմանալու համար զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

L.A. Care-ից հաշվի վճարում խնդրելը

Ապահովագրված ծառայության համար հաշիվ ստանալու դեպքում անմիջապես զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Եթե վճարեք մի ծառայության համար, որը Ձեր կարծիքով L.A. Care-ը պետք է ապահովագրի, կարող եք պահանջ ներկայացնել: Չանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով L.A. Care-ից խնդրելու, որ վերանայի Ձեր պահանջը, որոշելու համար, որ կարող եք փող հետ ստանալ:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

3. Ինչպես ինամք ստանալ

Առողջական ինամքի ծառայություններ ստանալը

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ ՅԵՏԵՎՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍՉԻ ԻՄԱՆԱՔ ՈՒՄԻՑ ԿԱՍ ՈՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԽՄԲԻՑ ԿԱՐԵԼԻ Է ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԱՄՔ ՍՏԱՆԱԼ:

Առողջական ինամքի ծառայությունների ստացումը կարող է սկսել Ձեր ապահովագրության գործուն ամսաթվից: Միշտ Ձեզ հետ կրեք Ձեր L.A. Care-ի ճանաչողական քարտն ու Medi-Cal-ի Նպաստների ճանաչողական քարտը (Benefits Identification Card, BIC): Երբեք թույլ մի տվեք, որ ուրիշ անձ օգտագործի Ձեր L.A. Care-ի ճանաչողական քարտը կամ BIC քարտը:

Նոր անդամները պարտավոր են Առաջնային ինամքի մատակարար (PCP) ընտրել L.A. Care-ի ցանցում: L.A. Care-ի ցանցը կազմված է մի խումբ բժիշկներից, հիվանդանոցներից և ուրիշ մատակարարներից, որոնք գործում են L.A. Care-ի հետ: Պարտավոր եք PCP ընտրել L.A. Care-ի անդամ դառնալուց հետո 30 օրվա ընթացքում: Եթե Դուք չընտրեք մի PCP, L.A. Care-ը կընտրի այդպիսին Ձեզ համար:

L.A. Care-ում կարող եք նույն PCP-ը կամ տարբեր PCP-ներ ընտրել ընտանիքի բոլոր անդամների համար:

Եթե ունեք մի բժիշկ, որին ցանկանում եք պահել, կամ ուզում եք գտնել մի նոր PCP, կարող եք որոնել Մատակարարների հասցեագրքում: Այն պարունակում է ցանկը L.A. Care-ի ցանցում գտնվող PCP-ների: Մատակարարների հասցեագրքը ունի PCP-ի Ձեր ընտրության օգնող այլ տեղեկություններ: Եթե կարիքը ունեք Մատակարարների հասցեագրքի, զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով: Մատակարարների հասցեագրքը կարող եք նաև գտնել L.A. Care-ի կայքում՝ **lacare.org**:

Եթե չեք կարող Ձեզ անհրաժեշտ ինամքը ստանալ L.A. Care-ի ցանցում գտնվող մասնակից մատակարարից, Ձեր PCP-ը պարտավոր է L.A. Care-ից վավերացում ինդրել, որպեսզի Ձեզ ուղարկի արտացանցային մատակարարի:

Կարդացեք այս գլխի մտացած մասը, ավելին իմանալու համար PCP-ների, Մատակարարների հասցեագրքի և մատակարարների ցանցի մասին:

Առողջության սկզբնական գնահատում (IHA)

L.A. Care-ը հանձնարարում է, որ Ձեր նոր PCP-ին այցելեք որպես նոր անդամ առաջին 120 օրերի ընթացքում, առողջության սկզբնական գնահատման (Initial Health Assessment, IHA) համար: IHA-ը նպատակադրում է օգնել, որ Ձեր PCP-ը ճանաչի Ձեր առողջական ինամքի պատմությունն ու կարիքները: Ձեր PCP-ը կարող է Ձեզ մի շարք հարցեր տալ Ձեր առողջական պատմության մասին



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

3 | Ինչպես ինամբ ստանալ

կամ ինդիբեյ, որ լրացնեք մի հարցաթերթիկ: Ձեր PCP-ը նաև Ձեզ կհայտնի առողջապահական խորհրդատվության և դասընթացների մասին, որոնք կարող են օգնել Ձեզ:

Երբ զանգահարեք Ձեր IHA ժամադրությունը դասավորելու նպատակով, հեռախոսին պատասխանող անձին հայտնեք, որ L.A. Care-ի անդամ եք: Տվեք Ձեր L.A. Care-ի ճանաչողական համարը:

Ձեր BIC քարտը և Ձեր L.A. Care-ի ճանաչողական քարտը տարեք Ձեր ժամադրություններին: Լավ կլինի, որ Ձեր այցի համար Ձեզ հետ տանեք Ձեր դեղերի ցանկը և հարցերը: Պատրաստվեք Ձեր PCP-ի հետ քննարկել Ձեր առողջական ինամբի կարիքներն ու մտահոգությունները:

Անպայման զանգահարեք Ձեր PCP-ի գրասենյակ, եթե պիտի ուշանաք կամ չեք կարող գնալ Ձեր ժամադրության:

Սովորական ինամբ

Սովորական ինամբը կանոնավոր առողջական ինամբ է: Այն ընդգրկում է կանխարգելիչ ինամբը, որը կոչվում է քաջառողջության կամ լավ ինամբ: Այն օգնում է, որ մնաք առողջ և օգնում է, որ խուսափեք հիվանդանալուց: Կանխարգելիչ ինամբն ընդգրկում է սովորական ստուգումները և առողջապահական կրթությունն ու խորհրդատվությունը: Ի հավելումս կանխարգելիչ ինամբի, սովորական ինամբը նաև ընդգրկում է ինամբը՝ երբ հիվանդ եք: L.A. Care-ը ապահովագրում է Ձեր PCP-ի մատուցած ինամբը:

Ձեր PCP-ը կանի հետևյալը՝

- Ձեզ կտա Ձեր ողջ սովորական ինամբը, ներառյալ՝ սովորական ստուգումները, սրսկումները, բուժումը, դեղատոմսերը և բժշկական խորհուրդ
- Կպահի Ձեր առողջական արձանագրությունները
- Ձեզ կուղղորդի (կուղարկի) մասնագետների անհրաժեշտության դեպքում
- Կպատվիրի ռենտգեն պատկերումները, կրծքագիրները կամ լաբորատորային անալիզները, եթե կարիքն ունեք դրանց

Սովորական ինամբի կարիքի դեպքում, Ձեր PCP-ին կզանգահարեք ժամադրության համար: Անպայման զանգահարեք Ձեր PCP-ին բժշկական ինամբ ստանալուց առաջ, բացառությամբ արտակարգ իրավիճակի: Արտակարգ իրավիճակի համար զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա շտապ օգնության կայանը:

Ձեր ծրագրի ապահովագրած և չապահովագրած առողջական ինամբի և ծառայությունների մասին ավելին իմանալու համար, կարդացեք այս տեղեկագրի 4-րդ Գլուխը:

Հրատապ ինամբ

Հրատապ ինամբը արտակարգ իրավիճակի կամ կյանքին սպառնացող բնույթի վիճակի համար է: Այն ծառայությունների համար է, որոնք Ձեզ անհրաժեշտ են հանկարծահաս հիվանդությունից, վնասվածքից կամ դեռևս Ձեր ունեցած վիճակի բարդացումից Ձեր առողջության հասնելիք լուրջ



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

վասի կանխարգելման համար: Հրատապ ինամբի ժամադրությունները ինամբ են պահանջում 48 ժամվա ընթացքում: Եթե գտնվում եք L.A. Care-ի սպասարկման տարածքից դուրս, հնարավոր է, որ հրատապ ինամբի ծառայություններն ապահովագրված լինեն: Հրատապ ինամբի կարիքներ կարող են լինել հարբուխը կամ կոկորդի ցավը, տենդը, ականջի ցավը, գերծգված մկանը կամ մայրության ծառայությունները:

Հրատապ ինամբի համար զանգահարեք Ձեր PCP-ին: Եթե չեք կարող հասնել Ձեր PCP-ին, զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Կամ կարող եք զանգահարել **Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ** օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը, **1-800-249-3619 (TTY 711)** համարով: Կարող եք նաև առցանց անվճար գրուցել մի բուժքրոջ հետ: Խնդրում ենք այցելել **lacare.org** կայքը և մուտք գործել անդամի կայքամուտք՝ օգտվելու համար բուժքրոջ հետ գրուցելու հնարավորությունից:

Եթե Ձեզ հրատապ ինամբ է հարկավոր տարածքից դուրս, գնացեք մոտակա հրատապ ինամբի հաստատությունը: Ձեզ անհրաժեշտ չի լինի նախավավերացում (նախօրոք լիազորում): Եթե Ձեզ հոգեկան առողջության հրատապ ինամբ է հարկավոր, զանգահարեք վարչաշրջանի Հոգեկան առողջության ծրագիր անվճար **1-800-854-7771** համարով, որը տրամադրելի է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարները առցանց գտնելու համար այցելեք հետևյալ կայքը՝ **dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx**: Լոս Անջելես վարչաշրջանի Հոգեկան առողջության բաժնի (Department of Mental Health) համար այցելեք հետևյալ կայքը՝ **dmh.lacounty.gov**:

Շտապ օգնության ինամբ

Շտապ օգնության համար զանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենից մոտիկ շտապ օգնության կայանը (Emergency Room, ER): Շտապ օգնության համար Ձեզ L.A. Care-ից նախավավերացում (նախօրոք լիազորում) անհրաժեշտ **չի** լինի:

Շտապ օգնությունը կյանքին սպառնացող բժշկական վիճակների համար է: Այս ինամբը սահմանված է հիվանդության կամ վնասվածքի, որի համար առողջապահության և բժշկության մասին միջին գիտելիքների տեր տրամաբանող պարզ անձը (ոչ առողջական ինամբի մասնագետը) կարող է սպասել, որ ինամբը անմիջապես չստանալու դեպքում, իր առողջությունը (կամ իր ջնկված երեխայի առողջությունը) կարող է վտանգվել, կամ մարմնի մի գործառույթ, մարմնի օրգան կամ մարմնի մաս կարող է լրջորեն վնասվել: Օրինակներն ընդգրկում են՝

- Ակտիվ երկունք
- Կոտրված ոսկոր
- Սաստիկ ցավ, հատկապես կրծքավանդակում
- Սաստիկ այրվածք
- Չափից մեծ դեղաչափ



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

3 | Ինչպես խնամք ստանալ

- Ուշաթափություն
- Սաստիկ արյունահոսություն
- Հոգեբուժական արտակարգ իրավիճակի վիճակ

ER մի գնացեք սովորական խնամքի համար: Սովորական խնամքը պետք է ստանաք Ձեր PCP-ից, ով լավագույնս ճանաչում է Ձեզ: Եթե կասկածներ ունեք արտակարգ իրավիճակի վերաբերյալ, զանգահարեք Ձեր PCP-ին: Կարող եք նաև զանգահարել L.A. Care-ի **Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ 1-800-249-3619** (TTY 711) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը:

Եթե շտապ օգնության կարիք ունեք տնից հեռու գտնվելիս, գնացեք մոտակա շտապ օգնության կայանը (ER), նույնիսկ եթե այն չի գտնվում L.A. Care-ի ցանցում: ER գնալու դեպքում նրանցից խնդրեք զանգահարել L.A. Care: Դուք կամ Ձեզ ընդունած հիվանդանոցը պարտավոր եք L.A. Care զանգահարել շտապ օգնության ստացման հաջորդող 24 ժամվա ընթացքում: Եթե ճանապարհորդվում եք ԱՄՆ-ից դուրս, բացի Կանադայից կամ Մեքսիկայից, և Ձեզ շտապ օգնություն է հարկավոր, L.A. Care-ը **չի** ապահովագրի Ձեր խնամքը:

Արտակարգ իրավիճակի փոխադրության կարիքի դեպքում զանգահարեք **911** համարով: Պարտավոր չեք նախ Ձեր PCP-ին կամ L.A. Care-ին դիմել ER գնալուց առաջ:

Եթե Ձեր արտակարգ իրավիճակից հետո խնամքի կարիք ունեք արտացանցային հիվանդանոցում (հետ-կայունացման խնամք), հիվանդանոցը կզանգահարի L.A. Care:

Հիշեք՝ Մի զանգահարեք **911** համարով, եթե չկա արտակարգ իրավիճակ: Շտապ օգնությունն ստացեք միայն արտակարգ իրավիճակի, ոչ թե սովորական խնամքի կամ հարբուխի կամ կոկորդի ցավի նման երկրորդական հիվանդությունների համար: Եթե կա արտակարգ իրավիճակ, զանգահարեք **911** համարով կամ գնացեք մոտակա շտապ օգնության կայանը:

Զգայուն խնամք

Դեռահասների համաձայնությամբ ծառայություններ

Եթե չեք դարձել 18 տարեկան, կարող եք բժշկի գնալ առանց Ձեր ծնողների կամ խնամատարի համաձայնության, հետևյալ տեսակի խնամքի համար՝

- Ամբուլատոր հոգեկան առողջություն (միայն 12 տարեկան կամ ավելի տարեց դեռահասներ) հետևյալի համար՝
 - Սեռական կամ ֆիզիկական չարաշահում
 - Երբ Դուք Ձեզ կամ ուրիշներին կարող եք վսաս հասցնել
- Հղիություն
- Ընտանիքի ծրագրում/ծննդյան հսկողություն (բացի ամլացումից)



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):** L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

- Սեռական ոտնձգություն
- ՄԻԱՎ/ՁԻԱՅԻ կանխարգելում/ստուգում/բուժում (միայն 12 տարեկան կամ ավելի տարեց դեռահասներ)
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելում/ստուգում/բուժում (միայն 12 տարեկան կամ ավելի տարեց դեռահասներ)
- Թմրանյութերի և ալկոհոլի չարաշահման բուժում (միայն 12 տարեկան կամ ավելի տարեց դեռահասներ)

Պարտադիր չէ, որ բժիշկը կամ կլինիկան մաս կազմի L.A. Care-ի ցանցին և Ձեզ ուղեգիր անհրաժեշտ չի լինի Ձեր PCP-ից այս ծառայություններն ստանալու համար: Այս ծառայությունները մատուցող բժշկի կամ կլինիկա գտնելու կամ այս ծառայություններն ստանալու նպատակով օգնության համար կարող եք զանգահարել L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Կարող եք նաև զանգահարել **Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ 1-800-249-3619 (TTY 711)** համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը:

Դեռահասները կարող են իրենց առողջական մտահոգությունների մասին ներկայացուցչի հետ գաղտնի զրուցել զանգահարելով **Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ 1-800-249-3619 (TTY 711)** համարով:

Չափահասի զգայուն ծառայություններ

Որպես չափահաս, թերևս չցանկանաք Ձեր PCP-ին այցելել զգայուն կամ գաղտնի ինամբի համար: Այդպիսի դեպքում, կարող եք ինամբի հետևյալ տեսակների համար ընտրել որևէ բժշկի կամ կլինիկա՝

- Ընտանիքի ծրագրում
- ՄԻԱՎ/ՁԻԱՅԻ ստուգում
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ

Պարտադիր չէ, որ բժիշկը կամ կլինիկան մաս կազմի L.A. Care-ի ցանցին: Պարտադիր չէ, որ Ձեր PCP-ը Ձեզ ուղեգիր տա այս տեսակի ծառայությունների համար: Այս ծառայությունները մատուցող բժշկի կամ կլինիկա գտնելու նպատակով օգնության համար կարող եք զանգահարել L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Կարող եք նաև զանգահարել **Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ 1-800-249-3619 (TTY 711)** համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Նախօրոք հրահանգներ

Առողջության նախօրոք հրահանգը օրինական ձևաթուղթ է: Նրանում կարող եք թվարկել, թե ինչպիսի առողջական խնամք եք ցանկանում՝ հետագայում խոսելու կամ որոշումներ կայացնելու անկարողության դեպքում: Կարող եք թվարկել, թե ինչպիսի խնամք **չեք** ցանկանում: Կարող եք նշանակել մեկին, ինչպես՝ կողակցին, որպեսզի Ձեր առողջական խնամքի համար որոշումներ կայացնի, երբ Դուք չեք կարող:

Նախօրոք հրահանգի ձևաթուղթը կարող եք ստանալ դեղատներից, հիվանդանոցներից, իրավաբանական գրասենյակներից և բժիշկների գրասենյակներից: Թերևս հարկադրվեք վճարել ձևաթղթի համար: Կարող եք նաև անվճար ձևաթուղթ գտնել առցանց և ներբեռնել այն: Կարող եք Ձեր ընտանիքի անդամից, PCP-ից, կամ վստահելի անձից խնդրել, որ Ձեզ օգնի ձևաթուղթը լրացնելու համար:

Իրավունք ունեք պահանջելու, որ Ձեր նախօրոք հրահանգը տեղադրեն Ձեր բժշկական արձանագրություններում: Իրավունք ունեք Ձեր նախօրոք հրահանգը փոխելու կամ ջնջելու որևէ ժամանակ:

Իրավունք ունեք իմանալու նախօրոք հրահանգի օրենքների փոփոխության մասին: L.A. Care-ը Ձեզ կտեղեկացնի նահանգային օրենքի փոփոխությունների մասին փոփոխությանը հաջորդող 90 օրվա ընթացքում:

Որտեղ ստանալ խնամքը

Ձեր խնամքը հիմնականում կստանաք Ձեր PCP-ից: Ձեր PCP-ը Ձեզ կտա Ձեր ողջ սովորական կանխարգելիչ (բաջառողջության) խնամքը: Ձեր PCP-ին խնամքի համար կայցելեք նույնպես երբ հիվանդ եք: Անպայման զանգահարեք Ձեր PCP-ին արտակարգ իրավիճակ չներկայացնող բժշկական խնամք ստանալուց առաջ: Ձեր PCP-ը հարկ եղած դեպքում Ձեզ կուղղորդի (կուղարկի) մասնագետի մոտ:

Ձեր առողջական հարցերի կապակցությամբ օգնություն ստանալու համար կարող եք նաև զանգահարել L.A. Care-ի **Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ 1-800-249-3619 (TTY 711)** համարով:

Հրատապ խնամքի կարիքի դեպքում զանգահարեք Ձեր PCP-ին: Հրատապ խնամքը այնպիսի խնամք է, որի կարիքն ունեք 48 ժամվա ընթացքում, բայց որը արտակարգ իրավիճակ չէ: Այն ընդգրկում է խնամքը հարբուխի, կոկորդի ցավի, տենդի, ականջի ցավի կամ գերձգված մկանի նման բաների:

Արտակարգ իրավիճակի համար զանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենից մոտիկ շտապ օգնության կայանը:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Բարոյական առարկություն

Մի շարք մատակարարներ բարոյական առարկություն ունեն մի շարք ծառայությունների նկատմամբ: Սա նշանակում է, որ նրանք իրավունք ունեն **չմատուցելու** մի շարք ապահովագրված ծառայություններ, եթե բարոյապես համաձայն չեն: Եթե Ձեր մատակարարն ունի բարոյական առարկություն, նա Ձեզ կօգնի անհրաժեշտ ծառայությունների համար գտնել մի ուրիշ մատակարար: L.A. Care-ը ևս կարող է Ձեզ հետ գործել մատակարար գտնելու համար:

Մի շարք հիվանդանոցներ և այլ մատակարարներ չեն մատուցում ստորև նշված ծառայություններից մեկը կամ մի քանիսը: Ձեզ կամ Ձեր ընտանիքի անդամին թերևս անհրաժեշտ եղող այս ծառայությունները թերևս ապահովագրվում են Ձեր ծրագրի պայմանագրի ներքո՝

- Ընտանիքի ծրագրում և հակաբեղմնավորման ծառայություններ, ներառյալ՝ շտապ հակաբեղմնավորումը
- Ամլացումը, ներառյալ՝ երկունքի և ծննդաբերության ժամանակ արգանդափողի կապումը
- Անպտղության բուժումները
- Վիժումը

Անդամագրվելուց առաջ հավելյալ տեղեկություն պետք է ձեռք բերեք: Չանգահարեք Ձեր ցանկացած նոր բժշկին, բժշկական խմբին, անկախ կիրառության ընկերություն կամ կլինիկա: Կամ զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով, որպեսզի անպայման կարողանաք ստանալ Ձեզ անհրաժեշտ առողջական խնամքի ծառայությունները:

Մատակարարների հասցեագիրք

L.A. Care-ի Մատակարարների հասցեագիրքը L.A. Care-ի ցանցին մասնակցող մատակարարների ցանկն է: Ցանցը բաղկանում է մի խումբ մատակարարներից, որոնք գործում են L.A. Care-ի հետ:

L.A. Care-ի Մատակարարների հասցեագիրքը ներկայացնում է ցանկը հիվանդանոցների, դեղատների, PCP-ների, մասնագետների, առաջնային խնամք տրամադրող բուժքույրերի, բուժքույր-մանկաբարձների, օգնական բժիշկների, ընտանեկան ծրագրման մատակարարների, Դաշնային որակավորման առողջապահական կենտրոնների (Federally Qualified Health Center, FQHC), ամբուլատոր հոգեկան առողջության մատակարարների, երկարաժամկետ ծառայությունների և աջակցությունների (Long-Term Services and Supports, LTSS), Անկախ ծննդաբերության կենտրոնների (Freestanding Birth Center, FBC), Գյուղական առողջապահական կլինիկաների (Rural Health Clinic, RHC) և հրատապ խնամքի ու մանրածախ առողջապահական կենտրոնների:

Մատակարարների հասցեագիրքը պարունակում է L.A. Care-ի ցանցի մատակարարների անուններ, հասցեներ, հեռախոսահամարներ, աշխատանքային ժամեր և խոսակցական լեզուներ: Այն նշում է, որ արդյոք մատակարարն ընդունում է նոր հիվանդների: Այն նաև նշում է շենքի ֆիզիկական մատչելիության մակարդակը, ինչպես՝ կայանատեղ, թեքահարթակներ, կառչածողերով աստիճաններ և լայն բացվող դռներով ու կառչածողերով զուգարաններ: Ցանցի մատակարարի վերաբերյալ ավելին իմանալու համար զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

3 | Ինչպես խնամք ստանալ

Առցանց Մատակարարների հասցեագիրքը կարող եք գտնել հետևյալ կայքում՝ **lacare.org**:

Եթե կարիքը ունեք տպագիր Մատակարարների հասցեագրքի, զանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Մատակարարների ցանց

Մատակարարների ցանցը ներկայացնում է մի խումբ բժիշկներ, հիվանդանոցներ և ուրիշ մատակարարներ, որոնք գործում են L.A. Care-ի հետ: Դուք Ձեր ապահովագրված ծառայությունները կստանաք L.A. Care-ի ցանցի միջոցով:

Եթե ցանցի Ձեր մատակարարը, ներառյալ՝ PCP-ը, հիվանդանոցը կամ ուրիշ մատակարար, ունի բարոյական առարկություն Ձեզ ապահովագրված ծառայություն մատուցելու կապակցությամբ, ինչպես՝ ընտանիքի ծրագրումը կամ վիժումը, զանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով: Հավելյալ տեղեկության համար անցեք այս տեղեկագրքի բարոյական առարկությունների բաժին:

Եթե Ձեր մատակարարն ունի բարոյական առարկություն, նա Ձեզ կօգնի գտնել մի ուրիշ մատակարար, ով Ձեզ կտա Ձեզ անհրաժեշտ ծառայությունները: L.A. Care-ը ևս կարող է Ձեզ հետ գործել մատակարար գտնելու համար:

Ներցանցային

Ձեր առողջական խնամքի կարիքների համար կօգտվեք L.A. Care-ի ներցանցային մատակարարներից: Ձեր կանխարգելիչ և սովորական խնամքը կստանաք Ձեր PCP-ից: Դուք նաև կօգտվեք L.A. Care-ի ներցանցային մասնագետներից, հիվանդանոցներից և ուրիշ մատակարարներից:

Ցանցի մատակարարների Մատակարարների հասցեագիրք ստանալու համար զանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով: Մատակարարների հասցեագիրքը կարող եք նաև գտնել առցանց հետևյալ կայքում՝ **lacare.org**:

Շտապ օգնության համար զանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենից մոտիկ շտապ օգնության կայանը:

Բացի շտապ օգնությունից, թերևս պարտավորվեք վճարել արտացանցային մատակարարներից ստացված խնամքի համար:

Արտացանցային կամ Արտատարածքային

Արտացանցային մատակարարները նրանք են, ովքեր չունեն L.A. Care-ի հետ գործելու համաձայնություն: Բացի շտապ օգնությունից, թերևս պարտավորվեք վճարել արտացանցային մատակարարներից ստացված խնամքի համար: Եթե Ձեզ անհրաժեշտ են ապահովագրված առողջական խնամքի ծառայություններ, թերևս կարողանաք դրանք անվճար ստանալ ցանցից դուրս,



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

պայմանով, որ դրանք լինեն բժշկականորեն անհրաժեշտ, տրամադրելի չլինեն ցանցի ներսում, և ստանաք նախօրոք վավերացում:

Եթե օգնության կարիք ունեք արտացանցային ծառայությունների կապակցությամբ, զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Եթե գտնվում եք L.A. Care-ի սպասարկման տարածքից դուրս և Ձեզ անհրաժեշտ է մի խնամք, որը արտակարգ իրավիճակի կամ հրատապ խնամք է, անմիջապես զանգահարեք Ձեր PCP-ին: Կամ զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Շտապ օգնության համար զանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենից մոտիկ շտապ օգնության կայանը: L.A. Care-ը ապահովագրում է արտացանցային շտապ օգնությունը: Եթե ճանապարհորդեք Կանադա կամ Մեքսիկա և կարիքը ունենաք հիվանդանոցային բուժում պահանջող արտակարգ իրավիճակի ծառայությունների, L.A. Care-ը կապահովագրի Ձեր խնամքը: Եթե կատարում եք միջազգային ճանապարհորդություն Կանադայից կամ Մեքսիկայից դուրս և կարիքը ունեք շտապ օգնության, L.A. Care-ը **չի** ապահովագրի Ձեր խնամքը:

Եթե հարցեր ունեք արտացանցային կամ արտատարածքային խնամքի մասին, զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով: Գրասենյակը փակ լինելու դեպքում, կամ եթե ցանկանում եք ներկայացուցչի օգնությունը, զանգահարեք **Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ 1-800-249-3619 (TTY 711)** համարով:

Լիազորված մոդելով կառավարվող խնամքի ծրագրեր

L.A. Care-ը գործում է մեծ թվով բժիշկների, մասնագետների, դեղատների, հիվանդանոցների և առողջական խնամքի ուրիշ մատակարարների հետ: Մի շարք այսպիսի մատակարարներ գործում են ինչ-որ ցանցի ներսում, որը երբեմն կոչվում է «բժշկական խումբ» կամ «անկախ կիրառման ընկերակցություն» (Independent Practice Association, IPA): Այս մատակարարները կարող են նաև ուղղակի պայմանագիր կնքած լինել L.A. Care-ի հետ:

Ձեր PCP-ը Ձեզ կուղղորդի մասնագետների և ծառայությունների, որոնք կապ ունեն իր բժշկական խմբի, IPA-ի կամ L.A. Care-ի հետ: Եթե դեռևս գտնվում եք մասնագետի, խոսեք Ձեր առաջնային խնամքի բժշկի հետ կամ զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: **Անդամների սպասարկումը** կօգնի որ այցելեք այդ մատակարարին, եթե իրավասու եք խնամքի շարունակման: Հավելյալ տեղեկության համար անցեք այս տեղեկագրի խնամքի շարունակում բաժինը:

Բժիշկներ

Դուք մի Առաջնային խնամքի մատակարար (PCP) կընտրեք L.A. Care-ի Մատակարարների հասցեագրից: Ձեր ընտրած բժիշկը պետք է լինի մասնակից մատակարար: Սա նշանակում է, որ մատակարարը գտնվում է L.A. Care-ի ցանցում: L.A. Care-ի Մատակարարների հասցեագրի պատճենը ստանալու համար զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով: Կամ այն գտեք առցանց այս կայքում՝ **lacare.org**:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

3 | Ինչպես խնամք ստանալ

Նույնպես, պետք է գանգահարեք, եթե ուզում եք վստահ լինելու համար ստուգել, որ Ձեր ցանկացած PCP-ը ընդունում է նոր հիվանդների:

Եթե այցելում էիք մի բժշկի L.A. Care-ի անդամ դառնալուց առաջ, թերևս կարողանաք շարունակել այցելել այդ բժշկին սահմանափակ ժամանակով: Սա կոչվում է խնամքի շարունակում: Խնամքի շարունակման վերաբերյալ ավելին կարող եք կարդալ այս տեղեկագրում: Հավելյալ տեղեկության համար գանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Մասնագետի կարիք ունենալու դեպքում, Ձեր PCP-ը Ձեզ ուղեգիր կտա L.A. Care-ի ցանցում գտնվող մասնագետի համար:

Հիշեք՝ եթե Դուք չընտրեք մի PCP, L.A. Care-ը կընտրի այդպիսին Ձեզ համար: Դուք լավագույնս գիտեք Ձեր առողջական խնամքի կարիքները, ուստի Ձեր ընտրությունը լավագույնը կլինի: Եթե անդամ եք Ա՝ Medicare-ի, Ա՝ Medi-Cal-ի, պարտավոր չեք PCP ընտրել:

Եթե ցանկանում եք փոխել Ձեր PCP-ը, պարտավոր եք PCP ընտրել L.A. Care-ի Մատակարարների հասցեագրեցի: Ստուգեք, վստահ լինելու համար, որ PCP-ը ընդունում է նոր հիվանդների: Ձեր PCP-ը փոխելու համար գանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Հիվանդանոցներ

Արտակարգ իրավիճակի դեպքում գանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենից մոտիկ հիվանդանոցը:

Եթե չկա արտակարգ իրավիճակ և կարիքը ունեք հիվանդանոցային խնամքի, Ձեր PCP-ը կորոշի Ձեր գնալիք հիվանդանոցը: Դուք պետք է գնաք ցանցում գործող հիվանդանոց: L.A. Care-ի ցանցի հիվանդանոցները նշվել են Մատակարարների հասցեագրում: Հիվանդանոցային ծառայությունները, բացի արտակարգ իրավիճակներից, նախավավերացում (նախօրոք լիազորում) են պահանջում:

Առաջնային խնամքի մատակարար (PCP)

Պարտավոր եք PCP ընտրել L.A. Care-ին անդամագրվելուց հետո 30 օրվա ընթացքում: Նայած Ձեր տարիքի և սեռի, կարող եք որպես Ձեր առաջնային խնամքի բժիշկ (PCP) ընտրել ընդհանուր մասնագետի, մանկաբարձ/գինեկոլոգի, ընտանեկան հիվանդությունների մասնագետի, ներքին հիվանդությունների մասնագետի կամ մանկաբույժի: Առաջնային խնամք տրամադրող բուժքույրը (Nurse Practitioner, NP), օգնական բժիշկը (Physician Assistant, PA) կամ վկայագրված բուժքույր-մանկաբարձը նույնպես կարող է գործել որպես Ձեր PCP: NP, PA կամ վկայագրված բուժքույր-մանկաբարձ ընտրելու դեպքում, թերևս Ձեզ համար նշանակեն Ձեր խնամքը վերահսկող բժշկի:

Կարող եք նաև ընտրել Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (FQHC) կամ Գյուղական առողջապահական կլինիկա (RHC) որպես Ձեր PCP: Նայած մատակարարի տեսակի, թերևս կարողանաք ընտրել մեկ PCP Ձեր ողջ ընտանիքի անդամների համար, ովքեր անդամ են L.A. Care-ի:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ գանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Անդամագրվելուց հետո 30 օրվա ընթացքում PCP չընտրելու դեպքում, L.A. Care-ը PCP կնշանակի Ձեզ համար: Եթե Ձեզ համար նշանակել են PCP և ցանկանում եք փոխել այն, զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Փոփոխությունը կատարվում է հաջորդ ամսի առաջին օրը:

Ձեր PCP-ը կանի հետևյալը՝

- Կճանաչի Ձեր առողջական պատմությունը և կարիքները
- Կպահի Ձեր առողջական արձանագրությունները
- Կտա Ձեզ անհրաժեշտ կանխարգելիչ և սովորական առողջական ինամբը
- Կուղղորդի (կուղարկի) Ձեզ մասնագետի անհրաժեշտության դեպքում
- Կդասավորի հիվանդանոցային ինամբը անհրաժեշտության դեպքում

L.A. Care-ի ցանցում PCP գտնելու համար կարող եք նայել Մատակարարների հասցեագրքին: Մատակարարների հասցեագիրքը ունի ցանկը FQHC-ների և RHC-ների, որոնք գործում են L.A. Care-ի հետ:

L.A. Care-ի Մատակարարների հասցեագիրքը կարող եք առցանց գտնել հետևյալ կայքում՝ **lacare.org**: Կամ կարող եք խնդրել, որ Մատակարարների հասցեագիրքը փոստով ուղարկվի Ձեզ, զանգահարելով L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Կարող եք նաև զանգահարել պարզելու համար, որ արդյո՞ք Ձեր ցանկացած PCP-ը ընդունում է նոր հիվանդների:

Բժիշկների և մատակարարների ընտրությունը

Դուք լավագույնս գիտեք Ձեր առողջական ինամբի կարիքները, ուստի Լավագույն կլինի, որ Դուք ընտրեք Ձեր PCP-ը:

Լավագույն է մտալ մեկ PCP-ի մոտ, որպեսզի կարողանա ճանաչել Ձեր առողջական ինամբի կարիքները: Սակայն եթե ցանկանում եք անցնել նոր PCP-ի, կարող եք փոխել որևէ ժամանակ: Պարտավոր եք ընտրել մի PCP, ով գտնվում է L.A. Care-ի մատակարարների ցանցում և ընդունում է նոր հիվանդների:

Ձեր նոր ընտրանքը կդառնա Ձեր PCP-ը փոփոխության կատարման հաջորդող ամսի առաջին օրը:

Ձեր PCP-ը փոխելու համար զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

L.A. Care-ը թերևս Ձեզանից խնդրի փոխել Ձեր PCP-ը, եթե PCP-ը նոր հիվանդների չի ընդունում, հեռացել է L.A. Care-ի ցանցից կամ ինամբ չի մատուցում Ձեր տարիքի անձանց: L.A. Care-ը կամ Ձեր PCP-ը թերևս խնդրի, որ անցնեք մի նոր PCP-ի, եթե Ձեր հարաբերությունը լավ չէ Ձեր PCP-ի հետ կամ համաձայն չեք նրան, կամ եթե բաց եք թողնում ժամադրությունները կամ ուշ եք ներկայանում: Եթե L.A. Care-ին անհրաժեշտ լինի փոխել Ձեր PCP-ը, L.A. Care-ը գրավոր կհաղորդի Ձեզ:



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

3 | Ինչպես ինձամբ ստանալ

Ձեր PCP-ները փոխելու դեպքում, փոստով կատանաք L.A. Care-ի անդամի նոր ճանաչողական քարտ: Այն կունենա անունը Ձեր նոր PCP-ի: Չանգահարեք անդամների սպասարկում, եթե հարցեր ունեք նոր ճանաչողական քարտ ստանալու վերաբերյալ:

Ժամադրություններ

Երբ առողջական ինձամբի կարիք ունեք՝

- Չանգահարեք Ձեր PCP-ին
- Չանգահարելիս, պատրաստի ունեցեք Ձեր L.A. Care-ի ճանաչողական համարը
- Գրասենյակը փակ լինելու դեպքում, պատգամ թողեք Ձեր անունով և հեռախոսահամարով
- Ձեր BIC քարտը և L.A. Care-ի ճանաչողական քարտը տարեք Ձեր ժամադրություններին
- Անհրաժեշտության դեպքում, Ձեր ժամադրության համար փոխադրում ինդրեք
- Անհրաժեշտության դեպքում, լեզվական օգնության կամ բանավոր թարգմանչի ծառայություններ ինդրեք
- Ձեր ժամադրությանը ներկայացեք ժամանակին
- Անմիջապես զանգահարեք, եթե չեք կարող Ձեր ժամադրությունը հարգել կամ ուշանալու եք
- Պատրաստի ունեցեք Ձեր հարցերն ու դեղերին վերաբերող տեղեկությունը՝ դրանց կարիքն առաջանալու դեպքում

Եթե ունեք արտակարգ իրավիճակ, զանգահարեք **911** համարով կամ գնացեք ամենից մոտիկ շտապ օգնության կայանը:

Վճարում

Դուք ոչ մի վճարում **չեք** կատարի ապահովագրված ծառայությունների համար: Հիմնականում, մատակարարից հաշիվ չեք ստանա: Թերևս ստանաք Նպաստների բացատրություն (Explanation of Benefits, EOB) կամ հաշվեցույց մատակարարից: EOB-ները և հաշվեցույցները հաշիվներ չեն:

Հաշիվ ստանալու դեպքում, զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: L.A. Care-ին հայտնեք գանձելի գումարը, ծառայության ամսաթիվը և հաշվի դրդապատճառը: Դուք պարտավոր **չեք** մատակարարին վճարել որևէ գումար, որը կազմում է L.A. Care-ի պարտավորությունը որևէ ապահովագրված ծառայության համար: Բացի շտապ օգնությունից, թերևս պարտավորվեք վճարել արտացանցային մատակարարներից ստացված ինձամբի համար: Եթե Ձեզ անհրաժեշտ են ապահովագրված առողջական ինձամբի ծառայություններ, թերևս կարողանաք դրանք անվճար ստանալ արտացանցային մատակարարից, պայմանով, որ դրանք լինեն բժշկականորեն անհրաժեշտ և տրամադրելի չլինեն ցանցի ներսում:

Եթե հաշիվ ստանաք կամ Ձեզանից ինդրվի վճարել համավճար, երբ կարծում եք, որ չպետք է վճարեք, կարող եք նաև պահանջի ձևաթուղթ ներկայացնել L.A. Care-ին: Պարտավոր եք L.A. Care-ին գրավոր հայտնել, թե ինչու եք հարկադրվել վճարել իրի կամ ծառայության համար: L.A. Care-ը կընթերցի



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Ձեր պահանջը և կորոշի, որ կարող եք հետ ստանալ Ձեր փողը: Հարցերի կամ պահանջի ձևաթուղթ ինդրելու համար զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Ուղեգրեր

Ձեր PCP-ը հարկ եղած դեպքում, Ձեզ ուղեգիր կտա՝ Ձեզ մասնագետի ուղարկելու համար: Մասնագետը մի բժիշկ է, ով հավելյալ ուսում է ստացել բժշկության ինչ-որ մարզում: Ձեր PCP-ը Ձեզ հետ կգործի մասնագետի ընտրության համար: Ձեր PCP-ի գրասենյակը կարող է օգնել, որ ժամանակ նշանակեք մասնագետին այցելելու համար:

Ուղեգիր պահանջող ուրիշ ծառայությունների թվում են՝ գրասենյակում իրականացվող գործողությունները, ռենտգեն պատկերումները, լաբորատորային անալիզները, հատուկ բուժումները, տնային ինամբը և ընտրովի ընդունումները մի հաստատություն:

Ձեր PCP-ը թերևս Ձեզ ձևաթուղթ տա մասնագետին տանելու համար: Մասնագետը կլրացնի ձևաթուղթը և հետ կուղարկի Ձեր PCP-ին: Մասնագետը Ձեր կրուժի քանի դեռ կգտնի, որ կարիք ունեք բուժման:

Եթե ունեք երկար ժամանակով հատուկ բժշկական ինամբ պահանջող առողջական ինդիք, Ձեզ անհրաժեշտ կլինի մի մշտական ուղեգիր: Սա նշանակում է, որ կարող եք նույն մասնագետին այցելել ավելի երկար ժամանակ՝ առանց նոր ուղեգիր ստանալու:

Եթե դժվարանում եք մշտական ուղեգիր ստանալ կամ ցանկանում եք պատճենը L.A. Care-ի ուղղորդումների քաղաքականության, զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Ձեզ ուղեգիր անհրաժեշտ չէ հետևյալի համար՝

- PCP-ի այցեր
- Մանկաբարձի/գինեկոլոգի այցեր
- Հրատապ և արտակարգ իրավիճակի ինամբի այցեր
- Չափահասի զգայուն ծառայություններ, ինչպես՝ սեռական ոտնձգության ինամբը
- Ընտանիքի ծրագրման ծառայություններ (ավելին իմանալու համար զանգահարեք Կալիֆորնիայի ընտանիքի ծրագրման և ուղղորդման ծառայություն **1-800-942-1054** համարով)
- ՄԻՎԿի ստուգում և խորհրդատվություն (միայն 12 տարեկան կամ ավելի տարեց դեռահասներ)
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների բուժում (միայն 12 տարեկան կամ ավելի տարեց դեռահասներ)
- Ասեղնաբուժություն (ամսական առաջին երկու ծառայությունները. լրացուցիչ ժամադրությունների համար ուղղորդում անհրաժեշտ կլինի)
- Ոսկրահարդարման ծառայություններ (երբ մատուցվում են FQHC-ների և RHC-ների կողմից)



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

3 | Ինչպես ինամբ ստանալ

- Ոտնաբուժական ծառայություններ (երբ մատուցվում են FQHC-ների և RHC-ների կողմից)
- Իրավասու ատամնաբուժական ծառայություններ
- Հոգեկան առողջության սկզբնական գնահատում
- Ներցանցային մատակարարից երկրորդ կարծիք

Դեռահասներին ևս ուղեգիր անհրաժեշտ չէ հետևյալի համար՝

- Ամբուլատոր հոգեկան առողջության ծառայություններ հետևյալի համար՝
 - Սեռական կամ ֆիզիկական չարաշահում
 - Երբ Դուք Ձեզ կամ ուրիշներին կարող եք վսաս հասցնել
- Հղիության ինամբ
- Սեռական ոտնձգության ինամբ
- Թմրանյութերի և ալկոհոլի չարաշահման բուժում

Նախավավերացում

Ինամբի մի շարք տեսակների համար Ձեր PCP-ը կամ մատակարարը պարտավոր է L.A. Care-ից արտոնություն խնդրել՝ նախքան ինամբն ստանալը: Սա կոչվում է նախօրոք լիազորում, նախօրոք վավերացում կամ նախավավերացում խնդրել: Սա նշանակում է, որ L.A. Care-ը պետք է վստահ լինի, որ ինամբը բժշկականորեն անհրաժեշտ կամ պետքական է:

Ինամբը բժշկականորեն անհրաժեշտ է, եթե այն տրամաբանական և անհրաժեշտ է Ձեր կյանքը պաշտպանելու համար, արգելում է Ձեր լուրջ հիվանդ կամ հաշմանդամ դառնալը, կամ մեղմացնում է սաստիկ ցավը՝ ախտորոշված ախտից, հիվանդությունից կամ վսասվածքից:

Հետևյալ ծառայությունները միշտ նախավավերացում են պահանջում, եթե դրանք ստանում եք L.A. Care-ի ներցանցային մատակարարից՝

- Հիվանդանոցային բուժում, եթե արտակարգ իրավիճակ չէ
- Ծառայություններ L.A. Care-ի սպասարկման տարածքից դուրս
- Ամբուլատոր վիրահատություն
- Երկարատև ինամբ բուժքույրական հաստատությունում
- Մասնագիտացված բուժումներ

Մի շարք ծառայությունների համար Ձեզ անհրաժեշտ է նախավավերացում (նախօրոք լիազորում): Առողջապահության և անվտանգության օրենսգրքի (Health and Safety Code) 1367.01(h)(2) Բաժնի ներքո, L.A. Care-ը սովորական նախավավերացումները կորոշի 5 աշխատանքային օրվա ընթացքում, երբ L.A. Care-ը ստանա որոշման համար տրամաբանորեն անհրաժեշտ տեղեկությունը:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Խնդրանքների համար, որոնց դեպքում մատակարարը նշում կամ L.A. Care-ը որոշում է, որ տիպական ժամկետին հետևելը կարող է լրջորեն վտանգել Ձեր կյանքը կամ առողջությունը կամ առավելագույն գործառույթ ձեռք բերելու, պահպանելու կամ վերագտնելու կարողությունը, L.A. Care-ը կկայացնի արագացված (արագ) նախավավերացման որոշում: L.A. Care-ը ծանուցում կտա այնքան արագ՝ ինչքան Ձեր առողջական վիճակը պահանջի և ոչ ավելի ուշ քան 72 ժամից՝ ծառայությունների համար ինդրանքն ստանալուց հետո:

L.A. Care-ը **չի** վճարում վերանայողներին՝ ապահովագրություն կամ ծառայություններ մերժելու համար: Եթե L.A. Care-ը չվավերացնի ինդրանքը, L.A. Care-ը Ձեզ կուղարկի Գործողության ծանուցագրի (Notice of Action, NOA) նամակ: NOA նամակը Ձեզ կհայտնի ինչպես բողոք ներկայացնել, եթե համաձայն չլինեք որոշման:

L.A. Care-ը կապ կհաստատի Ձեզ հետ, եթե L.A. Care-ին անհրաժեշտ լինի հավելյալ ժամանակ Ձեր ինդրանքը վերանայելու համար:

Շտապ օգնության համար Ձեզ երբեք նախավավերացում անհրաժեշտ չի լինի, նույնիսկ արտացանցային դեպքում: Սա ներառում է երկունքն ու մանկածնությունը, եթե հղի եք:

Երկրորդ կարծիքներ

Թերևս երկրորդ կարծիք ցանկանաք ինամբի վերաբերյալ, որի համար Ձեր մատակարարը հայտնում է, որ այն անհրաժեշտ է Ձեզ, կամ Ձեր ախտորոշման կամ բուժման ծրագրի վերաբերյալ: Օրինակ, թերևս երկրորդ կարծիք ցանկանաք, եթե վստահ չեք, որ արդյո՞ք Ձեզ անհրաժեշտ է նշանակված բուժում կամ վիրահատություն, կամ եթե փորձել եք հետևել բուժման ծրագրի և այն չի հաջողվել:

Երկրորդ կարծիք ստանալ ցանկանալու դեպքում, կարող եք ընտրել Ձեր ցանկացած ներցանցային մատակարարին: Մատակարար ընտրելու կապակցությամբ օգնության համար զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

L.A. Care-ը կվճարի երկրորդ կարծիքի համար, եթե Դուք կամ Ձեր ցանցի մատակարարը ինդրեք այն և երկրորդ կարծիքն ստանաք ցանցի մատակարարից: Ցանցի մատակարարից երկրորդ կարծիք ստանալու համար Ձեզ անհրաժեշտ չի լինի L.A. Care-ից արտոնություն:

Եթե L.A. Care-ի ցանցում չկա Ձեզ երկրորդ կարծիք տվող մատակարար, L.A. Care-ը կվճարի արտացանցային մատակարարից երկրորդ կարծիքի համար: L.A. Care-ը Ձեզ 5 օրվա ընթացքում կհայտնի, որ արդյո՞ք երկրորդ կարծիքի համար Ձեր ընտրած մատակարարը վավերացվել է: Եթե ունեք բրոնխիտ, սաստիկ կամ լուրջ հիվանդություն, կամ դիմագրավում եք մի անմիջական և լուրջ վտանգ Ձեր առողջության, ներառյալ՝ առանց դրանցով սահմանափակվելու, կյանքի, մի վերջույթի կամ մարմնի մի գլխավոր մասի կամ մարմնական գործառույթի կորուստ, L.A. Care-ը որոշում կկայացնի 72 ժամվա ընթացքում:

Եթե L.A. Care-ը մերժի երկրորդ կարծիքի Ձեր ինդրանքը, կարող եք բողոքարկել: Բողոքարկումների մասին ավելին իմանալու համար անցեք այս տեղեկագրի 80-րդ էջը:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Ուղևորման ժամանակ և ինամբից հեռավորություն

L.A. Care-ը պարտավոր է հետևել ուղևորման ժամանակի և ինամբից հեռավորության չափանիշներին Ձեր ինամբի համար: Այս չափանիշները օգնում են երաշխավորել, որ ինամբը կարողանում էք ստանալ՝ առանց շատ երկար ուղևորության կամ Ձեր բնակության վայրից շատ հեռու վայրում: Ուղևորման ժամանակի և հեռավորության չափանիշները տարբերվում են ըստ Ձեր բնակած վարչաշրջանի:

Եթե L.A. Care-ը չի կարող ինամբ մատուցել Ձեզ ուղևորման ժամանակի և հեռավորության չափանիշների ծիրում, թերևս օգտագործվի այլընտրական մատչելիության չափանիշ կոչվող մի տարբեր չափանիշ: L.A. Care-ի՝ Ձեր բնակության վայրի ժամանակի և հեռավորության չափանիշները տեսնելու համար, խնդրում ենք այցելել հետևյալ կայքը՝ **lacare.org** կամ զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Եթե Ձեզ հարկավոր է ինամբ մի մասնագետից և այդ մատակարարը գտնվում է Ձեր բնակության վայրից հեռու, կարող եք զանգահարել Անդամների սպասարկում **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով, որպեսզի Ձեզ օգնեն ինամբ գտնել Ձեզ ավելի մոտիկ գտնվող մասնագետի մոտ: Եթե L.A. Care-ը չի կարողանում ավելի մոտիկ մասնագետի մոտ ինամբ գտնել Ձեզ համար, կարող եք L.A. Care-ից խնդրել, որ Ձեզ համար փոխադրում դասավորի, որպեսզի տեսնեք մասնագետին, նույնիսկ եթե այդ մասնագետը գտնվում է Ձեր բնակության վայրից հեռու: Յուրաքանչյուր է համարվում, եթե չեք կարող այդ մասնագետին գնալ L.A. Care-ի՝ Ձեր վարչաշրջանի ուղևորման ժամանակի և հեռավորության չափանիշների ծիրում, անկախ որևէ այլընտրական մատչելիության չափանիշից, որը L.A. Care-ը կարող է օգտագործել Ձեր փոստային թվանիշի համար:

Կանանց առողջության մասնագետներ

Կարող եք կանանց առողջության մասնագետի գնալ L.A. Care-ի ցանցի ներսում՝ ապահովագրված ինամբի համար, որը անհրաժեշտ է կանանց սովորական և կանխարգելիչ առողջական ինամբի ծառայություններ մատուցելու նպատակով: Այս ծառայություններն ստանալու համար Ձեր PCP-ից ուղղորդման կարիքը չկա: Կանանց առողջության մասնագետ գտնելու նպատակով օգնության համար կարող եք զանգահարել L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով: Կարող եք նաև զանգահարել L.A. Care-ի **Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ 1-800-249-3619 (TTY 711)** համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Յուրաքանչյուր անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Ինամբի մատչելիությունը ժամանակին

Ժամադրության տեսակը	Ժամադրություն ստանալու ժամկետը
Հրատապ ինամբի ժամադրություններ, որոնք չեն պահանջում նախավավերացում (նախօրոք լիազորում)	48 ժամ
Հրատապ ինամբի ժամադրություններ, որոնք պահանջում են նախավավերացում (նախօրոք լիազորում)	96 ժամ
Ոչ-հրատապ (սովորական) առաջնային ինամբի ժամադրություններ	10 աշխատանքային օր
Ոչ-հրատապ (սովորական) մասնագիտացված ինամբի ժամադրություններ	15 աշխատանքային օր
Ոչ-հրատապ (սովորական) հոգեկան առողջության մատակարարի (ոչ-բժիշկ) ժամադրություններ	10 աշխատանքային օր
Ոչ-հրատապ (սովորական) ժամադրություններ օժանդակ ծառայությունների համար՝ վնասվածքի, հիվանդության կամ ուրիշ առողջական վիճակի ախտորոշման կամ բուժման նպատակով	15 աշխատանքային օր
Հեռախոսով սպասման ժամանակը սովորական աշխատանքային ժամերի ընթացքում	10 րոպե
Տեսակավորում – 24/7 ծառայություններ	24/7 ծառայություններ – 30 րոպեից ոչ ավելի
Սկզբնական նախաձեռնական ինամբի ժամադրություն	10 աշխատանքային օր



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**:
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

4. Նպաստներ և ծառայություններ

Ինչ է ապահովագրում Ձեր առողջապահական ծրագիրը

Այս բաժինը բացատրում է որպես L.A. Care-ի անդամ Ձեր բոլոր ապահովագրված ծառայությունները: Ձեր ապահովագրված ծառայություններն անվճար են պայմանով, որ բժշկականորեն անհրաժեշտ լինեն և մատուցվեն ներցանցային մատակարարի կողմից: Ձեր առողջապահական խնամքը թերևս ապահովագրի արտացանցային մատակարարի բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները: Բայց պարտավոր եք այն խնդրել L.A. Care-ից: Խնամքը բժշկականորեն անհրաժեշտ է, եթե այն տրամաբանական և անհրաժեշտ է Ձեր կյանքը պաշտպանելու համար, արգելում է Ձեր լուրջ հիվանդ կամ հաշմանդամ դառնալը, կամ մեղմացնում է սաստիկ ցավը՝ փստորոշված փստից, հիվանդությունից կամ վնասվածքից:

L.A. Care-ը մատուցում է այս տեսակի ծառայություններ՝

- Չգիշերող հիվանդի (ամբուլատոր) ծառայություններ
- Շտապ օգնության ծառայություններ
- Մահացու հիվանդի և ցավամոքիչ խնամք
- Հիվանդանոցային բուժում
- Մայրության և նորածնի խնամք
- Դեղատոմսային դեղեր
- Վերականգնողական ծառայություններ և սարքեր
- Լաբորատորային և ռադիոլոգիական ծառայություններ, ինչպես՝ ռենտգեն պատկերումը
- Կանխարգելիչ և քաջառողջական ծառայություններ և քրոնիկ հիվանդության կառավարում
- Հոգեկան առողջության ծառայություններ
- Թմրանյութի օգտագործման խանգարման բուժման ծառայություններ
- Մանկաբուժական ծառայություններ
- Տեսողական ծառայություններ
- Ոչ-արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրում (Non-Emergency Medical Transportation, NEMT)
- Ոչ-բժշկական փոխադրում (Non-Medical Transportation, NMT)
- Երկարաժամկետ ծառայություններ և աջակցություններ (Long-Term Services and Supports, LTSS)



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

- Սեռափոխության ծառայություններ
- Հեռաառողջապահական ծառայություններ

Կարդացե՛ք ներքևի բաժիններից յուրաքանչյուրը Ձեզ հասանելի ծառայությունների մասին ավելին իմանալու համար:

Medi-Cal-ի նպաստներ

Չգիշերող հիվանդի (ամբուլատոր) ծառայություններ

- **Չափահասի անընկալացումներ**

Չափահասի անընկալացումներ (սրսկումներ) կարող եք ստանալ ցանցի դեղատնից կամ ցանցի մատակարարից առանց նախավճարացման: L.A. Care-ը ապահովագրում է սրսկումները, որոնք հանձնարարվել են Հիվանդությունների կառավարման և կանխարգելման կենտրոնների (Centers for Disease Control and Prevention, CDC) Անընկալացման կիրառության խորհրդատու հանձնաժողովի (Advisory Committee on Immunization Practices, ACIP) կողմից:

- **Ալերգիայի խնամք**

L.A. Care-ը ապահովագրում է ալերգիայի ստուգումը և բուժումը, ներառյալ՝ ալերգիայի ապագայացումը, գերզգայացումը կամ իմունոթերապիան:

- **Չգայագրկողի ծառայություններ**

L.A. Care-ը ապահովագրում է զգայագրկման ծառայությունները, որոնք բժշկականորեն անհրաժեշտ են ամբուլատոր խնամք ստանալիս:

- **Ոսկրահարդարման ծառայություններ**

L.A. Care-ը ապահովագրում է ոսկրահարդարման ծառայությունները, այն սահմանափակելով ձեռքով ուղղելու միջոցով ողնաշարի բուժմամբ: Ոսկրահարդարման ծառայությունները սահմանափակվում են երկու ծառայությամբ որևէ ամսում, համատեղված՝ ասեղնաբուժական, լսաբանական, աշխատանքային թերապիայի և խոսքի թերապիայի ծառայությունների հետ: L.A. Care-ը կարող է նախավճարացնել ուրիշ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:

Հետևյալ անդամներն իրավասու են ոսկրահարդարման ծառայությունների՝

- 21 տարեկանից փոքր երեխաներ.
- Հղի կանայք՝ մինչև հղիության ավարտին հաջորդող 60 օր ընդգրկող ամսվա վերջը.
- Հմուտ բուժքույրական հաստատության, միջանկյալ խնամքի հաստատության կամ ենթասուր խնամքի հաստատության բնակիչները. կամ
- Բոլոր անդամները, երբ ծառայությունները մատուցվում են հիվանդանոցի ամբուլատոր բաժանմունքներում, FQHC-ում կամ RHC-ում



Չանգահարե՛ք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարե՛ք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելե՛ք առցանց՝ **lacare.org**:

4 | Նպաստներ և ծառայություններ

• **Դիալիզի/արյան դիալիզի ծառայություններ**

L.A. Care-ը ապահովագրում է դիալիզի բուժումները: L.A. Care-ը նաև ապահովագրում է արյան դիալիզի (թրոնիկ դիալիզ) ծառայությունը, եթե Ձեր PCP-ը և L.A. Care-ը վավերացնում են այն:

• **Ամբուլատոր վիրահատություն**

L.A. Care-ը ապահովագրում է ամբուլատոր վիրահատական գործողությունները: Այնպիսիք, ինչպիսիք անհրաժեշտ են ախտորոշիչ նպատակներով, ընտրովի համարվող գործողությունները և հատկորոշված ամբուլատոր բժշկական գործողությունները պահանջում են նախավավերացում (նախօրոք լիազորում):

• **Բժշկի ծառայություններ**

L.A. Care-ը ապահովագրում է բժշկի՝ բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները:

• **Ոտնաբուժական (ոտքի) ծառայություններ**

L.A. Care-ը ապահովագրում է բժշկականորեն անհրաժեշտ ոտնաբուժական ծառայությունները ախտորոշման և բժշկական, վիրաբուժական, ձեռային, մանիպուլյատիվ և էլեկտրական միջոցներով բուժելու մարդու ոտքը, ներառյալ՝ կոշիկներում մտնող ոտքերի կոճերը կամ ջլերը, ինչպես նաև ոչ-վիրահատական բուժումը սրունքի մկանների և ջլերի, որոնք կառավարում են ոտքի գործառույթը:

• **Բուժական թերապիաներ**

L.A. Care-ը ապահովագրում է տարբեր բուժական թերապիաներ, ներառյալ՝

- Զիմիաբուժումը
- Ճառագայթային բուժումը

Հոգեկան առողջության ծառայություններ

• **Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ**

- L.A. Care-ը ապահովագրում է անդամի հոգեկան առողջության սկզբնական գնահատումը առանց նախավավերացում (նախօրոք լիազորում) պահանջելու: Հոգեկան առողջության գնահատումը կարող է L.A. Care-ի ցանցում արտոնագրված հոգեկան առողջության մատակարարից ստանալ որևէ ժամանակ առանց ուղեգրի:
- Ձեր PCP-ը կամ հոգեկան առողջության մատակարարը կարող է ուղեգիր տալ L.A. Care-ի ցանցում մասնագետի մոտ հոգեկան առողջության հավելյալ զննման համար՝ Ձեր խանգարման մակարդակը որոշելու համար: Կարող է նաև ուղղակի զանգահարել L.A. Care, որպեսզի օգնեն Ձեր խանգարման մակարդակի որոշման: Եթե Ձեր հոգեկան առողջության զննման արդյունքները վճռեն, որ ունեք մեղմ կամ չափավոր նեղություն կամ ունեք մտային, հուզական կամ վարվեցողական գործառույթի խանգարում, L.A. Care-ը կարող է հոգեկան առողջության ծառայություններ մատուցել Ձեզ: L.A. Care-ը ապահովագրում է հոգեկան առողջության այս տեսակի ծառայությունները՝



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

- Անհատական և խմբային հոգեկան առողջության գնահատում և բուժում (հոգեբուժություն)
 - Հոգեբանական ստուգում՝ հոգեկան առողջության վիճակի գնահատման համար, երբ կլինիկականորեն ախտորոշվել է
 - Ճանաչողական հմտությունների զարգացում՝ ուշադրության, հիշողության և խնդիրների լուծման բարելավման համար
 - Ամբուլատոր ծառայություններ, որոնք նպատակ ունեն դեղաբուժումը հսկել
 - Ամբուլատոր լաբորատորային անալիզներ, դեղեր, պաշարներ և լրացուցիչներ
 - Հոգեբուժական խորհրդատվություն
- L.A. Care-ի կողմից մատուցվող հոգեկան առողջության ծառայությունների մասին ավելին իմանալու օգնության համար զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով
 - Եթե Ձեր հոգեկան առողջության գնման արդյունքները որոշեն, որ ունեք ավելի բարձր մակարդակի խանգարում և կարիք ունեք մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունների (Specialty Mental Health Services, SMHS), Ձեր PCP-ը կամ հոգեկան առողջության մատակարարը Ձեր կուղղորդի վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրին՝ գնահատում ստանալու համար: Ավելին իմանալու համար անցեք «*Ինչ էի սպասողվագրում Ձեր առողջապահական ծրագիրը*» բաժին, էջ 56:

Շտապ օգնության ծառայություններ

- **Ստացիոնար և ամբուլատոր ծառայություններ, որոնք անհրաժեշտ են բժշկական արտակարգ իրավիճակի բուժման համար**
L.A. Care-ը ապահովագրում է բոլոր ծառայությունները, որոնք անհրաժեշտ են ԱՄՆ-ում պատահող բժշկական արտակարգ իրավիճակի կամ Կանադայում կամ Մեքսիկայում հիվանդանոցում Ձեր գտնվելը պահանջող բուժման համար: Բժշկական արտակարգ իրավիճակը սաստիկ ցավով և լուրջ վնասվածքով հատկանշվող առողջական վիճակ է: Վիճակը այնքան լուրջ է, որ եթե դրան անմիջապես բժշկական միջամտություն չցուցաբերվի, առողջապահական և բժշկական միջին մակարդակի գիտելիքների տեր որևէ անձ կարող է ենթադրել, որ այն կհանգեցնի՝
 - Ձեր առողջությանը սպառնացող լուրջ վտանգի. **կամ**
 - Մարմնի գործառույթների լուրջ վնասի. **կամ**
 - Մարմնի որևէ օրգանի կամ մասի գործունեության լուրջ խանգարման. **կամ**
 - Հղի կնոջ դեպքում ակտիվ ծննդաբերության, որը նշանակում է ծննդաբերություն այն ժամանակ, երբ տեղի կունենա ստորև նշվածներից որևէ մեկը՝
 - Մինչև ծննդաբերությունը բավարար ժամանակ չկա, որպեսզի Ձեզ անվտանգ տեղափոխեն մեկ այլ հիվանդանոց:
 - Փոխադրումը կարող է Ձեր կամ Ձեր չծնված երեխայի առողջության կամ անվտանգության համար սպառնալիք ներկայացնել:



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք անցանց՝ **lacare.org**:

4 | Նպաստներ և ծառայություններ

• Արտակարգ իրավիճակի փոխադրական ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է հիվանդակառքի ծառայությունները, որպեսզի օգնի, որ արտակարգ իրավիճակի դեպքերում հասնեք մոտակա ինսամբի վայրը: Սա նշանակում է, որ Ձեր վիճակը այնքան լուրջ է, որ ինսամբի վայր հասնելու այլ միջոցները կարող են վտանգի ենթարկել Ձեր առողջությունը կամ կյանքը: Ոչ մի ծառայություն չի ապահովագրվում ԱՄՆ-ից դուրս, բացի արտակարգ իրավիճակի ծառայություններից, որոնք պահանջում են հիվանդանոցում Ձեր գտնվելը Կանադայում կամ Մեքսիկայում:

Մահացու հիվանդի և ցավամոքիչ ինսամբ

L.A. Care-ը ապահովագրում է երեխաների և չափահասների համար մահացու հիվանդի ինսամբը, ինչպես նաև ցավամոքիչ ինսամբը, որը օգնում է ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհանգստությունների նվազեցման:

Մահացու հիվանդի ինսամբը նպաստ է, որը ծառայում է անբուժելիորեն հիվանդ անդամների: Դա միջամտություն է, որը հիմնականում կենտրոնանում է դարմանի կամ երկարակետության փոխարեն ցավի և ախտանշանի կառավարման վրա:

Մահացու հիվանդի ինսամբն ընդգրկում է՝

- Բուժքույրական ծառայություններ
- Ֆիզիկական, աշխատանքային կամ խոսքի ծառայություններ
- Բժշկական սոցիալական ծառայություններ
- Տնային առողջապահության օգնականի և տնային տնտեսի ծառայություններ
- Բժշկական պաշարներ և սարքեր
- Դեղեր և կենսաբանական ծառայություններ
- Խորհրդատվական ծառայություններ
- 24-ժամյա դրությամբ անընդմեջ բուժքույրական ծառայություններ ճգնաժամային պահերի ընթացքում և ինչպես անհրաժեշտ են անբուժելի հիվանդին տանը պահելու համար
- Ստացիոնար հանգստի ինսամբ մինչև հինգ շաբուկական օր յուրաքանչյուր անգամ՝ հիվանդանոցում, հմուտ բուժքույրական հաստատություններ կամ մահացու հիվանդի հաստատությունում
- Կարճատև ստացիոնար ինսամբ ցավի կառավարման կամ ախտանշանի ղեկավարման համար՝ հիվանդանոցում, հմուտ բուժքույրական հաստատությունում կամ մահացու հիվանդի հաստատությունում

Ցավամոքիչ ինսամբը հիվանդի և ընտանիքի վրա կենտրոնացված ինսամբ է, որ բարելավում է կյանքի որակը՝ նախատեսելով, կանխարգելելով և դարմանելով տառապանքը: Ցավամոքիչ ինսամբը անդամից չի պահանջում ունենալ վեց ամիս կամ նվազ ապրելու ակնկալություն Ցավամոքիչ ինսամբը հնարավոր է մատուցել բուժիչ ինսամբի հետ միաժամանակ:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Հիվանդանոցային բուժում

• **Չգայագրկողի ծառայություններ**

L.A. Care-ը ապահովագրում է զգայագրկող մասնագետի ծառայությունները հիվանդանոցային կեցության ընթացքում: Չգայագրկողի մասնագետը մատակարար է, ով մասնագիտացել է հիվանդներին զգայագրկիչ տալու մարզում: Չգայագրկումը բժշկության մի տեսակ է, որն օգտագործվում է մի շարք բժշկական գործողությունների ընթացքում:

• **Ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ**

L.A. Care-ը ապահովագրում է ստացիոնար հիվանդանոցային ինսամբը, երբ Ձեզ հիվանդանոց են ընդունում:

• **Վիրաբուժական ծառայություններ**

L.A. Care-ը ապահովագրում է հիվանդանոցում իրականացված բժշկականորեն անհրաժեշտ ծառայությունները:

Մայրության և նորածնի ինսամբ

L.A. Care-ը ապահովագրում է մայրության և նորածնի ինսամբի հետևյալ ծառայությունները՝

- Կրծքով սնուցման կրթություն
- Ծննդաբերության և հետ-ծննդաբերության ինսամբ
- Նախածնական ինսամբ
- Ծննդաբերական կենտրոնի ծառայություններ
- Վկայագրված բուժքույր-մանկաբարձ (Certified Nurse Midwife, CNM)
- Արտոնագրված մանկաբարձ (Licensed Midwife, LM)
- Պտղի գենետիկական խանգարումների ախտորոշում և խորհրդատվություն

Դեղատոմսային դեղեր

Ապահովագրված դեղեր

Ձեր մատակարարը կարող է Ձեզ համար նշանակել դեղեր, որոնք գտնվում են L.A. Care-ի Medi-Cal-ի նախընտրելի դեղերի ցանկում, ենթակա՝ բացառությունների և սահմանափակումների: L.A. Care-ի Medi-Cal-ի նախընտրելի դեղերի ցանկը կոչվում է դեղացանկ: Դեղացանկում գտնվող դեղերն ապահով և արդյունավետ են իրենց նշանակովի օգտագործման համար: Ցանկը թարմացնում են մի խումբ բժիշկներ և դեղագործներ:

- Այս ցանկի թարմացումը օգնում է երաշխավորել ցանկի դեղերի ապահով և արդյունավետ լինելը
- Եթե Ձեր բժիշկը գտնում է, որ Ձեզ անհրաժեշտ է մի դեղ, որը չի գտնվում ցանկում, Ձեր բժիշկը պարտավոր է զանգահարել L.A. Care նախավավերացում ինդերելու համար, նախքան որ կարողանաք դեղն ստանալ:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**

L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

4 | Նպաստներ և ծառայություններ

Պարզելու համար ինչ-որ դեղի առկայությունը դեղացանկում կամ դեղացանկի պատճենն ստանալու համար գանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով: Դեղացանկը կարող եք նաև գտնել առցանց հետևյալ կայքում՝ **lacare.org**:

Երբեմն անհրաժեշտ է լինում, որ L.A. Care-ը վավերացնի մի դեղ, նախքան որ մատակարարը կարողանա նշանակել այն: L.A. Care-ը այսպիսի խնդրանքները կվերանայի և կորոշի 24 ժամվա ընթացքում:

- Դեղագործը կամ հիվանդանոցի շտապ օգնության կայանը կայանը կարող է Ձեզ 72-ժամյա արտակարգ իրավիճակի պաշար տալ, եթե գտնի, որ այն անհրաժեշտ է Ձեզ: L.A. Care-ը կվճարի արտակարգ իրավիճակի պաշարի համար
- Եթե L.A. Care-ը մերժի խնդրանքը, L.A. Care-ը Ձեզ նամակ ուղարկելով կիմացնի պատճառը և կնշի, թե ուրիշ ինչ դեղեր կամ բուժումներ կարող եք փորձել

Դեղատներ

Եթե լցնում կամ վերալցնում եք մի դեղատոմս, պարտավոր եք Ձեր դեղատոմսային դեղերն ստանալ L.A. Care-ի հետ գործող դեղատնից: L.A. Care-ի հետ գործող դեղատների ցանկը կարող եք գտնել L.A. Care-ի Մատակարարների հասցեագրքում, հետևյալ կայքում՝ **lacare.org**: Ձեզ մոտակա մի դեղատուն կարող եք գտնել նաև գանգահարելով **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Դեղատունն ընտրելուց հետո, Ձեր դեղատոմսը տարեք դեղատուն: Ձեր մատակարարը ևս կարող է դեղատուն ուղարկել այն Ձեզ համար: Դեղատան տվեք Ձեր դեղատոմսը Ձեր L.A. Care-ի ճանաչողական քարտի հետ: Ստուգեք, որ դեղատունն անպայման իմանա Ձեր ստացած բոլոր դեղերի և որևէ ավերգիայի մասին: Եթե Ձեր դեղատոմսի մասին ունեք որևէ հարց, անպայման հարցրեք դեղագործին:

Գլխավոր դեղատան ծրագիր

Որակավորվող անդամների համար L.A. Care-ը մատուցում է Գլխավոր դեղատան ծրագիր, որպեսզի անդամներին օգնի անվտանգ կառավարել իրենց վերահսկվող դեղերը: Գլխավոր դեղատունը L.A. Care-ի հետ գործող մի դեղատուն է, որտեղ Դուք կլցնեք վերահսկվող դեղերի համար Ձեր բոլոր դեղատոմսերը:

L.A. Care-ը Ձեզ կգանգահարի, եթե որակավորվում եք ծրագրի համար: Եթե անդամագրվել եք այս ծրագրին, կկարողանաք ընտրել Ձեզ համար հարմար մասնակից Գլխավոր դեղատուն: L.A. Care-ը նույնպես Ձեր բժշկին կիմացնի երբ Դուք անդամագրվել եք:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ գանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Վերականգնողական ծառայություններ և սարքեր

Ծրագիրն ապահովագրում է՝

- **Ասեղնաբուժություն**

L.A. Care-ը ապահովագրում է ասեղնաբուժական ծառայությունները՝ կանխարգելելու, բարեփոխելու կամ մեղմացնելու սաստիկ, համառ քրոնիկ ցավի զգացողությունը, որն առաջանում է ընդհանրապես ճանաչված բժշկական վիճակից: Ամբուլատոր ասեղնաբուժական ծառայությունները (ասեղների էլեկտրական կամ ոչ-էլեկտրական գրգռումով) սահմանափակվում են երկու ծառայությամբ որևէ ամսում, համատեղված՝ լսաբանական, ոսկրահարդարման, աշխատանքային թերապիայի և խոսքի թերապիայի ծառայությունների հետ: L.A. Care-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորություն) հավելյալ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:

- **Լսաբանություն (լսողություն)**

L.A. Care-ը ապահովագրում է լսաբանական ծառայությունները: Ամբուլատոր լսաբանությունը սահմանափակվում է երկու ծառայությամբ որևէ ամսում, համատեղված՝ ասեղնաբուժական, ոսկրահարդարման, աշխատանքային թերապիայի և խոսքի թերապիայի ծառայությունների հետ: L.A. Care-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորություն) հավելյալ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:

- **Վարքագծային առողջության բուժումներ**

Վարքագծային առողջության բուժումը (Behavioral Health Treatment, BHT) ներառում է ծառայությունների և բուժումների ծրագրեր, ինչպես՝ կիրառական վարքագծի վերլուծումը և ապացույցի հիմքով վարքագծին միջամտելու ծրագրերը, որոնք զարգացնում կամ վերականգնում են, հնարավոր առավելագույն տարողությամբ, անհատի գործունեությունը:

BHT ծառայությունները սովորեցնում են ունակություններ վարքագծային դիտարկումների և համալրումների միջոցով, կամ նպատակային վարքագծի յուրաքանչյուր քայլ դրդելով սովորեցնելու միջոցով: BHT ծառայությունները հիմնվում են վստահելի ապացույցի վրա և չունեն փորձնական բնույթ: BHT ծառայությունների օրինակներից են վարքագծային միջամտությունները, ճանաչողական վարքագծային միջամտական փաթեթները, համապարփակ վարքագծային բուժումը և կիրառական վարքագծային վերլուծումը:

BHT ծառայությունները պետք է լինեն բժշկականորեն անհրաժեշտ, նշանակված՝ արտոնագրված բժշկի կամ հոգեբանի կողմից, վավերացված՝ ծրագրի կողմից, և մատուցված այնպիսի եղանակով, որը հետևում է վավերացված ծրագրին:

- **Քաղցկեղի կլինիկական փորձարկումներ**

L.A. Care-ը կլինիկական փորձարկումն ապահովագրում է, եթե այն կապ ունի քաղցկեղի կամ կյանքին սպառնացող ուրիշ վիճակների կանխարգելման, հայտնաբերման կամ բուժման հետ և եթե ուսումնասիրությունն իրականացնում է ԱՄՆ Սննդի և դեղորայքի վարչությունը (Food and Drug Administration, FDA), Հիվանդությունների կառավարման և կանխարգելման կենտրոնները



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

4 | Նպաստներ և ծառայություններ

(Centers for Disease Control and Prevention, CDC) կամ Medicare-ի և Medicaid-ի ծառայությունների կենտրոնները (Centers for Medicare and Medicaid Services, CMS): Ուսումնասիրությունները վավերացված պետք է լինեն Առողջապահության ազգային հիմնարկների (National Institutes of Health), FDA-ի, Պաշտպանության նախարարության կամ Վետերանների վարչության կողմից:

- **Սրտի վերականգնում**

L.A. Care-ը ապահովագրում է սրտի վերականգնման ստացիոնար և ամբուլատոր ծառայությունները:

- **Գեղարարական վիրահատություն**

L.A. Care-ը չի ապահովագրում գեղարարական վիրահատությունը փոխելու համար մարմնի բնականոն կառուցվածքների ձևը՝ որպեսզի բարելավվի տեսքը:

- **Տևական օգտագործման բժշկական սարքեր (Durable Medical Equipment, DME)**

L.A. Care-ը ապահովագրում է գնումը կամ վարձումը բժշկական պաշարների, սարքերի և ուրիշ ծառայությունների՝ բժշկի դեղատոմսով: Դեղատոմսով նշանակված DME-ի իրերը կարող են ապահովագրվել որպես բժշկականորեն անհրաժեշտ՝ պահպանելու մարմնի գործառույթները, որոնք կենսական են առօրյա գործունեությունների համար կամ ֆիզիկական գլխավոր հաշմանդամության կանխարգելման նպատակով: L.A. Care-ը չի ապահովագրում հանգստի, հարմարավետության կամ պերճանքի սարքեր, հատուկ գովազդված իրեր և պաշարներ:

- **Աղիքային և արտաղիքային սնուցում**

Մարմնին սնունդ տալու այս մեթոդներն օգտագործվում են երբ բժշկական մի վիճակ արգելում է սննդի բնականոն ընդունումը: L.A. Care-ը ապահովագրում է աղիքային և արտաղիքային սնուցման արտադրանքները, երբ բժշկականորեն անհրաժեշտ են:

- **Լսողական սարքեր**

L.A. Care-ը ապահովագրում է լսողական օժանդակ սարքերը, եթե ստուգման եք ենթարկվել լսողական կորստի համար և դեղատոմս եք ստացել Ձեր բժշկից: L.A. Care-ը կարող է նաև ապահովագրել լսողական օժանդակ սարքերի վարձումը, փոխարինումները և Ձեր առաջին լսողական օժանդակ սարքի մարտկոցները:

- **Տանը մատուցվող առողջական ծառայություններ**

L.A. Care-ը ապահովագրում է առողջական ծառայությունները, որոնք մատուցվում են Ձեր տանը, երբ նշանակվել են բժշկի կողմից և ճանաչվում են որպես բժշկականորեն անհրաժեշտ:

- **Բժշկական պաշարներ, սարքեր և գործիքներ**

L.A. Care-ը ապահովագրում է բժշկական պաշարները, որոնք վավերացվել են Ձեր բժշկից:

- **Աշխատանքային թերապիա**

L.A. Care-ը ապահովագրում է աշխատանքային թերապիայի ծառայությունները, ներառյալ՝ աշխատանքային թերապիայի գնահատումը, բուժման ծրագրումը, բուժումը, ուսուցման և խորհրդատվության ծառայությունները: Աշխատանքային թերապիայի ծառայությունները



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):** L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

սահմանափակվում են երկու ծառայությամբ որևէ ամսում, համատեղված՝ ասեղնաբուժական, լսաբանական, ոսկրահարդարման և խոսքի թերապիայի ծառայությունների հետ: L.A. Care-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորություն) հավելյալ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:

• **Օրթեզ/պրոթեզ**

L.A. Care-ը ապահովագրում է օրթեզի և պրոթեզի սարքերը և ծառայությունները, որոնք բժշկականորեն անհրաժեշտ են և նշանակվել են Ձեր բժշկի, ոտնաբույժի, ատամնաբույժի, կամ ոչ-բժիշկ բժշկական մատակարարի կողմից: Սա ներառում է փոխապատվաստված լսողական սարքերը, կրծքի պրոթեզները/ստինքահատման կրծկալները, այրվածքի սեղմիչ հանդերձանքը և մարմնի գործառույթը կամ մարմնի անդամը վերականգնող կամ մարմնի տկարացած կամ ձևազեղված անդամին աջակցող պրոթեզները:

• **Օստոմիա և միզական պաշարներ**

L.A. Care-ը ապահովագրում է օստոմիայի տոպրակները, միզական կաթետերները, ցամաքուրդային տոպրակները, ոռոգման պաշարները և կաջուն նյութերը: Սա չի ներառում հանգստի, հարմարավետության կամ պերճանքի սարքեր, հատուկ գովազդված իրեր և պաշարներ:

• **Ֆիզիկական թերապիա**

L.A. Care-ը ապահովագրում է ֆիզիկական թերապիայի ծառայությունները, ներառյալ՝ ֆիզիկական թերապիայի գնահատումը, բուժման ծրագրումը, բուժումը, ուսուցումը, խորհրդատվության ծառայությունները, և տեղային դեղերի կիրառումը:

• **Թոքի վերականգնում**

L.A. Care-ը ապահովագրում է թոքի վերականգնումը, որը բժշկականորեն անհրաժեշտ է և նշանակվել է Ձեր բժշկի կողմից:

• **Վերականգնողական ծառայություններ**

L.A. Care-ը ապահովագրում է վիրահատությունը՝ ուղղելու կամ վերանորոգելու մարմնի անբնականոն կառուցվածքներ, որպեսզի բարելավի կամ ստեղծի հնարավորինս բնականոն տեսք: Մարմնի անբնականոն կառուցվածքները նրանք են, որոնք առաջանում են բնածին թերություններից, զարգացական անբնականոնություններից, տրավմայից, վարակից, նորագոյացություններից կամ հիվանդությունից:

• **Հմուտ բուժբույրական հաստատության ծառայություններ**

L.A. Care-ը ապահովագրում է հմուտ բուժբույրական հաստատության ծառայությունները որպես բժշկականորեն անհրաժեշտ՝ յուրաքանչյուր ընդունման համար ընդունման ամսաթվից սկսած առավելագույնը 90 օրով: Այս ծառայություններն ընդգրկում են սենյակը և գիշերումը արտոնագրված հաստատությունում՝ օրական 24 ժամ հմուտ բուժբույրական խնամքի հիմքով:

• **Խոսքի թերապիա**

L.A. Care-ը ապահովագրում է բժշկականորեն անհրաժեշտ խոսքի թերապիան: Խոսքի թերապիայի ծառայությունները սահմանափակվում են երկու ծառայությամբ որևէ ամսում, համատեղված՝



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

4 | Նպաստներ և ծառայություններ

ասեղնաբուժական, լսաբանական, ոսկրահարդարման և աշխատանքային թերապիայի ծառայությունների հետ: L.A. Care-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորություն) հավելյալ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:

• **Սեռափոխության ծառայություններ**

L.A. Care-ը ապահովագրում է սեռափոխության ծառայությունները (սեռի հաստատման ծառայություններ) որպես նպաստ, երբ բժշկականորեն անհրաժեշտ են կամ երբ ծառայությունը բավարարում է վերականգնողական վիրահատության չափանիշները:

Լաբորատորային և ռադիոլոգիական ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է ամբուլատոր և ստացիոնար լաբորատորային և ռենտգեն պատկերումի ծառայությունները, երբ բժշկականորեն անհրաժեշտ են: Չանազան կատարելագործված պատկերման գործողություններ ապահովագրվում են ըստ բժշկական անհրաժեշտության:

Կանխարգելիչ և քաջառողջական ծառայություններ և քրոնիկ հիվանդության կառավարում

Ծրագիրն ապահովագրում է՝

- Անընկալացման կիրառության խորհրդատու հանձնաժողովի կողմից հանձնարարված պատվաստումներ
- Ընտանիքի ծրագրման ծառայություններ
- Առողջապահական աղբյուրների և ծառայությունների վարչության (Health Resources and Service Administration) Փայլուն ապագաների (Bright Futures) հանձնարարությունները
- Բժշկության հիմնարկի (Institute of Medicine) կողմից կանանց համար հանձնարարված կանխարգելիչ ծառայությունները
- Ծխելը դադարեցնելու ծառայությունները
- Միացյալ Նահանգների կանխարգելիչ ծառայությունների աշխատանքային խմբի (United States Preventive Services Task Force) Ա և Բ հանձնարարած կանխարգելիչ ծառայությունները

Ընտանիքի ծրագրման ծառայությունները մատուցվում են մանկածնության տարիքի անդամներին, որպեսզի կարողանան որոշել երեխաների քանակը և նրանց ծննդյան ամսաթվերի հեռավորությունը: Այս ծառայությունները ներառում են Սննդի և դեղորայքի վարչության (FDA) կողմից վավերացված բոլոր հակաբեղմնավորիչ միջոցները: L.A. Care-ի PCP-ը և մանկաբարձության/գինեկոլոգիայի մասնագետները տրամադրելի են ընտանիքի ծրագրման ծառայությունների համար:

Ընտանիքի ծրագրման ծառայությունների համար առանց L.A. Care-ից նախավավերացում ստանալու կարող եք նաև ընտրել մի բժշկի կամ կլինիկա, որը կապ չունի L.A. Care-ի հետ: Ընտանիքի ծրագրման հետ կապված արտացանցային մատակարարի ծառայությունները չեն կարող ապահովագրվել: Ավելին իմանալու համար զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Շաքարախտի կանխարգելման ծրագիր

Շաքարախտի կանխարգելման ծրագիրը (Diabetes Prevention Program, DPP) ապացույցի վրա հիմնված ապրելակերպի փոփոխության ծրագիր է: Այն մշակվել է կանխարգելելու կամ ուշացնելու սկզբնավորումը 2 տեսակի շաքարախտի՝ նախաշաքարախտով ախտորոշված անհատների շրջանակում: Ծրագրի տևողությունն է մեկ տարի: Այն կարող է որակավորվող անդամների համար երկարաձգվել մինչև երկու տարի: Ծրագրով հաստատված ապրելակերպի աջակցություններն ու հնարքները ներառում են, առանց դրանցով սահմանափակվելու՝

- Տրամադրումը հավասարակից մարզիչի
- Ուսուցումը ինքնահսկողության և խնդիրների լուծման
- Մատուցումը քաջալերանքի և հետադարձ նկատողությունների
- Մատուցումը տեղեկատվական նյութերի՝ նպատակակետերին աջակցելու համար
- Հետևումը սովորական միջամտությունների՝ նպատակակետերի իրականացման համար

DPP-ին միանալու համար անդամները պարտավոր են բավարարել ծրագրի իրավասության պահանջմունքները: Չանգահարեք L.A. Care-ը ավելին իմանալու համար ծրագրի և իրավասության մասին:

Թմրանյութի օգտագործման խանգարման ծառայություններ

Ծրագիրն ապահովագրում է՝

- Ալկոհոլի չարաչափական զննումներ և վարքագծային առողջության խորհրդատվական միջամտություններ ալկոհոլի չարաչափական համար

Մանկաբուժական ծառայություններ

Ծրագիրն ապահովագրում է՝

- Վաղ և պարբերաբար զննման, ախտորոշիչ և բուժման (Early and Periodic Screening, Diagnostic and Treatment, EPSDT) ծառայություններ:
 - Եթե Դուք կամ Ձեր երեխան չեք դարձել 21 տարեկան, L.A. Care-ը ապահովագրում է քաջառողջ երեխայի այցեր: Քաջառողջ երեխայի այցերը կանխարգելիչ, զննական, ախտորոշիչ և բուժիչ ծառայությունների համապարփակ լրակազմ են:
 - L.A. Care-ը կարող է ժամադրություններ դասավորել, եթե օգնություն է պետք, և փոխադրում մատուցել, որպեսզի երեխաներին օգնի ստանալ իրենց անհրաժեշտ խնամքը:
 - Կանխարգելիչ խնամքը կարող է սովորական ստուգումներ կամ զննումներ ներկայացնել, օգնելու, որ Ձեր բժիշկը վաղ հայտնաբերի խնդիրները: Կանոնավոր ստուգումներն օգնում են Ձեր բժշկին, որ ուշադրություն դարձնի Ձեր բժշկական, ատամնաբուժական, տեսողական, հոգեկան առողջության հետ կապված խնդիրների և թմրանյութի օգտագործման խանգարումների: L.A. Care-ը ապահովագրում է զննական ծառայությունները (ներառյալ՝ արյան



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

4 | Նպաստներ և ծառայություններ

մեջ կապարի մակարդակի գնահատումը) երբ էլ որ դա անհրաժեշտ լինի, նույնիսկ եթե դա չի կատարվում Ձեր սովորական ստուգման պահին: Նույնպես, կանխարգելիչ խնամքը կարող է ներկայացնել Ձեզ և Ձեր երեխային անհրաժեշտ սրսկումներ: L.A. Care-ը բոլոր անդամագրված երեխաների համար պետք է երաշխավորի առողջական խնամքի այցի պահին անհրաժեշտ սրսկումների ստացումը:

- Երբ խնդիր ներկայացնող ֆիզիկական կամ հոգեկան հարց է հայտնաբերվում ստուգման կամ գնման պահին, հնարավոր է, որ գտնվի մի այնպիսի խնամք, որը ուղղի խնդիրը կամ օգնի դրան: Եթե խնամքը բժշկականորեն անհրաժեշտ է և L.A. Care-ը պատասխանատու է խնամքի վճարման, ապա L.A. Care-ը խնամքն ապահովագրում է անվճար: Այս ծառայություններն ընդգրկում են՝
 - Բժիշկ, առաջնային խնամք տրամադրող բուժքույր և հիվանդանոցային խնամք
 - Սրսկումներ՝ Ձեզ առողջ պահելու համար
 - Ֆիզիկական, խոսքի/լեզվի և աշխատանքային թերապիաներ
 - Տնային առողջապահության ծառայություններ, որոնք կարող են լինել բժշկական սարքեր, պաշարներ և գործիքներ
 - Տեսողության և լսողության բուժում, որը կարող է լինել ակնոցներ և լսողական սարքեր
 - Վարքագծային առողջության բուժում աուտիզմի բազմաշերտ խանգարման և ուրիշ զարգացական հաշմանդամությունների համար
 - Գործի կառավարում, նպատակային գործի կառավարում և առողջապահական կրթություն
 - Վերականգնողական վիրահատություն, որը վիրահատություն է ուղղելու կամ վերանորոգելու մարմնի անբնականոն կառուցվածքները, որոնք առաջանում են բնածին թերություններից, զարգացական անբնականոնություններից, տրավմայից, վարակից, նորագոյացություններից կամ հիվանդությունից, բարելավելու գործառույթը կամ ստեղծելու բնականոն տեսք:
- Եթե խնամքը բժշկականորեն անհրաժեշտ է և L.A. Care-ը պատասխանատու չէ խնամքի վճարման, ապա L.A. Care-ը կօգնի, որ ստանաք Ձեզ անհրաժեշտ հարմար խնամքը: Այս ծառայություններն ընդգրկում են՝
 - Բուժում և վերականգնողական ծառայություններ հոգեկան առողջության և թմրանյութի օգտագործման խանգարումների համար
 - Բուժում ատամաբուժական խնդիրների համար, որոնք կարող են ձևախախտված ատամների ուղղում լինել
 - Մասնավոր պարտականությամբ բուժքույրական ծառայություններ
- Վաղ միջամտության ծառայություններ
 - Զաջառողջ երեխայի այցերը կանխարգելիչ, գնևական, ախտորոշիչ և բուժիչ ծառայությունների լայն ծիր են ներկայացնում: Եթե առկա են Ձեր երեխայի զարգացման կերպի հետ կապված մտահոգություններ նրա 3 տարեկան դառնալուց առաջ, բժիշկը կարող է Ձեր երեխային ուղեգիր տալ տեղական Վաղ միջամտության ծառայության համար: Այս ծրագրերը աշխատում են



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

կանխարգելել կամ նվազեցնել երեխաների զարգացման հետ կապված ուշացումները: Վաղ միջամտությունը Ձեզ տրամադրվում է անվճար: L.A. Care-ը կարող է օգնել, որ կապ հաստատեք Ձեր տեղական ծրագրի հետ: Ավելին իմանալու համար զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Տեսողական ծառայություններ

Ծրագիրն ապահովագրում է՝

- Սովորական աչքի քննություն ամեն 24 ամիսը մեկ. L.A. Care-ը կարող է նախավավերացնել (նախօրոք լիազորություն) հավելյալ ծառայություններ որպես բժշկականորեն անհրաժեշտ:
- Ակնոցներ (շրջանակներ և ոսպնյակներ) ամեն 24 ամիսը մեկ անգամ. հպովի ոսպնյակ, երբ պահանջվում է բժշկական վիճակների համար, ինչպես՝ աֆաքիան, անհիրիդիան և կերատոկոնուսը:

Տեսողական մատակարարների վերաբերյալ հավելյալ տեղեկության համար զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Ոչ-արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրում (NEMT)

Դուք իրավասու եք ոչ-արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրումից (NEMT) օգտվելու, երբ ֆիզիկապես կամ բժշկականորեն Ձեր բժշկական, ատամնաբուժական, հոգեկան առողջության և թմրանյութի օգտագործման խանգարման ժամադրության չեք կարող գնալ մարդատար մեքենայով, ավտոբուսով, գնացքով կամ տաքսիով և ծրագիրն է վճարում Ձեր բժշկական կամ ֆիզիկական վիճակի համար: NEMT-ի նշանակում ինդիքելուց առաջ, պարտավոր եք ծառայությունը ինդիքել Ձեր բժշկի կամ DHCS-ի կողմից վավերացված մատակարարի միջոցով և նա կնշանակի Ձեր բժշկական վիճակին համապատասխանող հարմար տեսակի փոխադրումը և նախավավերացման ինդիքանքը Ձեր անունից կներկայացնի L.A. Care-ին:

NEMT-ը հիվանդակառք, զուգարանով օժտված միկրոավտոբուս, անվաթոռի համար նախատեսված միկրոավտոբուս կամ օդային փոխադրում է: NEMT-ը չի ներկայացնում մարդատար մեքենա, ավտոբուս կամ տաքսի: L.A. Care-ը թույլատրում է ամենից էժան NEMT-ը Ձեր բժշկական կարիքների համար, երբ Ձեզ փոխադրություն է հարկավոր Ձեր ժամադրության համար: Սա նշանակում է, օրինակ, որ եթե ֆիզիկապես կամ բժշկականորեն կարող եք անվաթոռի համար նախատեսված միկրոավտոբուսով փոխադրվել, L.A. Care-ը չի վճարի հիվանդակառքի համար: Դուք օդային փոխադրման իրավունք ունեք միայն այն դեպքում, եթե Ձեր բժշկական վիճակը անհնար է դարձնում որևէ տեսակի ցամաքային փոխադրում:

NEMT-ից պետք է օգտվել, երբ՝

- Այն անհրաժեշտ է ֆիզիկապես կամ բժշկականորեն, ինչպես դա որոշվում է բժշկի կամ DHCS-ի կողմից վավերացված մատակարարի գրավոր լիազորումով, կամ Դուք ֆիզիկապես կամ բժշկականորեն չեք կարող օգտվել ավտոբուսից, տաքսիից, մարդատար մեքենայից կամ միկրոավտոբուսից՝ Ձեր ժամադրության գնալու համար



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

4 | Նպաստներ և ծառայություններ

- Ձեզ անհրաժեշտ է օգնությունը վարորդի՝ դեպի Ձեր տուն, մեքենա կամ բուժման վայր գնալու և վերադառնալու համար ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամության պատճառով
- Այն առաջուց վավերացվել է L.A. Care-ի կողմից բժշկի գրավոր լիազորումով, նախքան փոխադրման նշանակումը հնարավոր լինելը

Ձեր բժշկի նշանակած NEMT ծառայությունները խնդրելու համար խնդրում ենք զանգահարել L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով Ձեր ժամադրությունից առնվազն 2 աշխատանքային օր (երկուշաբթիից-ուրբաթ) առաջ: Հրատապ ժամադրությունների համար խնդրում ենք զանգահարել հնարավորինս շուտ: Խնդրվում է Ձեր անդամի ճանաչողական քարտը պատրաստի ունենալ զանգահարելիս:

NEMT-ի սահմանները

Սահմաններ չկան NEMT ստանալու նպատակով L.A. Care-ի ներքո ապահովագրված բժշկական, ատաժառանգական, հոգեկան առողջության և թմրանյութի օգտագործման խանգարման ժամադրությունների գնալու և նրանցից վերադառնալու համար, երբ մատակարարն այն նշանակել է Ձեզ համար: Եթե ժամադրության տեսակը ապահովագրվում է Medi-Cal-ի, բայց ոչ առողջապահական ծրագրի կողմից, Ձեր առողջապահական ծրագիրը կմատուցի փոխադրումը կամ կօգնի, որ դասավորեք այն:

Ի՞նչն է անկիրառելի

NEMT փոխադրում չի մատուցվի, եթե Ձեր ֆիզիկական և բժշկական վիճակը թույլատրում է, որ Ձեր բժշկական ժամադրություններին գնաք մարդատար մեքենայով, ավտոբուսով, տաքսիով կամ ուրիշ հեշտ մատչելի փոխադրման եղանակով: Փոխադրում չի մատուցվի, եթե ծառայությունը չի ապահովագրվում Medi-Cal-ի կողմից: Ապահովագրված ծառայությունների ցանկը գտնվում է Անդամի տեղեկագրքում:

Ծախքը անդամի համար

Ոչ մի ծախք չկա, եթե փոխադրումը լիազորվել է L.A. Care-ի կողմից:

Ոչ-բժշկական փոխադրում (NMT)

Ոչ-բժշկական փոխադրումից (NMT) կարող եք օգտվել, երբ Դուք՝

- Medi-Cal-ի ապահովագրած ծառայության համար ժամադրության եք գնում և այնտեղից վերադառնում
- Վերցնում եք դեղատոմսային դեղեր և բժշկական պաշարներ



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

L.A. Care-ը Ձեզ թույլ է տալիս օգտվել մարդատար մեքենայից, տաքսիից, ավտոբուսից կամ ուրիշ հանրային/մասնավոր միջոցներից՝ Ձեր բժշկական ժամադրություններին գնալու նպատակով Medi-Cal-ի կողմից ապահովագրված ծառայությունների համար: L.A. Care-ը փոխհատուցում է մատուցում մղոնների համար, երբ փոխադրումը կատարվում է մասնավոր փոխադրամիջոցով, որը դասավորել է անդամը և այն չի կատարվել փոխադրման միջնորդի, ավտոբուսի տոմսերի, տաքսիի կտրոնների կամ գնացքի տոմսերի միջոցով:

Մղոնների փոխհատուցման վավերացում ստանալուց առաջ, պարտավոր եք L.A. Care-ին հեռախոսով, էլ. փոստով կամ անձամբ հայտարարել, որ փորձել եք ձեռք բերել փոխադրման բոլոր մյուս տրամաբանական ընտրանքները և չեք կարողացել ձեռք բերել այդպիսին: L.A. Care-ը թույլատրում է ամենից էժան NMT-ի տեսակը, որը համապատասխանում է Ձեր բժշկական կարիքներին:

Խնդրելու համար NMT ծառայություններ, որոնք լիազորվել են Ձեր մատակարարի կողմից, զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով Ձեր ժամադրությունից առնվազն 2 աշխատանքային օր (երկուշաբթիից ուրբաթ) առաջ, կամ զանգահարեք հնարավորինս շուտ, երբ հրատապ ժամադրություն ունեք: Խնդրվում է Ձեր անդամի ճանաչողական քարտը պատրաստի ունենալ զանգահարելիս:

NMT-ի սահմանները

Սահմաններ չկան NMT ստանալու նպատակով բժշկական, ատամնաբուժական, հոգեկան առողջության և թմրանյութի օգտագործման խանգարման ժամադրությունների գնալու և նրանցից վերադառնալու համար: Եթե ժամադրության տեսակը ապահովագրվում է Medi-Cal-ի, բայց ոչ առողջապահական ծրագրի կողմից, Ձեր առողջապահական ծրագիրը կմատուցի փոխադրումը կամ կօգնի, որ դասավորեք այն:

Ի՞նչն է անկիրառելի

NMT-ը կիրառելի չէ, եթե՝

- Չիվանդակառք, զուգարանով միկրոավտոբուս, անվաթոռով միկրոավտոբուս կամ NEMT-ի ուրիշ տեսակ բժշկականորեն անհրաժեշտ է ապահովագրված ծառայության գնալու համար:
- Ձեզ անհրաժեշտ է օգնությունը վարորդի՝ դեպի տուն, մեքենա կամ բուժման վայր գնալու և վերադառնալու համար ֆիզիկական կամ բժշկական վիճակի հետևանքով:
- Ծառայությունն ապահովագրված չէ Medi-Cal-ի կողմից:

Ծախսը անդամի համար

Ոչ մի ծախս չկա, եթե փոխադրումը լիազորվել է L.A. Care-ի կողմից:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Յեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

4 | Նպաստներ և ծառայություններ

Երկարաժամկետ ծառայություններ և աջակցություններ (LTSS)

L.A. Care-ը ապահովագրում է այս LTSS-ի ծառայություններն անդամների համար, ովքեր որակավորվում են՝

- Հմուտ բուժքույրական հաստատության ծառայություններ, ինչպես վավերացվել են L.A. Care-ի կողմից
- Տանը և համայնքում մատուցվող ծառայություններ, ինչպես վավերացվել են L.A. Care-ի կողմից

Հիմնարկային երկարաժամկետ խնամք

L.A. Care-ը որպես բժշկականորեն անհրաժեշտ ապահովագրում է երկարաժամկետ խնամքի հմուտ բուժքույրական հաստատության ծառայությունները այնտեղ մուտք գործելու 91-րդ օրվանից մինչև Ձեր դուրս գրվելը:

Հավելյալ տեղեկության համար զանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Ատամաբուժական ծառայություններ

Medi-Cal-ը ապահովագրում է մի շարք ատամաբուժական ծառայություններ, ներառյալ՝

- Ախտորոշիչ և կանխարգելիչ ատամաբուժական հիգիենա (օրինակ՝ քննություններ, ռենտգեն պատկերումներ և ատամների մաքրում)
- Արտակարգ իրավիճակի ծառայություններ ցավի կառավարման համար
- Ատամների հեռացում
- Լցոններ
- Ատամաարմատի խողովակի բուժումներ (առաջամասի/հետին)
- Ատամաշապիկներ (սախտոք պատրաստված/լաբորատորային)
- Ատամաքարի և լնդատակի մաքրում
- Ատամաարմատը շրջապատող հյուսվածքների պահպանում
- Ամբողջական և մասնակի ատամաշարեր
- Որակավորվող երեխաների համար ձևախախտված ատամների ուղղում

Եթե հարցեր ունեք, կամ ցանկանում եք ավելին իմանալ ատամաբուժական ծառայությունների վերաբերյալ, զանգահարեք Denti-Cal **1-800-322-6384** (TTY **1-800-735-2922**) համարով: Կարող եք նաև այցելել Denti-Cal-ի կայքը՝ **denti-cal.ca.gov**:



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում** **1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Յեռաառողջապահական ծառայություններ

L.A. Care-ը թերևս կարողանա Ձեր ծառայություններից մի քանիսը մատուցել հեռաառողջապահության միջոցով: Յեռաառողջապահությունը ծառայություններ ստանալու մի միջոց է՝ առանց գտնվելու Ձեր բժշկի գտնված նույն վայրում: Յեռաառողջապահությունը կարող է ներառել Ձեր մատակարարի հետ կենդանի տեսանյութային զրույց: Կամ հեռաառողջապահությունը կարող է ներառել Ձեր մատակարարի հետ տեղեկության կիսում առանց կենդանի զրույցի: Կարևոր է, որ և՛ Դուք, և՛ Ձեր մատակարարը համաձայնվեք, որ մի որոշակի ծառայության համար հեռաառողջապահությունը պատշաճ է Ձեզ համար: L.A. Care-ին կարող եք դիմել որոշելու, թե ինչ տեսակի ծառայություններ L.A. Care-ը կկարողանա Ձեզ մատուցել հեռաառողջապահության միջոցով:

Համակարգված խնամքի նախաձեռնության (CCI) նպաստներ

Սա ցանկն է Համակարգված խնամքի նախաձեռնության (Coordinated Care Initiative, CCI) նվազագույն նպաստների: CCI նպաստների մանրամասների համար խնդրում ենք տեսնել այս տեղեկագրի Համակարգված խնամքի նախաձեռնություն (CCI) բաժինը:

Ծրագիրն ապահովագրում է՝

- Ձեզ համար համագործակցող մատակարարների մի ցանց
- Անձնական խնամքի համակարգող, ով կերաշխավորի Ձեզ անհրաժեշտ խնամքի և աջակցության ստացումը
- Ձեր առողջական կարիքներին և խնամքի ծրագրին հարմարեցված վերանայում
- Medi-Cal-ի ընտրյալ նպաստներ, ինչպես՝ Երկարաժամկետ ծառայություններ և աջակցությունները
- Առողջական ապահովագրության մեկ քարտ
- Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ, որպեսզի զանգահարեք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը

Ինչ չի ապահովագրում Ձեր առողջապահական ծրագիրը

Ուրիշ ծառայություններ, որոնք կարող եք ստանալ Վճարովի ծառայությամբ (FFS) Medi-Cal-ի միջոցով

Երբեմն L.A. Care-ը չի ապահովագրում ծառայությունները, բայց այնուամենայնիվ կարող եք դրանք ստանալ (Fee-For-Service, FFS) Medi-Cal-ի միջոցով: Այս բաժինը ներկայացնում է այս ծառայությունների ցանկը: Ավելին իմանալու համար զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**:

L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Յեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

4 | Նպաստներ և ծառայություններ

Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ

Վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերը մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ (Specialty Mental Health Services, SMHS) են մատուցում Medi-Cal-ի նպաստառուների, ովքեր լրացնում են բժշկական առողջության կանոնները: SMHS-ը կարող է ընդգրկել հետևյալ ստացիոնար և ամբուլատոր ծառայությունները՝

- Ամբուլատոր ծառայություններ՝
 - Հոգեկան առողջության ծառայություններ (գնահատումներ, ծրագրի մշակում, թերապիա, վերականգնում, և աջակից մասնագետ)
 - Դեղերի աջակցության ծառայություններ
 - Ցերեկային բուժման լարված ծառայություններ
 - Ցերեկային վերականգնողական ծառայություններ
 - Ճգնաժամի միջամտության ծառայություններ
 - Ճգնաժամի կայունացման ծառայություններ
 - Նպատակային գործի կառավարման ծառայություններ
 - Թերապևտական վարքագծային ծառայություններ
 - Լարված ինամբի համակարգում (Intensive Care Coordination, ICC)
 - Տանը մատուցվող լարված ծառայություններ (Intensive Home-Based Services, IHBS)
 - Խնամատուի թերապևտական ինամբ (Therapeutic Foster Care, TFC)
- Բնակության վայրում ծառայություններ՝
 - Բնակության վայրում չափահասների բուժման ծառայություններ
 - Բնակության վայրում ճգնաժամային բուժման ծառայություններ
- Ստացիոնար ծառայություններ՝
 - Սուր հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ
 - Հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային պրոֆեսիոնալ ծառայություններ
 - Հոգեբուժական առողջապահական հաստատության ծառայություններ

Վարչաշրջանի կողմից մատուցվող հոգեկան առողջության ծառայությունների վերաբերյալ ավելին իմանալու նպատակով օգնության համար կարող եք զանգահարել Լոս Անջելես վարչաշրջանի Հոգեկան առողջության բաժին (Department of Mental Health) **1-800-854-7771** համարով կամ այցելեք հետևյալ կայքը՝ **dmh.lacounty.gov**: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարները առցանց գտնելու համար այցելեք հետևյալ կայքը՝ **dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx**:



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Թմրանյութի օգտագործման խանգարման ծառայություններ

L.A. Care-ը ապահովագրում է թմրանյութի չարաշահման համար զննումը և կարճատև միջամտությունները առաջնային ինսամբի մատակարարների կողմից: Ավելի լարված թմրանյութի օգտագործման խանգարման ծառայությունների համար, ներառյալ՝ բնակության վայրում ծառայությունները, Ձեր PCP-ը կամ հոգեկան առողջության մասնագետը կարող է Ձեզ ուղղորդել Lnu Անջելես վարչաշրջանի Թմրանյութի չարաշահման կանխարգելում և վերահսկողություն (Substance Abuse Prevention and Control, SAPC): Ձեզ ուղեգիր հարկավոր չէ Lnu Անջելես վարչաշրջանից ծառայություններ ինդրելու համար: Կարող եք SAPC զանգահարել **1-844-804-7500** համարով:

Ծառայություններ, որոնք չեք կարող ստանալ L.A. Care-ի կամ Medi-Cal-ի միջոցով

Կան մի շարք ծառայություններ, որոնք ո՛չ L.A. Care-ը, ո՛չ էլ Medi-Cal-ը կապահովագրեն, ներառյալ՝

- Պտղաբերության ստուգում և բուժում, ներառելով, առանց հետևյալներով սահմանափակվելու՝
 - Ներարգանդային բեղմնավորում
 - Փորձանոթում բեղմնավորում
 - Անպտղության դեղեր
- Զաղցկեղի կլինիկական փորձարկումներից տարբեր փորձնական դեղեր և բուժումներ
- Առնանդամի լարման խանգարման (Erectile Dysfunction, ED) դեղեր և այլ ED թերապիաներ
- Ընթերցեք ներքևի բաժիններից յուրաքանչյուրը՝ ավելին իմանալու համար: Կամ զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Կալիֆորնիայի Երեխաների ծառայություններ (California Children’s Services, CCS)

CCS-ը նահանգային ծրագիր է, որը բուժում է 21 տարեկանից փոքր և որոշակի առողջական վիճակներ, հիվանդություններ կամ քրոնիկ առողջական խնդիրներ ունեցող երեխաների, ովքեր լրացնում են CCS ծրագրի կանոններ: Եթե L.A. Care-ը կամ Ձեր PCP-ը համոզված է, որ Ձեր երեխան ունի CCS-ի վիճակ, նրան կուղղորդեն վարչաշրջանի CCS-ի ծրագիր, իրավասության համար գնահատելու նպատակով:

CCS ծրագրի անձնակազմը կորոշի, որ արդյո՞ք Ձեր երեխան որակավորվում է CCS ծառայությունների համար: Եթե Ձեր երեխան որակավորվում է այս տեսակի ինսամբ ստանալու համար, CCS-ի մատակարարները նրան կբուժեն CCS-ի վիճակի համար: L.A. Care-ը կշարունակի ապահովագրել ծառայության այնպիսի տեսակներ, որոնք կապ չունեն CCS-ի վիճակի հետ, ինչպես՝ ֆիզիկական բնությունները, պատվաստումները և քաջառողջ երեխայի ստուգումները:

L.A. Care-ը չի ապահովագրում CCS ծրագրի կողմից մատուցվող ծառայությունները: Որպեսզի CCS-ը ապահովագրի այս ծառայությունները, CCS-ը պետք է վավերացնի մատակարարը, ծառայությունները և սարքերը:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

4 | Նպաստներ և ծառայություններ

CCS-ը չի ապահովագրում բոլոր առողջական վիճակները: CCS-ը ապահովագրում է հիմնականում առողջական վիճակներ, որոնք ֆիզիկապես անկարող են դարձնում կամ որոնք անհրաժեշտ է բուժել դեղերով, վիրահատությամբ կամ վերականգնումով (վերականգնողական կենտրոն): CCS-ը ապահովագրում է երեխաների, որոնք ունեն հետևյալի նման առողջական վիճակներ՝

- Բնածին սրտի հիվանդություն
- Քաղցկեղներ
- Նորագոյացություններ
- Արյունահոսականություն
- Մանգաղանման բջջային սակավարյունություն
- Վահանագեղձի խնդիրներ
- Շաքարախտ
- Լուրջ քրոնիկ երիկամային խնդիրներ
- Լյարդի հիվանդություն
- Աղիքային հիվանդություն
- Շրթնաճոռթուկ/քիմք
- Ողնաշարի ճեղքվածք
- Լսողության կորուստ
- Կատարակտներ
- Ուղեղի կաթված
- Նոպա որոշակի պարագաների ներքո
- Ռևմատիզմանման հողաբորբ
- Մկանային սննդախանգար
- ՁԻԱՅ
- Գլխի, ուղեղի կամ ողնաշարի սաստիկ վնասվածք
- Սաստիկ այրվածքներ
- Խիստ ծուռ առամներ

Նահանգն է վճարում CCS ծառայությունների համար: Եթե Ձեր երեխան իրավասու չէ CCS ծրագրի ծառայություններին, նա կշարունակի բժշկականորեն անհրաժեշտ խնամք ստանալ L.A. Care-ից:

CCS-ի մասին ավելին իմանալու համար զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Ուրիշ ծրագրեր և ծառայություններ Medi-Cal ունեցողների համար

Կան Medi-Cal ունեցողների համար ուրիշ ծրագրեր և ծառայություններ, ներառյալ՝

- Համակարգված խնամքի նախաձեռնություն
- Օրգանի և հյուսվածքի նվիրում
- Health Homes ծրագիր (Health Homes Program, HHP)

Ընթերցեք ստորև ներկայացվող բաժիններից յուրաքանչյուրը՝ Medi-Cal ունեցող անձանց համար ուրիշ ծրագրերի մանրամասների վերաբերյալ:

Համակարգված խնամքի նախաձեռնություն (CCI)

Կալիֆորնիայի Համակարգված խնամքի նախաձեռնությունը (Coordinated Care Initiative, CCI) ձգտում է բարելավել խնամքի համակարգումը կրկնակի իրավասուների համար (անձինք, ովքեր որակավորվում են և՛ Medi-Cal-ի, և՛ Medicare-ի համար): CCI-ը ունի երկու գլխավոր մաս՝

Cal MediConnect

Cal MediConnect ծրագրի նպատակն է բարելավել խնամքի համակարգումը կրկնակի իրավասուների համար: Այն նրանց թույլ է տալիս մեկ ծրագրում կառավարել իրենց բոլոր նպաստները, փոխանակ ունենալու առանձին Medi-Cal և Medicare ծրագրեր: Նրա նպատակակետն է նաև բարձրորակ խնամքը, որը մարդկանց օգնում է հնարավորինս երկար մտալ առողջ և իրենց տանը:

Կառավարվող երկարաժամկետ ծառայություններ և աջակցություններ (Managed Long-Term Services and Supports, MLTSS)

Medi-Cal-ի բոլոր նպաստառուները, ներառյալ՝ կրկնակի իրավասուները, պարտավոր են միանալ Medi-Cal-ի կառավարվող խնամքի առողջապահական ծրագրի, որպեսզի ստանան իրենց Medi-Cal-ի նպաստները, ներառյալ՝ LTSS-ի և Medicare-ի լրացուցիչ նպաստները:

CCI-ի մասին ավելին իմանալու համար զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Օրգանի և հյուսվածքի նվիրում

Ամեն անձ կարող է օգնել կյանքեր փրկելու գործին՝ դառնալով օրգանի կամ հյուսվածքի նվիրատու: Եթե 15-ից 18 տարեկան եք, կարող եք նվիրատու դառնալ Ձեր ծնողի կամ խնամակալի գրավոր համաձայնությամբ: Կարող եք Ձեր միտքը որևէ ժամանակ փոխել օրգանի նվիրատու լինելու վերաբերյալ: Եթե ցանկանում եք ավելին իմանալ օրգանի և հյուսվածքի նվիրման վերաբերյալ, խոսեք Ձեր PCP-ի հետ: Կարող եք նաև այցելել Միացյալ Նահանգների Առողջապահության և մարդու ծառայությունների նախարարության կայքը՝ **organdonor.gov**:



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

4 | Նպաստներ և ծառայություններ

Health Homes Ծրագիր

L.A. Care-ը ապահովագրում է Health Homes ծրագրի (HHP) ծառայությունները որոշակի քրոնիկ առողջական վիճակներ ունեցող անդամների համար: Այս ծառայությունները օգնում են ֆիզիկական առողջության ծառայությունների, վարքագծային առողջության ծառայությունների և համայնքային հիմքով երկարաժամկետ ծառայությունների և աջակցությունների (LTSS) համակարգման՝ քրոնիկ վիճակներ ունեցող անդամների համար:

Թերևս կապ հաստատեն Ձեզ հետ, եթե որակավորվում եք ծրագրի համար: Կարող եք նաև զանգահարել L.A. Care կամ խոսել Ձեր բժշկի կամ կլինիկայի անձնակազմի հետ, ստուգելու, որ կարո՞ղ եք HHP ծառայություններ ստանալ:

Թերևս որակավորվեք HHP-ի համար, եթե՝

- Որոշակի քրոնիկ հոգեկան առողջության վիճակներ ունեք: Կարող եք L.A. Care զանգահարելով իմանալ պայմանները, որոնք որակավորվում են, և եթե բավարարում եք հետևյալներից մեկը՝
 - Ունեք HHP-ի իրավասու երեք կամ ավելի քրոնիկ վիճակներ
 - Հիվանդանոցում եք մնացել անցած տարի
 - Անցած տարի շտապ օգնության բաժին եք այցելել երեք կամ ավելի անգամ. կամ
 - Չունեք բնակության վայր:

Դուք չեք որակավորվում HHP ծառայությունների համար, եթե՝

- Ստանում եք մահացու հիվանդների ծառայություններ. կամ
- Բնակվում էիք հմուտ բուժքույրական հաստատությունում ընդունման ամսից ավելի երկար և նրան հաջորդող ամսում:

Ապահովագրված HHP ծառայություններ

HHP-ը Ձեզ կտա խնամքի համակարգող և խնամքի խումբ, որը կգործակցի Ձեզ և Ձեր առողջական խնամքի մատակարարների հետ, ինչպես՝ Ձեր բժիշկները, մասնագետները, դեղագործները, գործի կառավարիչները և ուրիշներ, Ձեր խնամքը համակարգելու համար: L.A. Care-ը մատուցում է HHP-ի ծառայություններ, որոնք ներառում են՝

- Համապարփակ խնամքի կառավարում
- Խնամքի համակարգում
- Առողջության խթանում
- Համապարփակ անցումային խնամք
- Անհատական և ընտանեկան աջակցության ծառայություններ
- Ուղեգրեր համայնքային և սոցիալական աջակցությունների համար



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Ծախքը անդամի համար

Անդամը ոչինչ չի վճարի HHP ծառայությունների համար:

Խնամքի համակարգում

L.A. Care-ը առաջարկում է ծառայություններ, որոնք օգնում են, որ անվճար համակարգեք Ձեր առողջական խնամքի կարիքները: Եթե Ձեր կամ Ձեր երեխայի առողջության վերաբերյալ ունեք հարցեր կամ մտահոգություններ, զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Խնամքի կառավարման ծրագիր

Անդամները կարող են զանգահարել խնամքի կառավարման ծրագիր և զրուցել խնամքի կառավարչի հետ՝ իրենց առողջական մտահոգությունների վերաբերյալ օգնության համար, օգտագործելով ներքևում տրված համարները: Խնամքի կարգավորման ծրագիրը մի անվճար ծառայություն է L.A. Care Health Plan-ի կողմից: Ծրագիրն ունի բուժքույրեր, սոցիալական աշխատողներ և ուրիշ մարզված անձնակազմ, որոնք պատրաստ են Ձեզ օգնելու Ձեր առողջությանը ազդող բարդ խնդիրների հարցում: Խնամքի կառավարիչը ծրագրի այն գլխավոր անձն է, որին Դուք զանգահարում եք Ձեզ հարկավոր օգնությունն ստանալու համար:

Ձեր խնամքի կառավարչին կարող եք զանգահարել հետևյալի համար՝

- Չարցեր Ձեր առողջապահական խնամքի վերաբերյալ
- Չարցեր վարքագծային առողջության (հոգեկան առողջության և թմրանյութի օգտագործման խանգարումների) ծառայություններ ստանալու վերաբերյալ
- Չարցեր ուրիշ ծառայությունների մասին, որոնք կարող են Ձեր առողջությունը բարելավել

Անդամները կարող են խնամքի կառավարչի հետ խոսել կամ իրենց խնամքի կառավարչի փոփոխությունը խնդրել՝ զանգահարելով այս անվճար համարով՝ **1-844-200-0104**: Ձեր L.A. Care Health Plan-ի ապահովագրությունը չի փոխվի, եթե որոշեք մասնակցել կամ չմասնակցել խնամքի կառավարման ծրագրին:

Առողջապահական կրթության ծառայություններ

L.A. Care-ի առողջապահական կրթության ծրագիրը՝ *Health In Motion*™, կարող է օգնել, որ հասնեք Ձեր առողջապահական նպատակակետերին: Մենք բազմաթիվ առողջական վիճակների համար առաջարկում ենք աշխատանքային պարապմունքներ, հեռախոսով խորհրդատվություն և առցանց գործիքներ անգլերենով և իսպաներենով: Ուրիշ լեզուների համար տրամադրելի են բանավոր թարգմանիչներ:



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Չեռախոսազանգ անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

4 | Նպաստներ և ծառայություններ

Առողջապահական նյութերն ընդգրկում են՝

- Ասթմա
- Շաքարախտի կանխարգելում և կառավարում
- Սրտի առողջություն
- Սնուցում և մարզանք
- Ծխելը դադարեցնել
- Զրոնիկ վիճակի աջակցություն

My Health In Motion™-ը L.A. Care-ի առցանց առողջապահական կրթության ծրագիր է: My Health In Motion™-ին մատչեք մուտք գործելով Ձեր L.A. Care Connect անդամի հաշիվ հետևյալ կայքում՝ **members.lacare.org**: Այդտեղից Դուք կարող եք՝

- Լրացնել Առողջության գնահատում և ստանալ անձնականացված քաջառողջության տեղեկագիր
- Կապվել համացանցային առողջապահական դաստիարակի հետ
- Աչքի անցկացնել առողջ կերակրատոմսեր
- Դիտել տեսանյութեր
- Գրանցվել առցանց քաջառողջության աշխատանքային պարապմունքների

L.A. Care-ի այլ առողջապահական կրթության ծրագրեր և աղբյուրներ ընդգրկում են՝

- Հատուկ ծրագրեր մայրերի և մանկիկների համար
- Գրավոր նյութեր Ձեր ցանկացած լեզվով և ձևաչափով
- Համայնքային ուղղորդումներ
- Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ

Բոլոր առողջապահական կրթության ծառայություններն անվճար են: Ավելին իմանալու համար զանգահարեք **1-888-839-9909 (TTY 711)** համարով կամ գնացեք՝

lacare.org/healthy-living/health-resources/health-education կայքը:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Նոր և առկա տեխնոլոգիաների գնահատում

L.A. Care-ը հետևում է առողջական խնամքի բնագավառում զարգացումներին և առաջընթացին՝ ուսումնասիրելով նոր բուժումները, դեղերը, գործողություններն ու սարքերը: Սա նաև կոչվում է «նոր տեխնոլոգիա»: L.A. Care-ը հետևում է նոր տեխնոլոգիայի, որպեսզի անդամների համար երաշխավորի ապահով և արդյունավետ խնամքի մատչելիությունը: L.A. Care-ը նոր տեխնոլոգիան վերանայում է բժշկական և հոգեկան առողջության գործողությունների, դեղագիտական զարգացումների և սարքերի համար: Նոր տեխնոլոգիայի վերանայման խնդրանքները կարող են գալ անդամից, գործնական մասնագետից, կազմակերպությունից, L.A. Care-ի վերանայող բժիշկներից կամ անձնակազմի այլ անդամներից:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

5. Իրավունքներ և պարտավորություններ

Որպես L.A. Care-ի անդամ, Դուք ունեք որոշակի իրավունքներ և պարտավորություններ: Այս գլուխը բացատրում է այդ իրավունքները և պարտավորությունները: Այս գլուխը նաև ներառում է օրինական ծանուցումներ, որոնց իրավունքն ունեք որպես L.A. Care-ի անդամ:

Ձեր իրավունքները

L.A. Care-ի անդամներն ունեն հետևյալ իրավունքները՝

- Արժանանալ հարգալիիր վերաբերումի, պատշաճ ուշադրություն դարձնելով Ձեր գաղտնիության իրավունքին և Ձեր բժշկական տեղեկության գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտության
- 10 րոպեից ավելի չսպասել հաճախորդի սպասարկման ներկայացուցչի հետ խոսելու համար
- Ժամադրություններն ստանալ տրամաբանական ժամանակամիջոցում
- Տեղեկություններ ստանալ ծրագրի և իր ծառայությունների վերաբերյալ, ներառյալ՝ Ապահովագրված ծառայությունները, նրա գործնական մասնագետներն ու մատակարարները և անդամի իրավունքներն ու պարտավորությունները
- Թելադրություններ կատարել կազմակերպության անդամի իրավունքների և պարտավորությունների քաղաքականության վերաբերյալ
- Անկեղծորեն քննարկել Ձեր վիճակների համար պատշաճ և բժշկականորեն անհրաժեշտ բուժման ընտրանքները՝ անկախ ծախսից կամ նպաստի ապահովագրությունից
- Կարողանալ առաջնային խնամքի մատակարար ընտրել L.A. Care-ի ցանցում
- Մասնակցել որոշումների կայացման, ինչ վերաբերում է Ձեր սեփական առողջական խնամքին, ներառյալ՝ բուժումը մերժելու իրավունքը
- Ազատ մտալ ամեն տեսակի հետևանքներից՝ Ձեր խնամքին վերաբերող որոշումներ կայացնելիս
- Որոշել ինչպես եք ցանկանում խնամվել Ձեր կյանքին վտանգ սպառնացող հիվանդություն կամ վնասվածք ստանալու դեպքում
- Բողոքներ, գանգատներ հայտնել կամ բողոքարկել, բանավոր կամ գրավոր եղանակով, կազմակերպության կամ ստացված խնամքի մասին
- Ստանալ խնամքի համակարգում
- Խնդրել բողոքարկումը ծառայությունների կամ նպաստների մերժման, հետաձգման կամ սահմանափակման



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

- Ստանալ անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ Ձեր լեզվի համար
- Ստանալ անվճար գրավոր ծրագրային նյութեր Ձեր լեզվով
- Բողոք կամ գանգատ ներկայացնել Ձեր լեզվական կարիքները չբավարարվելու դեպքում
- Ստանալ անվճար օժանդակ օգնություններ և ծառայություններ
- Ստանալ անվճար օրինական օգնություն Ձեր տեղական օրինական օգնության գրասենյակից կամ ուրիշ խմբերից
- Բանաձևել նախօրոք հրահանգներ
- Խնդրել Նահանգային լսում, ներառյալ՝ տեղեկություն պարագաների մասին, որոնց ներքո հնարավոր է լինում արագացված լսումը
- Ապանդամագրվել՝ այն խնդրելուց հետո: Արագացված ապանդամագրում խնդրելու կարող անդամները ընդգրկում են, առանց դրանցով սահմանափակվելու, նրանք, ովքեր ծառայություններ են ստանում Խնամատուի խնամքի կամ Որդեգրման օգնության ծրագրերի ներքո, ինչպես նաև նրանք, ովքեր ունեն հատուկ առողջական խնամքի կարիքներ
- Մատչելի գտնել Դեռահասների համաձայնությամբ ծառայությունները
- Անդամների իրազեկման գրավոր նյութերն ստանալ այլընտրական ձևաչափերով (ներառյալ՝ բրայլյան այբուբենը, խոշոր տառատեսակը և ձայնագրյալ ձևաչափը) խնդրելու դեպքում և խնդրված ձևաչափին հարմար ժամանակի ընթացքում՝ համաձայն Վեյֆերի և հիմնարկների օրենսգրքի 14182 (b)(12) բաժնի
- Ազատ մտալ որևէ տեսակի կաշկանդումից կամ մեկուսացումից, որը օգտագործվում է որպես հարկադրման, կարգապահության, հարմարության կամ փոխվրեժի միջոց
- Տեղեկություն ստանալ տրամադրելի բուժման ընտրանքների և այլընտրանքների մասին, ներկայացված՝ Ձեր վիճակին և այն հասկանալու Ձեր կարողությանը հարմար եղանակով
- Մատչելի գտնել և ստանալ պատճենը Ձեր բժշկական արձանագրությունների, Եւ խնդրել, որ դրանք փոփոխվեն կամ ուղղվեն, ինչպես հատկորոշվել է Դաշնային կանոնակարգերի 45-րդ Օրենսգրքի §164.524 և 164.526 բաժիններում
- Այս իրավունքները կիրառելու ազատություն՝ առանց բացասապես ազդելու L.A. Care-ի, Ձեր մատակարարների կամ Նահանգի կողմից Ձեր նկատմամբ ցուցաբերված վերաբերումին
- Մատչելի գտնել ընտանիքի ծրագրման ծառայությունները, Անկախ ծննդաբերության կենտրոնները, Դաշնային որակավորումով առողջապահական կենտրոնները, մանկաբարձի ծառայությունները, Գյուղական առողջապահական կենտրոնները, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ծառայությունները և Արտակարգ իրավիճակի ծառայությունները L.A. Care-ի ցանցից դուրս՝ դաշնային օրենքների համաձայն



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Ձեր պարտավորությունները

L.A. Care-ի անդամներն ունեն հետևյալ պարտավորությունները՝

- Քաղաքավարի և հարգալիք վերաբերմունք ցուցաբերել Ձեր բժշկի, բոլոր մատակարարների և անձնակազմի նկատմամբ Պարտավոր եք ժամանակին ներկայանալ Ձեր այցին կամ այցից առնվազն 24 ժամ առաջ զանգահարել բժշկի գրասենյակ՝ այցը չեղյալ հայտարարելու կամ այն վերադասավորելու նպատակով
- Ճշգրիտ տեղեկություն տալ և տալ հնարավորինս շատ տեղեկություն Ձեր բոլոր մատակարարներին և L.A. Care-ին
- Ենթարկվել կանոնավոր բժշկական ստուգումների և տեղեկացնել Ձեր բժշկին Ձեր առողջական խնդիրների մասին՝ նախքան դրանց լրջանալը
- Ձեր բժշկի հետ քննարկել Ձեզ առողջական խնամքի կարիքները, մշակել և համաձայնվել թիրախների շուրջ, անել հնարավոր ամեն բան՝ հասկանալու Ձեր առողջական խնդիրները և հետևել բուժման ծրագրերին և հրահանգներին, որոնց շուրջ համաձայնվել եք երկուսդ
- Առողջական խնամքի խարդախությունը կամ իրավախախտումները տեղեկագրել L.A. Care-ին: Դուք սա կարող եք անել առանց Ձեր անունը տալու՝ զանգահարելով L.A. Care-ի Չամապատասխանության թեժ հեռախոսագծի անվճար համարով՝ **1-800-400-4889**, այցելելով **lacare.ethicspoint.com** կայքը, կամ զանգահարելով Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժին (Department of Health Care Services, DHCS) Medi-Cal-ի Խարդախությունների և չարաշահումների թեժ հեռախոսագծի հետևյալ անվճար համարով՝ **1-800-822-6222**



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Չեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

ԱՅՍ ԾԱՆՈՒՑԱԳԻՐԸ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՁԵՐ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՅԵՏ ԿԱՊՎԱԾ ՁԵՉ ԿԵՐԱԲԵՐՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ, ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԵՎ ԲԱՅԱՅԱՅՏՎԵԼ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ԱՅՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ: **ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴԻՐ ԸՆԹԵՐՑԵԼ:**

Լոս Անջելես վարչաշրջանի Տեղական Նախաձեռնության առողջապահական իշխանությունը (Local Initiative Health Authority for Los Angeles County), մի հանրային եություն, որը գործում և գործարարությամբ է զբաղվում որպես L.A. Care Health Plan (L.A. Care), Ձեր առողջական խնամքի նպաստներն ու ապահովագրությունը մատուցում է Նահանգային, Դաշնային և առևտրական ծրագրերի միջոցով: Ձեր պաշտպանված առողջական տեղեկության (Protected Health Information, PHI) անվտանգ պահպանումը կարևոր է մեզ համար: L.A. Care-ը պարտավոր է Ձեզ տալ այս ծանուցագիրը Ձեր իրավունքների և մի շարք պարտավորությունների մասին՝ անվտանգ պահելու համար Ձեր PHI-ը, ներառյալ՝ Կալիֆորնիա նահանգի գործելակերպի ծանուցագիրը և Առողջական ապահովագրության դյուրակրության և հաշվետվության օրենքի (Health Insurance Portability and Accountability Act, HIPAA) գործելակերպի ծանուցագիրը: Այս ծանուցագիրը բացատրում է, թե ինչպես կարող ենք օգտագործել և կիսել Ձեր PHI-ը: Այն նաև բացատրում է, թե ինչ են Ձեր իրավունքները: Հնարավոր է, որ նահանգային օրենքի ներքո ունենաք հավելյալ կամ ավելի խիստ գաղտնիության իրավունքներ:

I. **Ձեր PHI-ը անձնական և գաղտնի է:**

L.A. Care-ը ստանում է PHI, որը նույնականացնում է Ձեզ, ինչպես՝ Ձեր անունը, կապի տեղեկությունը, անձնական իրողությունները և ֆինանսական տեղեկությունները մի քանի աղբյուրներից, ինչպես՝ Նահանգային, Դաշնային և տեղական գործակալություններից, այն բանից հետո, երբ իրավասու եք դառնում, նշանակվում եք, և/կամ անդամագրվում եք L.A. Care ծրագրին: Մենք նույնպես ստանում ենք Ձեզ վերաբերող PHI, որը Դուք եք տրամադրում մեզ: Նույնպես, մենք PHI ենք ստանում առողջական խնամքի մատակարարներից, ինչպես՝ բժիշկներից, կլինիկաներից, հիվանդանոցներից, լաբորատորիաներից, և ապահովագրության ընկերություններից ու վճարողներից: Մենք այս տեղեկություններն օգտագործում ենք համակարգելու, վավերացնելու, վճարելու և բարելավելու Ձեր առողջական խնամքը, ինչպես նաև հաղորդակցելու Ձեզ հետ: Մենք Ձեր գենետիկական տեղեկությունները չենք կարող օգտագործել որոշելու Ձեզ առողջական խնամքի ապահովագրություն տալը կամ այդ ապահովագրության գինը: Երբեմն, մենք կարող ենք ստանալ Ձեզ վերաբերող ցեղային, ազգային և լեզվական տեղեկություններ: Մենք այս տեղեկությունները կարող ենք օգտագործել Ձեզ օգնելու, Ձեզ հետ հաղորդակցելու և Ձեր կարիքները պարզելու համար, ինչպես՝ Ձեր նախընտրած լեզվով Ձեզ կրթական նյութեր մատուցելը և Ձեզ անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ առաջարկելը: Մենք այս տեղեկություններն օգտագործում և կիսում ենք այնպես, ինչպես ներկայացվում է այս ծանուցագրում: Մենք այս տեղեկությունները չենք օգտագործում որոշելու Ձեզ առողջական խնամքի ապահովագրություն տալը կամ այդ ապահովագրության գինը:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

5 | Իրավունքներ և պարտավորություններ

II. Ինչպես ենք պաշտպանում Ձեր PHI-ը

L.A. Care-ը հանձն է առել պաշտպանել Ձեր PHI-ը: Մենք մեր ընթացիկ և նախկին անդամների PHI-ը պահում ենք գաղտնի և ապահով, ինչպես պահանջվում է օրենքով և հավատարմագրման չափանիշներով: Մենք ֆիզիկական և էլեկտրոնային պաշտպանություններ ենք օգտագործում և մեր անձնակազմը կանոնավորապես մարզվում է PHI-ի օգտագործման և կիսման կապակցությամբ: PHI-ը անվտանգ պահելու մի քանի եղանակներից են գրասենյակների ապահովումը և գրասենյակներն ու թղթածրարների պահարանները կողպելը, համակարգիչներն ու էլեկտրոնային սարքերը գաղտնաբառերով պաշտպանելը, և մատչելի դարձնելը միայն այն տեղեկությունների, որոնք անձնակազմին անհրաժեշտ են իր աշխատանքը կատարելու համար: Որտեղ օրենքն է պահանջում, երբ մեր առևտրական գործընկերները գործում են մեզ հետ, նրանք ևս պարտավոր են պաշտպանել գաղտնիությունը որևէ PHI-ի, որը կիսում ենք նրանց հետ, և նրանց չի թույլատրվում PHI-ը տալ ուրիշների, բացառությամբ օրենքներով և այս ծանուցագրով թույլատրվածների: Ինչպես օրենքն է պահանջում, մենք Ձեզ կիմացնենք Ձեր չափահավասար PHI-ի խախտման դեպքերը: Մենք կիտևենք այս ծանուցագրին և չենք օգտագործի և կիսի Ձեր տեղեկությունները, բացի այս ծանուցագրում նկարագրված եղանակից, կամ Նահանգային և Դաշնային օրենքների ենթարկվելով, կամ ըստ Ձեր արտոնության:

III. Գաղտնիության գործելակերպի այս ծանուցագրի փոփոխությունները

L.A. Care-ը պարտավոր է կառչած մտալ ներկայումս իր օգտագործած ծանուցագրին: Մենք իրավունք ունենք այս գաղտնիության գործելակերպի ծանուցագիրը փոխելու որևէ ժամանակ: Կատարված որևէ փոփոխություն կտարածվի Ձեր բոլոր PHI-երի վրա, ներառած՝ փոփոխությունից առաջ մեր ունեցած տեղեկությունը: Մենք տեղեկատու թերթիկի, նամակի կամ մեր կայքի միջոցով Ձեզ կիմացնենք երբ փոխենք այս ծանուցագիրը: Կարող եք նաև մեզանից խնդրել պատճենը սոր ծանուցագրի. խնդրում ենք ստորև տեսնել մեզ դիմելու եղանակը:

IV. Ինչպես կարող ենք օգտագործել և բացահայտել Ձեզ վերաբերող PHI-ը

L.A. Care-ը հավաքում, օգտագործում և կիսում է PHI-ը, ինչպես թույլատրվում է օրենքով, բուժման, վճարման և առողջական խնամքի գործողությունների համար, որոնք առնչվում են Ձեր անդամագրված ծրագրին: Մեր օգտագործած և կիսած PHI-ը ընդգրկում է, առանց դրանցով սահմանափակվելու՝

- Անուն.
- Հասցե.
- Ստացված խնամք և բուժում.
- Առողջական պատմություն. և
- Խնամքի համար ծախսեր/վճարումը:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Ինչպիսի եղանակներով ենք մենք սովորաբար օգտագործում և կիսում PHI-ը՝

Մենք PHI-ը ընդհանրապես օգտագործում և կիսում ենք հետևյալ եղանակներով՝

- **Բուժում՝ Մենք բուժում չենք մատուցում,** բայց կարող ենք PHI-ը օգտագործել և կիսել առողջական խնամքի և այլ ծառայության մատակարարների հետ, ինչպես՝ բժիշկներ, հիվանդանոցներ, տևական օգտագործման բժշկական սարքեր հայթայթողներ և ուրիշներ՝ Ձեզ խնամք և բուժում և այլ ծառայություններ, ինչպես նաև Ձեզ օգտակար տեղեկություններ առաջարկելու համար:
- **Վճարում՝** Մենք կարող ենք PHI-ը օգտագործել և կիսել առողջական խնամքի մատակարարների, ծառայություններ մատուցողների և այլ ապահովագրողների և վճարողների հետ, ընթացքի մեջ դնելու վճարման խնդրանքներն ու վճարելու Ձեզ մատուցված առողջական ծառայությունների համար:
- **Առողջական խնամքի գործողություններ՝** Մենք կարող ենք PHI-ը օգտագործել և կիսել մեր կազմակերպությունը վարելու և ըստ անհրաժեշտության Ձեզ հետ կապ հաստատելու համար, օրինակ՝ հաշվեքննությունների, որակի բարելավման, խնամքի կառավարման, խնամքի համակարգման և առօրյա գործառույթների համար: Մենք նաև կարող ենք PHI-ը օգտագործել և կիսել Նահանգային, Դաշնային և Վարչաշրջանային ծրագրերի հետ՝ մասնակցության և ծրագրի վարման համար:

PHI-ի օգտագործման եղանակների օրինակներ՝

- Տեղեկություն տալու մի բժշկի կամ հիվանդանոցի, հաստատելու Ձեր նպաստները, համավճարը կամ հանելիները:
- Նախօրոք վավերացնելու խնամքը:
- Ընթացքի մեջ դնելու և վճարելու պահանջները Ձեր ստացած առողջական խնամքի ծառայությունների և բուժման համար:
- Ձեր բժշկին կամ հիվանդանոցին տալու PHI-ը, որպեսզի կարողանան բուժել Ձեզ:
- Վերանայելու Ձեր ստացած խնամքի և ծառայությունների որակը:
- Օգնելու Ձեզ և Ձեզ մատուցելու կրթական և առողջության բարելավման տեղեկություններ և ծառայություններ, ինչպես՝ շաբարախտի նման վիճակների համար:
- Ձեզ տեղեկացնելու հավելյալ ծառայությունների և ծրագրերի մասին, որոնք կարող են Ձեզ հետաքրքրել և/կամ օգնել, ինչպես՝ ամրակազմության դասընթացները L.A. Care-ի Ընտանիքի աղբյուրների կենտրոնում:
- Հիշեցնելու Ձեզ, որ ենթարկվեք կանոնավոր առողջական գնահատումների, գնումների կամ ստուգումների:
- Մշակելու որակի բարելավման ծրագրեր և նախաձեռնություններ, ներառյալ՝ ստեղծումը, օգտագործումը կամ կիսումը ապանույնականացված տվյալների, ինչպես թույլատրվում է HIPAA-ի կողմից:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711:** Այցելեք առցանց՝ **lacare.org**:

5 | Իրավունքներ և պարտավորություններ

- Օգտագործելու և կիսելու տեղեկություններ, ուղղակի կամ անուղղակի կերպով, առողջապահական տեղեկատու կենտրոնների հետ՝ բուժման, վճարման և առողջական խնամքի գործողությունների համար:
- Հետաքննելու և դատելու գործեր, ինչպես՝ խարդախությունը, վատնուժն ու չարաշահումը:

Ուրիշ ինչպիսի եղանակներով կարող ենք օգտագործել և կիսել PHI-ը՝

Մեզ թույլատրվում է կամ մեզանից պահանջվում՝ Ձեր PHI-ը կիսել այլ եղանակներով, սովորաբար մասնակցելու հանրային բարիքին, ինչպես՝ հանրային առողջապահության և հետազոտության: Մենք կարող ենք PHI-ը օգտագործել և կիսել հետևյալ հավելյալ նպատակներով՝

- Ենթարկվելու Նահանգային, Դաշնային և տեղական օրենքների:
- Ենթարկվելու իրավապահ գործակալության մի պահանջի, ինչպես՝ ոստիկանությունը, ռազմական կամ ազգային անվտանգության գործակալությունը, կամ Դաշնային, Նահանգային կամ տեղական ինքնակառավարման գործակալության կամ մարմնի, ինչպես՝ աշխատավորների փոխհատուցման խորհուրդը կամ առողջապահության վերահսկման գործակալությունը, օրենքով լիազորված և դատական կամ վարչական հրահանգով գործունեությունների համար:
- Ընդառաջելու Առողջապահության և մարդու սպասարկման նախարարության, եթե նա ցանկանում է ստուգել, որ ենթարկվում ենք դաշնային գաղտնիության օրենքներին:
- Օգնելու արտադրանքների հետկոչման:
- Տեղեկագրելու դեղամիջոցների անբարենպաստ հակազդեցությունները:
- Տեղեկագրելու կասկածելի չարաշահումը, անտեսումը կամ տնային բռնարարքը, ինչպես պահանջվում կամ թույլատրվում է օրենքի ներքո:
- Առողջապահության և հետազոտության համար:
- Ընդառաջելու օրգանի և հյուսվածքի նվիրման ինդրանքների, և գործակցելու բժշկական քննչի կամ հուղարկավորության տնօրենի հետ:
- Գանգատների, հետաքննությունների, դատավարությունների և օրինական գործողությունների կապակցությամբ:
- Կանխարգելելու կամ մեղմացնելու որևէ անձի առողջության կամ անվտանգության ուղղված լուրջ սպառնալիքը:

Ձեզ հետ հաղորդակցելը

Մենք PHI-ը կարող ենք օգտագործել հաղորդակցելու Ձեզ կամ Ձեր նշանակած անձի հետ՝ Ձեր նպաստների, ծառայությունների, Ձեր առողջական խնամքի մատակարարի ընտրության և վճարելի հաշիվների և վճարումների մասին: L.A. Care-ը Ձեզ հետ հաղորդակցելիս կենթարկվի կիրառելի օրենքներին, ներառյալ՝ Հեռախոսի սպառողի պաշտպանության ՕՐԵՆԸԸ



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):** L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

(Telephone Consumer Protection ACT, TCPA): Մենք Ձեզ հետ կարող ենք հաղորդակցել նամակների, տեղեկատու թերթիկների, գրքույկների միջոցով, և ըստ հետևյալի՝

- **Յեռախոսագրություններ:** Եթե Ձեր հեռախոսի համարը տվել եք մեզ (ներառյալ՝ եթե ինսամատարը կամ նշանակված անձը տվել է իր հեռախոսի համարը), ներառյալ՝ Ձեր բջջային հեռախոսի համարը, ապա մենք, ինչպես նաև մեր գործակիցներն ու ենթակապալառուները մեր անունից, կարող ենք զանգահարել Ձեզ, այդ թվում և օգտագործելով հեռախոսով զանգահարելու ինքնաշխատ համակարգ/կամ արհեստական ձայն, կիրառելի օրենքների համաձայն: Ձեր դյուրակիր բջջային հեռախոսի ընկերությունը թերևս գանձում կատարի Ձեր ստացած զանգերի համար. ինդրում ենք այս տեղեկության համար դիմել Ձեր բջջային հեռախոսի ընկերության: Եթե չեք ցանկանում, որ Ձեզ հետ կապ հաստատվի այս եղանակով, ինդրում ենք զանգահարողին իմացնել, կամ դիմել մեզ՝ մեր Մի զանգահարեք (Do Not Call) ցուցակում ընդգրկվելու համար:
- **Տեքստային հաղորդակցություն:** Եթե Ձեր հեռախոսի համարը տվել եք մեզ (ներառյալ՝ եթե ինսամատարը կամ նշանակված անձը տվել է իր հեռախոսի համարը), ապա որոշակի նպատակներով, ինչպես՝ հիշեցումները, բուժման ընտրանքները, ծառայությունները և ապահովագրի վճարման հիշեցումները կամ հաստատումները, մենք, ինչպես նաև մեր գործակիցներն ու ենթակապալառուները մեր անունից, կարող ենք տեքստ ուղարկել Ձեզ, կիրառելի օրենքների համաձայն: Ձեր դյուրակիր բջջային հեռախոսի ընկերությունը թերևս գանձում կատարի Ձեր ստացած տեքստերի համար, ինդրում ենք այս տեղեկության համար դիմել Ձեր բջջային հեռախոսի ընկերության: Եթե որևէ ժամանակ չեք ցանկանում տեքստային պատգամներ ստանալ, ապա ինդրում ենք հետևել պատգամի ապաբաժանորդագրման տեղեկության, կամ ինդրում ենք պատասխանել «ԴԱԴԱՐԵՑՆԵԼ» (STOP), որպեսզի այնուհետև չստանաք այդպիսի պատգամներ:
- **Էլեկտրոնային փոստ:** Եթե Ձեր էլ. փոստի հասցեն տվել եք մեզ (ներառյալ՝ եթե ինսամատարը կամ նշանակված անձը տվել է իր էլ. փոստի հասցեն), ապա մի շարք սահմանափակ նպատակներով, ինչպես՝ Ձեզ անդամագրումներ, անդամի, մատակարարի և կրթական նյութեր ուղարկելը, կամ հիշեցումները կամ վճարման հաստատումները, եթե համաձայնվեք էլեկտրոնային միջոցով ստանալ դրանք, ապա մենք կարող ենք էլ. փոստ ուղարկել Ձեզ: Ջնարավոր է, որ Ձեր համացանցի կամ էլ. փոստի կամ բջջային հեռախոսի ընկերությունը գանձում կատարի Ձեզանից՝ էլ. փոստ ընդունելու համար. ինդրում ենք այս տեղեկության համար դիմել Ձեր համացանցի կամ էլ. փոստի կամ բջջային հեռախոսի ընկերության: Դուք հաստատում և համաձայնվում եք, որ եթե օգտագործեք էլ. փոստի հասցե և/կամ համակարգիչ, կամ եթե Ձեր էլ. փոստին մատչեք դյուրակիր սարքով, կամ կիսեք մի էլ. փոստ, կամ համակարգիչ, կամ բջջային հեռախոս, ապա առկա է վտանգ, որ Ձեր PHI-ը ընթերցի մի երրորդ կողմ և Դուք ընդունում եք այդպիսի վտանգը և հրաժարվում եք օրենքի ներքո Ձեր ունեցած որևէ պաշտպանությունից: Եթե որևէ ժամանակ չեք ցանկանում էլ. փոստով պատգամներ ստանալ, ապա ինդրում ենք հետևել պատգամի ներքևը գտնվող «Ապաբաժանորդագրեք» (Unsubscribe) հրահանգներին, որպեսզի այնուհետև չստանաք էլ. փոստով հաղորդակցություններ:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
 L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Յեռախոսագրանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711:** Այցելեք առցանց՝ **lacare.org**:

5 | Իրավունքներ և պարտավորություններ

V. Գրավոր արտոնություն

Եթե ցանկանաք Ձեր PHI-ը օգտագործել կամ կիսել որևէ նպատակով, որը չի նշվել այս ծանուցագրում, այդ դեպքում մենք կստանանք Ձեր գրավոր արտոնությունը: Օրինակ, շուկայահանման կամ վաճառքի կարիքների նպատակով PHI-ի օգտագործումը կամ կիսումը պահանջում է Ձեր գրավոր արտոնությունը: Եթե օգտագործենք կամ կիսենք հոգեբուժական գրառումներ, նույնպես թերևս մեզ հարկավոր լինի Ձեր արտոնությունը: Ձեր արտոնությունը մեզ տալու դեպքում այն գրավոր կարող էք ջնջել որևէ ժամանակ, և մենք այդ նպատակով Ձեր խնդրանքն ընթացքի մեջ դնելու թվականից հետո չենք օգտագործի կամ կիսի Ձեր PHI-ը: Սակայն եթե արդեն օգտագործել կամ կիսել ենք Ձեր PHI-ը Ձեր արտոնությամբ, ապա մենք չենք կարողանա չեղարկել որևէ գործողություն, որը կատարվել է Ձեր արտոնությունը ջնջելուց առաջ:

VI. Ձեր իրավունքները

Դուք Ձեր PHI-ի և նրա օգտագործման կամ կիսման վերաբերյալ ունեք որոշակի իրավունքներ: Դուք իրավունք ունեք՝

- **Ստանալու Ձեր առողջական և հայցերի արձանագրությունների պատճենը:** Կարող եք խնդրել, որ տեսնեք կամ ստանաք պատճենը Ձեր PHI-ի: Մենք Ձեր առողջության և հայցերի արձանագրությունների պատճենը կամ ամփոփումը կտանք Ձեզ: Հնարավոր է, որ մենք չբացահայտենք մի շարք տեղեկություններ և արձանագրություններ, ինչպես օրենքն է թույլատրում, կամ չկարողանանք տալ որոշակի տեղեկություն մի շարք ձևերով, ձևաչափերով կամ մեդիայով: Թերևս տրամաբանական վճար գանձենք Ձեր PHI-ի կրկնօրինակման և փոստով առաքման համար:

L.A. Care-ը Ձեր բժշկական արձանագրությունների ամբողջական պատճենը չի պահում, խնդրում ենք դիմել Ձեր առողջական խնամքի մատակարարին, եթե ցանկանում եք աչքի անցկացնել կամ ստանալ պատճենը Ձեր բժշկական արձանագրությունների, կամ փոխել նրանցում գտնվող մի սխալ:

- **Մեզանից խնդրելու, որ ուղղենք առողջական և հայցերի արձանագրությունները:** Եթե համոզված եք, որ Ձեր PHI-ում կա մի սխալ, կարող եք մեզանից խնդրել, որ ուղղենք այն: Հնարավոր է, որ լինեն մի շարք տեղեկություններ, որոնք չկարողանանք փոխել, օրինակ՝ բժշկի ախտորոշումը, և մենք դա գրավոր կիմացնենք Ձեզ: Եթե մեկ ուրիշն է տեղեկությունը սովել մեզ, օրինակ՝ Ձեր բժիշկը, ապա մենք Ձեզ կիմացնենք, որպեսզի նրանից խնդրեք դրա ուղղումը:
- **Խնդրելու, որ գաղտնորեն հաղորդակցենք Ձեզ հետ:** Կարող եք մեզանից խնդրել, որ Ձեզ հետ շփվենք մի որոշակի եղանակով (օրինակ՝ տան կամ գրասենյակի հեռախոսով) կամ նամակներն առաքենք տարբեր հասցեով: Ոչ բոլոր խնդրանքներին հնարավոր կլինի համաձայնել, սակայն կընդառաջենք տրամաբանական խնդրանքի, օրինակ՝ եթե հայտնեք, որ վտանգի կենթարկվեք եթե այդպես չանենք:
- **Խնդրելու, որ սահմանափակենք այն, ինչ օգտագործում կամ կիսում ենք:** Կարող եք մեզանից խնդրել, որ չօգտագործենք կամ չկիսենք որոշակի առողջական տեղեկություններ բուժման, վճարման կամ մեր գործողությունների համար: Ըստ օրենքի, մենք պարտավոր



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):** L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

չենք համաձայնվել Ձեր խնդրանքին, և կարող ենք «ոչ» ասել, եթե այն կազդի Ձեր խնամքին, պահանջների վճարման, գլխավոր գործողությունների, կամ չի համապատասխանում կանոնների, կանոնակարգերի կամ կառավարական գործակալության, կամ իրավապահական խնդրանքների, կամ դատարանի կամ վարչական հրահանգի:

- **Ստանալու ցուցակը նրանց, ում հետ կիսել ենք Ձեր PHI-ը:** Կարող եք մեզանից խնդրել ցուցակը (հաշվարկը), թե երբ ենք կիսել Ձեր առողջական տեղեկությունները, ում հետ ենք կիսել, և դրդապատճառների ամփոփ նկարագրությունը: Մենք Ձեզ կտանք ցուցակը Ձեր խնդրած ժամանակահատվածի համար: Ըստ օրենքի, մենք ցուցակը կտանք Ձեր գրավոր խնդրանքի ամսաթվին նախորդող առավելագույնը վեց (6) տարիների: Մենք կընդգրկենք բոլոր բացահայտումները բուժման, վճարման և առողջական խնամքի գործողությունների համար, և որոշակի այլ բացահայտումների, ինչպես՝ երբ տեղեկությունները կիսել ենք Ձեզ հետ, կամ Ձեր արտոնությամբ: Մենք կտանք տարեկան մեկ անվճար համարատվություն, բայց կարող ենք տրամաբանական վճար գանձել որևէ հավելյալ խնդրանքի համար:
- **Ստանալու պատճենը այս գաղտնիության ծանուցագրի:** Կարող եք այս ծանուցագրի թղթյա պատճենն ստանալ զանգահարելով մեզ:
- **Ընտրելու մի անձի, որ գործի Ձեր անունից:** Եթե ինչ-որ անձի բժշկական լիազորագիր եք տվել կամ ինչ-որ անձ Ձեր օրինավոր խնամակալն է, այդ անձը կարող է Ձեր իրավունքները գործադրել և ընտրանքներ կատարել Ձեր PHI-ի վերաբերյալ: Կարող ենք խնդրել, որ Դուք կամ Ձեր նշանակած անձը մի շարք տեղեկություններ կամ փաստաթղթեր տաք մեզ, օրինակ՝ խնամակալությունը շնորհող դատարանի հրահանգի պատճենը: Դուք կամ Ձեր խնամակալը պարտավոր կլինեք լիազորագիր լրացնել. խնդրում ենք դիմել մեզ ստորև նշված համարով՝ իմանալու համար դա անելու կերպը:

Խնդրում ենք զանգահարել մեզ Ձեր ճանաչողական քարտի վրա գտնվող համարով, կամ գրել մեզ՝ պարզելու համար ինչպես խնդրել վերոհիշյալը: Պարտավոր կլինեք Ձեր խնդրանքը գրավոր ներկայացնել և որոշակի տեղեկություններ հայտնել մեզ: Կարող ենք ձևաթուղթ(եր)ը ուղարկել Ձեզ:

VII. Գանգատներ

Եթե գտնում եք, որ չենք պաշտպանել Ձեր PHI-ը, իրավունք ունեք գանգատ ներկայացնելու մեր դեմ, ըստ հետևյալի դիմելով մեզ՝

L.A. Care Member Services
1055 West 7th Street, 10th Floor
Los Angeles, CA 90017
Հեռախոս՝ **1-888-839-9909**
TTY/TDD **711**



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):** L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

5 | Իրավունքներ և պարտավորություններ

Կարող եք նաև դիմել այստեղ՝

U.S. Department of Health and Human Services
Office for Civil Rights
Attention: Regional Manager
90 7th Street, Suite 4-100
San Francisco, CA 94103
Չեռախոս՝ **1-800-368-1019**
Ֆաքս՝ 1-415-437-8329
TTY/TDD **1-800-537-7697**
hhs.gov/ocr/privacy/hipaa/complaints/

Medi-Cal-ի Անդամները կարող են նաև դիմել այստեղ՝

California Department of Health Care Services
Office of HIPAA Compliance
Privacy Officer
1501 Capitol Avenue, MS0010
P.O. Box 997413
Sacramento, CA 95899-7413
dhcs.ca.gov

VIII. Ձեր իրավունքներն օգտագործեք առանց վախի

L.A. Care-ը ոչ մի քայլի չի դիմի Ձեր դեմ՝ այս ծանուցագրի գաղտնիության իրավունքներից օգտվելու կամ գանգատ ներկայացնելու պատճառով:

IX. Գործուն ամսաթիվ

Այս ծանուցագրի սկզբնական գործուն ամսաթիվն է՝ ապրիլի 14, 2003: Այս ծանուցագրի վերջին վերամշակումը կատարվել է հոկտեմբերի 1, 2019 թվին:

X. Մեզ դիմելը, կամ Չարցեր, կամ եթե այս ծանուցագիրը ցանկանում եք ուրիշ լեզվով կամ ձևաչափով՝

Եթե հարցեր ունեք այս ծանուցագրի վերաբերյալ, կամ Ձեր իրավունքների կիրառման համար օգնություն եք ցանկանում, կամ այս ծանուցագիրն ուզում եք անվճար ստանալ տարբեր լեզվով (արաբերեն, հայերեն, չինարեն, պարսկերեն, իսպաներեն, կորեերեն, ռուսերեն, իսպաներեն, տազալերեն կամ վիետնամերեն), խոշոր տպատառերով, ձայնագրված, կամ այլընտրական ձևաչափով (խնդրվելուց հետո), խնդրում ենք զանգահարել կամ գրել մեզ ըստ հետևյալի՝

L.A. Care Member Services
1055 West 7th Street, 10th Floor
Los Angeles, CA 90017
Չեռախոս՝ **1-888-839-9909**
TTY/TDD **711**



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Չեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

կամ

L.A. Care Privacy Officer

L.A. Care Health Plan

1055 West 7th Street, 10th Floor

Los Angeles, CA 90017

Օրենքների մասին ծանուցագիր

Շատ օրենքներ են կիրառվում այս Անդամի տեղեկագրի նկատմամբ: Այս օրենքները կարող են ազդել Ձեր իրավունքների և պարտավորությունների վրա, նույնիսկ եթե օրենքներն այս տեղեկագրում չեն ներառված կամ չեն բացատրված: Այս տեղեկագրին վերաբերող հիմնական օրենքները Medi-Cal ծրագրերին վերաբերող նահանգային և դաշնային օրենքներն են: Այլ դաշնային և նահանգային օրենքներ նույնպես կարող են կիրառվել:

Ծանուցագիր Medi-Cal-ի՝ որպես վերջին ելքի վճարողի վերաբերյալ

Երբեմն մեկ ուրիշը պարտավոր է վճարել նախ ծառայությունների համար, որոնք L.A. Care-ն է մատուցում Ձեզ: Օրինակ, եթե դուք մեքենայի վթարի եք ենթարկվել կամ փասսվածք եք ստացել աշխատանքային վայրում, ապահովագրական ընկերությունը կամ Աշխատավորների փոխհատուցումը պետք է առաջինը վճարի:

DHCS-ը իրավունք և պարտավորություն ունի գումարը գանձելու ապահովագրված Medi-Cal-ի ծառայությունների համար, որոնց համար Medi-Cal-ը չէ առաջին վճարողը: Եթե փասսվել եք և մեկ ուրիշն է պատասխանատու փասսվածքի համար, Դուք կամ Ձեր օրինական ներկայացուցիչը պարտավոր եք DHCS-ին տեղեկացնել օրինական գործողության կամ հայցի դիմելուց հետո 30 օրվա ընթացքում: Ձեր ծանուցագիրը առցանց ներկայացրեք հետևյալին՝

- Անձնական փասսվածքի ծրագիր (Personal Injury Program) հետևյալ կայքում՝ dhcs.ca.gov/PI
- Աշխատավորների փոխհատուցման վերականգնման ծրագիր (Workers Compensation Recovery Program) հետևյալ կայքում՝ dhcs.ca.gov/WC

Ավելին իմանալու համար զանգահարեք **1-916-445-9891** համարով:

Medi-Cal ծրագիրը ենթարկվում է նահանգային և դաշնային օրենքներին և կանոնակարգերին, որոնք վերաբերում են նպաստ ստացող անձանց առողջական խնամքի համար երրորդ կողմի իրավական պարտավորություններին: L.A. Care-ը կդիմի բոլոր տրամաբանական միջոցներին՝ վստահ լինելու, որ Medi-Cal ծրագիրը լինում է վերջին ելքի վճարողը:



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ lacare.org:

5 | Իրավունքներ և պարտավորություններ

Դուք պետք է դիմեք նահանգի կողմից վճարվող ապահովագրության կամ Ձեզ անվճար տրամադրելի ուրիշ առողջական ապահովագրության (Other Health Coverage, OHC) և պահեք այն: Եթե չդիմեք անվճար կամ նահանգի կողմից վճարվող OHC-ի և չպահեք այն, Ձեր Medi-Cal-ի նպաստները և/կամ իրավասությունը կարող է մերժվել կամ դադարեցվել: Եթե անմիջապես չտեղեկագրեք Ձեր OHC-ի փոփոխությունները և այդ իսկ պատճառով ստանաք Medi-Cal-ի նպաստներ, որոնց իրավասու չեք, թերևս հարկադրվեք գումարը վերադարձնել DHCS-ին:

Ծանուցագիր անշարժ գույքի միջոցով վճարված գումարի վերադարձման վերաբերյալ

Medi-Cal ծրագիրը պարտավոր է կատարված վճարումների համար պահանջել վերադարձվելը գումարների Medi-Cal-ի որոշակի մահացած անդամների ունեցվածքից, ներառյալ՝ կառավարվող խնամքի ապահովագները, բուժֆուլյական հաստատության ծառայությունները, տանը մատուցվող և համայնքային հիմքով ծառայությունները, ինչպես նաև առնչակից հիվանդանոցի և դեղատոմսային դեղերի ծառայությունները, որոնք մատուցվել են Medi-Cal-ի մահացած անդամին՝ անդամի 55 տարեկան դառնալու օրը կամ նրանից հետո: Եթե մահացած անդամը չի թողել ունեցվածք կամ մահվան պահին ոչինչ չունի, այդ դեպքում ոչ մի պարտք չի լինի:

Մահացած անձի ունեցվածքից գումարի վերադարձվելու մասին ավելին իմանալու համար զանգահարեք **1-916-650-0490** համարով: Կամ ձեռք բերեք օրինական խորհուրդ:

Գործողության ծանուցագիր

L.A. Care-ը Ձեզ Գործողության ծանուցագրի (Notice of Action, NOA) նամակ կուղարկի ամեն անգամ, որ L.A. Care-ը մերժի, ուշացնի, դադարեցնի կամ բարեփոխի առողջական խնամքի ծառայությունների համար խնդրանքը: Եթե դուք չհամաձայնվեք ծրագրի որոշման հետ, կարող եք միշտ L.A. Care-ին բողոքարկում ներկայացնել:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

6. ԽՆՈՒՄՆԵՐԻ ԽԱՂՈՐՈՒՄ և ԼՈՒԾՈՒՄ

Կան երկու տեսակի խնդիրներ, որոնք կարող եք ունենալ L.A. Care-ի հետ՝

- **Գանգատը** (կամ բողոքը) այն է, երբ խնդիր ունեք L.A. Care-ի կամ մատակարարի հետ, կամ մատակարարից ստացած Ձեր առողջական խնամքի կամ բուժման հետ
- **Բողոքարկումը** այն է, երբ համաձայն չեք Ձեր ծառայությունները չապահովագրելու կամ փոխելու L.A. Care-ի որոշման

Կարող եք օգտվել L.A. Care-ի բողոքների և բողոքարկումների գործընթացից՝ Ձեր խնդիրը մեզ իմացնելու համար: Սա Ձեզանից չի խլի Ձեր օրինական իրավունքներից կամ դարմաններից որևէ մեկը: Մենք խտրականություն չենք բանեցնի կամ փոխվրեժի չի դիմի Ձեր դեմ՝ մեզ գանգատվելու պատճառով: Ձեր խնդրի մասին մեզ տեղյակ պահելը կօգնի, որ բարելավենք խնամքը բոլոր անդամների համար:

Պարտավոր եք միշտ նախ L.A. Care-ի հետ կապ հաստատել՝ մեզ իմացնելու Ձեր խնդիրը: Չանգահարեք մեզ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը **1-888-839-9909 (TTY 711)** համարով, Ձեր խնդիրը մեզ հայտնելու համար: Սա Ձեզանից չի խլի Ձեր օրինական իրավունքներից որևէ մեկը: L.A. Care-ը նույնպես խտրականություն չի բանեցնի կամ փոխվրեժի չի դիմի Ձեր դեմ՝ մեզ գանգատվելու պատճառով: Ձեր խնդրի մասին մեզ տեղյակ պահելը կօգնի, որ բարելավենք խնամքը բոլոր անդամների համար:

Եթե Ձեր բողոքը կամ բողոքարկումը դեռևս չի լուծվել, կամ եթե դժգոհ եք արդյունքից, կարող եք գանգահարել Կալիֆորնիայի Կառավարվող առողջական խնամքի բաժին (Department of Managed Health Care, DMHC) **1-888-HMO-2219 (TTY 1-877-688-9891)** համարով:

Կալիֆորնիայի Առողջական խնամքի սպասարկման բաժնի (DHCS) Medi-Cal-ի Կառավարվող խնամքի Օմբուդսմանը ևս կարող է օգնել: Նրանք կարող են օգնել, եթե դժվարություն ունեք միանալու, փոխելու կամ հեռանալու առողջապահական ծրագրից: Նրանք նաև կարող են օգնել, եթե հեռացել եք և դժվարություն ունեք Ձեր Medi-Cal-ը Ձեր նոր վարչաշրջան փոխանցելու կապակցությամբ: Օմբուդսմանին կարող եք գանգահարել երկուշաբթիից ուրբաթ, կ.ա. 8:00-ից մինչև կ.հ. 5:00-ը, **1-888-452-8609** համարով:

Կարող եք նաև Ձեր վարչաշրջանի իրավասության գրասենյակին բողոք ներկայացնել Ձեր Medi-Cal-ի իրավասության վերաբերյալ: Եթե վստահ չեք, թե ում կարող եք ներկայացնել Ձեր բողոքը, գանգահարեք L.A. Care **1-888-839-9909 (TTY 711)** համարով և մենք կօգնենք Ձեզ:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսագանգն անվճար է: Կամ գանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

6 | Խնդիրների հաղորդում և լուծում

- Ձեր հավելյալ առողջապահական ծրագրին վերաբերող սխալ տեղեկության մասին հաղորդելու համար գանգահարեք Medi-Cal երկուշաբթիից ուրբաթ կ.ա. 8:00-ից մինչև կ.հ. 5:00-ը **1-800-541-5555** համարով:

Գանգատներ

Գանգատը (կամ բողոքը) այն է, երբ Դուք ունեք մի խնդիր կամ դժգոհ եք L.A. Care-ից կամ մատակարարից Ձեր ստացած ծառայություններից: Գանգատ ներկայացնելու համար չկա ժամանակային սահմանափակում: Մեզ գանգատ կարող եք ներկայացնել որևէ ժամանակ հեռախոսով, գրավոր կամ առցանց:

- **Յեռախոսով՝** Զանգահարեք L.A. Care **1-888-839-9909** (TTY **711**) համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Տվեք Ձեր անդամի ճանաչողական համարը, Ձեր անունը և Ձեր գանգատի դրդապատճառը:
- **Փոստով՝** Զանգահարեք L.A. Care **1-888-839-9909** (TTY **711**) համարով և խնդրեք, որ ձևաթուղթը փոստով ուղարկեն Ձեզ: Ձևաթուղթն ստանալուց հետո, լրացրեք այն: Անպայման ընդգրկեք Ձեր անունը, անդամի ճանաչողական համարը և Ձեր գանգատի դրդապատճառը: Մեզ հայտնեք, թե ինչ է պատահել և ինչպես կարող ենք օգնել Ձեզ:

Ձևաթուղթը փոստով առաքեք այստեղ՝

L.A. Care Health Plan
Appeal and Grievance Department
1055 West 7th Street, 10th Floor
Los Angeles, CA 90017

Ֆաքսով՝ 213-438-5748

Ձեր բժշկի գրասենյակը իր տրամադրության ներքո կունենա գանգատի ձևաթղթեր:

- **Առցանց՝** Այցելեք L.A. Care-ի կայքը: Գնացեք՝ **lacare.org**:

Եթե գանգատի լրացման համար օգնության կարիք ունեք, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք անվճար լեզվական ծառայություններ մատուցել Ձեզ: Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909** (TTY **711**):

Ձեր գանգատը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում L.A. Care-ը նամակ կուղարկի Ձեզ՝ իմացնելով, որ ստացել ենք այն: 30 օրվա ընթացքում, մենք Ձեզ կուղարկենք մի ուրիշ նամակ, որը կհայտնի, թե ինչպես ենք լուծել Ձեր խնդիրը: Եթե L.A. Care գանգահարեք մի բողոքի մասին, որը չի վերաբերում առողջական խնամքի ապահովագրության, բժշկական անհրաժեշտության, փորձական կամ հետազոտական բնույթ ունեցող բուժման, և Ձեր բողոքը լուծվում է մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, հնարավոր է, որ նամակ չստանաք:



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Յեռախոսազանգն անվճար է: Կամ գանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Եթե ցանկանում եք, որ L.A. Care-ը կայացնի արագ որոշում, քանի որ Ձեր գանգատի լուծման համար պահանջված ժամանակը Ձեր կյանքը, առողջությունը կամ գործելու կարողությունը վտանգի կենթարկի, կարող եք արագացված (արագ) վերանայում խնդրել: Արագացված վերանայում խնդրելու համար գանգահարեք մեզ **1-888-839-9909 (TTY 711)** համարով: Մենք որոշում կկայացնենք Ձեր գանգատն ստանալուց հետո 72 ժամից:

Բողոքարկումներ

Բողոքարկումը տարբեր է գանգատից: Բողոքարկումը մի խնդրանք է, որ L.A. Care-ը վերանայի և փոխի մի որոշում, որը մենք կայացրել ենք խնդրված ծառայության ապահովագրման վերաբերյալ: Եթե Ձեզ ուղարկել ենք Գործողության ծանուցագրի (NOA) նամակ, Ձեզ հայտնելով, որ մերժում, ուշացում, փոխում կամ դադարեցնում ենք մի ծառայություն, և դուք համաձայն չգտնվեք մեր որոշման, կարող եք բողոքարկել: Ձեր PCP-ը ևս կարող է բողոքարկել Ձեր անունից՝ Ձեր գրավոր արտոնությամբ:

Բողոքարկումը պետք է ներկայացնեք NOA-ի ստացման ամսաթվին հաջորդող 60 օրացուցային օրերի ընթացքում: Եթե ներկայումս բուժում եք ստանում և ուզում եք շարունակել բուժման ստացումը, ապա պարտավոր եք բողոքարկումը խնդրել 10 օրացուցային օրից՝ սկսած NOA-ն Ձեզ հանձնելու ամսաթվից, կամ նախքան այն ամսաթիվը, երբ L.A. Care-ը հայտնում է, որ ծառայությունները կդադարեցվեն: Բողոքարկում խնդրելիս, խնդրում ենք մեզ հայտնել, որ ցանկանում եք շարունակել ծառայությունների ստացումը:

Բողոքարկումը կարող եք ներկայացնել հեռախոսով, գրավոր, կամ առցանց՝

- **Յեռախոսով՝** Չանգահարեք L.A. Care **1-888-839-9909 (TTY 711)** համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը: Նշեք Ձեր անունը, անդամի ճանաչողական համարը և Ձեր բողոքարկած ծառայությունը:
- **Փոստով՝** Չանգահարեք L.A. Care **1-888-839-9909 (TTY 711)** համարով և խնդրեք, որ ձևաթուղթը փոստով ուղարկեն Ձեզ: Ձևաթուղթն ստանալուց հետո, լրացրեք այն: Անպայման ընդգրկեք Ձեր անունը, անդամի ճանաչողական համարը և Ձեր բողոքարկած ծառայությունը:

Ձևաթուղթը փոստով առաքեք այստեղ՝

L.A. Care Health Plan
 Appeal and Grievance Department
 1055 West 7th Street, 10th Floor
 Los Angeles, CA 90017

Ֆաքսով՝ 213-438-5748

Ձեր բժշկի գրասենյակի մոտ կգտնվեն բողոքարկման տրամադրելի ձևաթղթեր:

- **Առցանց՝** Այցելեք L.A. Care-ի կայքը: Գնացեք՝ **lacare.org**:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Յեռախոսազանգն անվճար է: Կամ Չանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

6 | Խնդիրների հաղորդում և լուծում

Եթե բողոքարկման լրացման համար օգնության կարիք ունեք, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք անվճար լեզվական ծառայություններ մատուցել Ձեզ: Չանգահարեք L.A. Care **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում L.A. Care-ը նամակ կուղարկի Ձեզ՝ իմացնելով, որ ստացել ենք այն: 30 օրվա ընթացքում Ձեզ կհայտնենք Ձեր բողոքարկման որոշումը:

Եթե Դուք կամ Ձեր բժիշկը ցանկանում եք, որ մենք կայացնենք արագ որոշում, քանի որ Ձեր բողոքարկման լուծման համար պահանջված ժամանակը Ձեր կյանքը, առողջությունը կամ գործելու կարողությունը վտանգի կենթարկի, կարող եք արագացված (արագ) վերանայում խնդրել: Արագացված վերանայում խնդրելու համար զանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով: Մենք որոշում կկայացնենք Ձեր բողոքարկումն ստանալուց հետո 72 ժամից:

Ինչ անել բողոքարկման որոշման համաձայն չլինելու դեպքում

Եթե բողոքարկում եք ներկայացրել և ստացել եք նամակ L.A. Care-ից, որը Ձեզ հայտնում է, որ մենք չենք փոխել մեր որոշումը, կամ երբեք չեք ստացել մեր որոշումը հայտնող նամակ և անցել է 30 օր, կարող եք՝

- **Նահանգային լսում** խնդրել Սոցիալական ծառայությունների բաժնից (Department of Social Services, DSS) և մի դատավոր կվերանայի Ձեր գործը:
- **Անկախ բժշկական վերանայում (Independent Medical Review, IMR)** խնդրել DMHC-ից և մի արտաքին վերանայող, ով մաս չի կազմում L.A. Care-ին, կվերանայի Ձեր գործը:

Դուք ոչ մի վճարում չեք կատարի Նահանգային լսումի կամ IMR-ի համար:

Կարող եք միաժամանակ և՛ Նահանգային լսում, և՛ IMR խնդրել: Սակայն եթե նախ Նահանգային լսում խնդրեք և լսումը արդեն իսկ անցկացված լինի, Դուք չեք կարող IMR խնդրել: Այս դեպքում վերջնական խոսքը պատկանում է Նահանգային լսումին:

Ներքևի բաժինները Ձեզ հավելյալ տեղեկություն կտան Նահանգային լսում կամ IMR խնդրելու կերպի մասին:

Բժշկական անկախ վերանայումներ (IMR)

IMR-ը տեղի է ունենում երբ առողջապահական ծրագրի հետ կապ չունեցող մի արտաքին վերանայող վերանայում է Ձեր գործը: IMR ցանկանալու դեպքում, նախ բողոքարկում պետք է ներկայացնեք L.A. Care-ին: Ձեր առողջապահական ծրագրից 30 օրացուցային օրվա ընթացքում չլսելու դեպքում, կամ եթե դժգոհ եք Ձեր առողջապահական ծրագրի որոշումից, կարող եք IMR խնդրել: IMR-ը պարտավոր եք խնդրել բողոքարկման որոշումը Ձեզ ծանուցող նամակի ամսաթվին հաջորդող 6 ամսում:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Թերևս կարողանաք IMR ստանալ անմիջապես՝ առանց նախ բողոքարկում ներկայացնելու: Սա պատահում է այնպիսի դեպքերում, երբ Ձեր առողջությունը գտնվում է անմիջական վտանգի ներքո:

Հետևյալը ներկայացնում է IMR խնդրելու կերպը: «Բողոք» բառը վերաբերում է և՛ «գանգատներին», և՛ «բողոքարկումներին»:

Կալիֆորնիայի Կառավարվող առողջական խնամքի բաժինը պատասխանատու է առողջապահական ծրագրերի կարգավորման համար: Եթե Ձեր առողջապահական ծրագրի դեմ բողոք ունեք, ապա, նախքան բաժին դիմելը, պետք է գանգահարեք Ձեր առողջապահական ծրագիր **1-888-839-9909** (TTY **711**) համարով և օգտագործեք Ձեր առողջապահական ծրագրի բողոքի գործընթացը: Բողոքի այս գործընթացից օգտվելը չի արգելի որևէ հնարավոր օրինական իրավունք կամ միջոց, որը կարող է տրամադրելի լինել Ձեզ: Արտակարգ իրավիճակի հետ կապված բողոքի, Ձեր առողջապահական ծրագրի կողմից անբավարար լուծում ստացած բողոքի կամ 30 օրվա ժամկետում չլուծված բողոքի կապակցությամբ օգնության համար կարող եք գանգահարել բաժին: Կարող եք նաև Անկախ բժշկական վերանայման (IMR) իրավասու լինել: Եթե իրավասու եք IMR-ի համար, IMR-ի գործընթացը անկողմնակալորեն կվերանայի առողջապահական ծրագրի կայացրած որոշումները, որոնք վերաբերում են առաջարկվող ծառայության կամ բուժման բժշկական անհրաժեշտությանը, փորձական կամ հետազոտական բնույթ ունեցող բուժումների վերաբերյալ ապահովագրական որոշումներին, և արտակարգ իրավիճակների կամ հրատապ բժշկական ծառայությունների համար վճարումների վերաբերյալ վեճերին: Բաժինը նաև ունի անվճար հեռախոսահամար (**1-888-466-2219**) և TDD հեռախոսագիծ (**1-877-688-9891**) լսողության կամ խոսքի խանգարում ունեցող անձանց համար: Բաժնի համացանցային կայքը՝ **dmhc.ca.gov**, ունի գանգատի ձևաթղթեր, IMR-ի դիմումի ձևաթղթեր և առցանց հրահանգներ:

Նահանգային լուծումներ

Նահանգային լուծումը հանդիպում է Սոցիալական ծառայությունների բաժնից (DSS) անձանց հետ: Մի դատավոր Ձեզ կօգնի լուծել Ձեր խնդիրը: Նահանգային լուծում կարող եք խնդրել միայն այն բանից հետո, երբ բողոքարկում եք ներկայացրել L.A. Care-ին և այնուամենայնիվ դժգոհ եք մնացել որոշումից, կամ Ձեր բողոքարկման որոշումը չէք ստացել 30 օր անցնելուց հետո և IMR չեք խնդրել:

Նահանգային լուծումը պարտավոր եք խնդրել բողոքարկման որոշումը Ձեզ ծանուցող նամակի ամսաթվին հաջորդող 120 օրվա ընթացքում: Ձեր PCP-ը կարող է Նահանգային լուծում խնդրել Ձեզ համար Ձեր գրավոր արտոնությամբ և եթե նա վավերացում ստանա DSS-ից: Կարող եք նաև DSS գանգահարել, խնդրելու համար, որ Նահանգը վավերացնի Ձեր PCP-ի խնդրանքը Նահանգային լուծմի համար:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ գանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

6 | Խնդիրների հաղորդում և լուծում

Նահանգային լսումը կարող էք խնդրել հեռախոսով կամ փոստով:

- **Յեռախոսով՝** Չանգահարեք DSS-ի Յանրային պատասխանի ենթաբաժին **1-800-952-5253** (TTY **1-800-952-8349**) համարով:
- **Փոստով՝** Լրացրեք ձևաթուղթը, որը մատուցվել է Ձեր բողոքարկման լուծման ծանուցագրի հետ: Այն ուղարկեք հետևյալ հասցեով՝

California Department of Social Services
State Hearings Division
P.O. Box 944243, MS 09-17-37
Sacramento, CA 94244-2430

Եթե Նահանգային լսում խնդրելու համար օգնության կարիք ունեք, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք անվճար լեզվական ծառայություններ մատուցել Ձեզ: Չանգահարեք **1-888-839-9909** (TTY **711**) համարով:

Լսումի պահին, Դուք կներկայացնեք Ձեր կողմը: Մենք կներկայացնենք մեր կողմը: Ձեր գործի որոշման համար դատավորից կարող է մինչև 90 օր պահանջվել: L.A. Care-ը պարտավոր է հետևել դատավորի որոշման:

Եթե ցանկանում եք, որ DDS-ը կայացնի արագ որոշում, քանի որ Նահանգային լսում ունենալու համար պահանջված ժամանակը Ձեր կյանքը, առողջությունը կամ լրիվ գործելու կարողությունը վտանգի կենթարկի, Դուք կամ Ձեր PCP-ը կարող եք DSS-ին դիմելով արագացված (արագ) Նահանգային լսում խնդրել: DSS-ը պարտավոր է որոշումը կայացնել 3 աշխատանքային օրից ոչ ուշ՝ Ձեր ամբողջական գործի թղթածրարը L.A. Care-ից ստանալուց հետո:

Խարդախություն, վատնում և չարաշահում

Եթե կասկած ունեք, որ մի մատակարար կամ մի անձ, որը Medi-Cal է ստանում, գործել է խարդախություն, վատնում կամ չարաշահում, Ձեր իրավունքն է տեղեկագրել այն:

Մատակարարի խարդախությունը, վատնումը և չարաշահումը ներառում է՝

- Բժշկական արձանագրությունների կեղծումը
- Բժշկական անհրաժեշտությունից ավելի մեծ քանակով դեղերի նշանակումը
- Բժշկական անհրաժեշտությունից ավելի մեծ ծավալի առողջական խնամքի ծառայությունների մատուցումը
- Չմատուցված ծառայությունների համար հաշիվ ուղարկելը
- Պրոֆեսիոնալ ծառայությունների համար հաշիվ ուղարկելը, երբ պրոֆեսիոնալը չի մատուցել ծառայությունը



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Յեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Խարդախությունը, վատնումը և չարաշահումը նպաստներ ստացող անձի կողմից ներառում է՝

- Առողջապահական ծրագրի ճանաչողական քարտը կամ Medi-Cal-ի նպաստների ճանաչողական քարտը (Benefits Identification Card, BIC) փոխ տալը, վաճառելը կամ տալը ուրիշ անձի
- Նման կամ նույն բուժումներն ու դեղերը ստանալը մեկից ավելի մատակարարից
- Շտապ օգնության կայան գնալը, երբ վիճակն արտակարգ չէ
- Ուրիշի Սոցիալական ապահովության համարի կամ առողջապահական ծրագրի ճանաչողական համարի օգտագործումը

Խարդախություն, վատնում և չարաշահում տեղեկագրելու համար գրառեք անունը, հասցեն և ճանաչողական համարը անձի, որը գործել է խարդախությունը, վատնումը և չարաշահումը: Տվեք ինչքան հնարավոր է շատ տեղեկություն անձի մասին, ինչպես՝ հեռախոսահամարը կամ մասնագիտությունը, եթե մատակարար է նա: Տվեք միջադեպերի ամսաթվերը և ամփոփումը, թե ինչ է պատահել իսկապես:

Ձեր տեղեկագիրը ուղարկեք հետևյալ հասցեով՝

L.A. Care Health Plan
Special Investigations Unit
1055 West 7th Street, 10th Floor
Los Angeles, CA 90017

Կարող եք նաև զանգահարել Համապատասխանության թեժ հեռախոսագիծ **1-800-400-4889** համարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, տեղեկությունը էլ. փոստով ուղարկել հետևյալին՝ **ReportingFraud@lacare.org**, կամ տեղեկությունը հաղորդել առցանց հետևյալ կայքում՝ **lacare.ethicspoint.com**:

Բոլոր հաղորդումները հնարավոր է կատարել անանուն:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

7. Կարևոր թվանշաններ և բառեր, որոնք պետք է իմանալ

Կարևոր հեռախոսահամարներ

- L.A. Care-ի Անդամների սպասարկում
L.A. Care Member Services **1-888-839-9909** (TTY 711)
- L.A. Care-ի 24-ժամյա Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ
L.A. Care’s 24-Hour Nurse Advice Line **1-800-249-3619** (TTY 711)
- L.A. Care-ի Համապատասխանության թեժ հեռախոսագիծ
L.A. Care Compliance Helpline **1-800-400-4889**
- L.A. Care-ի Ընտանիքի աղբյուրների կենտրոններ
L.A. Care Family Resource Centers – **1-877-287-6290**
- L.A. Care-ի Ընտանիքի աղբյուրների կենտրոն - East L.A.
L.A. Care Family Resource Center – East L.A. **1-213-438-5570**
- L.A. Care-ի Ընտանիքի աղբյուրների կենտրոն – Boyle Heights
L.A. Care Family Resource Center – Boyle Heights **1-213-294-2840**
- L.A. Care-ի Ընտանիքի աղբյուրների կենտրոն – Inglewood
L.A. Care Family Resource Center – Inglewood **1-310-330-3130**
- L.A. Care-ի Ընտանիքի աղբյուրների կենտրոն – Lynwood
L.A. Care Family Resource Center – Lynwood **1-310-661-3000**
- L.A. Care-ի Ընտանիքի աղբյուրների կենտրոն – Pacoima
L.A. Care Family Resource Center – Pacoima **1-213-438-5497**
- L.A. Care-ի Ընտանիքի աղբյուրների կենտրոն – Palmdale
L.A. Care Family Resource Center – Palmdale **1-213-438-5580**
- L.A. Care/Blue Shield Promise Health Plan-ի Համայնքային աղբյուրների կենտրոն – Pomona
L.A. Care/Blue Shield Promise Health Plan Community Resource Center – Pomona **1-909-620-1661**



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում**՝ **1-888-839-9909** (TTY 711):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

- Զաշմանդամության ծառայություններ
 - Կալիֆորնիայի փոխանցման ծառայություն
California Relay Service (CRS) – (TTY **711**)
 - Sprint **1-888-877-5379**
 - MCI **1-800-735-2922**
 - Զաշմանդամ ամերիկացիների օրենքի մասին տեղեկություն
Americans with Disabilities Act (ADA) Information **1-800-514-0301** (TTY **1-800-514-0383**)
- Երեխաների ծառայություններ
 - Կալիֆորնիայի Երեխաների ծառայություններ
California Children’s Services (CCS) **1-800-288-4584**
 - Երեխայի առողջություն և հաշմանդամության կանխում
Child Health and Disability Prevention (CHDP) **1-800-993-2437** (**1-800-993-CHDP**)
- Կալիֆորնիայի սահանգային ծառայություններ
 - Կալիֆորնիայի առողջական ինսամբի սպասարկման բաժին
California State Department of Health Care Services (DHCS) **1-916-445-4171**
 - Medi-Cal-ի Կառավարվող ինսամբի Օմբուդսմանի գրասենյակ
Medi-Cal Managed Care Office of the Ombudsman **1-888-452-8609**
 - Denti-Cal-ի նպաստառու
Denti-Cal Beneficiary **1-800-322-6384** (TTY **1-800-735-2922**)
 - Կալիֆորնիայի Սոցիալական սպասարկությունների բաժին
California Department of Social Services (CDSS) **1-800-952-5253**
 - Կառավարվող առողջական ինսամբի բաժին
Department of Managed Health Care (DMHC) **1-888-466-2219** (**1-888-HMO-2219**)
(TDD **1-877-688-9891**)
- Առողջական ինսամբի ընտրանքներ՝
 - Արաբերեն **1-800-576-6881**
 - Հայերեն **1-800-840-5032**
 - Կամբոջերեն/խմերերեն **1-800-430-5005**
 - Կանտոներեն **1-800-430-6006**
 - Անգլերեն **1-800-430-4263**
 - Պարսկերեն **1-800-840-5034**
 - Հնդկերեն **1-800-430-2022**



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

7 | Կարևոր թվանշաններ և բառեր, որոնք պետք է իմանալ

- Կորեերեն **1-800-576-6883**
- Լատներեն **1-800-430-4091**
- Մանդարին **1-800-576-6885**
- Ռուսերեն **1-800-430-7007**
- Իսպաներեն **1-800-430-3003**
- Տազալերեն **1-800-576-6890**
- Վիետնամերեն **1-800-430-8008**
- TTY **1-800-430-7077**
- ԱՄՆ Զաղաքացիական իրավունքների գրասենյակ
U.S. Office for Civil Rights **1-866-627-7748**
- Սոցիալական ապահովության վարչության Լրացուցիչ սոցիալական եկամուտ
Social Security Administration Supplemental Social Income (SSI) **1-800-772-1213**
- Լոս Անջելես վարչաշրջան - Հանրային Սոցիալական սպասարկման բաժին
Հաճախորդի սպասարկման կենտրոն
Los Angeles County - Department of Public Social Services (DPSS)
Customer Service Center **1-866-613-3777** (TTY **1-800-660-4026**)
- Լոս Անջելես վարչաշրջանի Առողջապահական սպասարկության բաժին
Los Angeles County Department of Health Services **1-213-240-8101**
- Լոս Անջելես վարչաշրջանի Հոգեկան առողջության բաժին
Los Angeles County Department of Mental Health **1-800-854-7771**
- Կանայք, նորածիններ և երեխաներ
Women, Infant and Children Program (WIC) **1-888-942-9675**



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909** (TTY **711**):
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն
անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք
առցանց՝ **lacare.org**:

Բառեր, որոնք պետք է իմանալ

Ակտիվ երկուսք՝ Այն ժամանակամիջոցը, երբ կինը գտնվում է ծննդաբերության երեք փուլերում և կամ հնարավոր չէ նրան ժամանակին անվտանգ փոխադրել մի ուրիշ հիվանդանոց ծննդաբերությունից առաջ, կամ փոխադրումը կարող է վսասել կնոջ կամ չծնված երեխայի առողջության և անվտանգության:

Ամբուլատոր խնամք՝ Երբ պարտավոր չէք գիշերել հիվանդանոցում կամ այլուր Ձեզ անհրաժեշտ բժշկական խնամքի համար:

Անբուժելի հիվանդների խնամք՝ Ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհանգստությունները նվազեցնող խնամք անդամի համար, ով ունի մահացու հիվանդություն (չի սպասվում, որ նա ապրի 6 ամսից ավելի):

Անդամ՝ Որևէ իրավասու Medi-Cal-ի նպաստառու, ով անդամագրվել է L.A. Care-ին և իրավունք ունի ստանալու ապահովագրված ծառայություններ:

Անդամագրյալ՝ Անձ, ով անդամ է առողջապահական ծրագրին և ծառայություններ է ստանում ծրագրի միջոցով:

Անկախ ծննդաբերության կենտրոններ (Freestanding Birth Center, FBC)՝ Առողջապահական հաստատություններ, որտեղ նախատեսվում է ծննդաբերություն իրականացնել հղի կնոջ բնակության վայրից դուրս, որոնք նահանգի կողմից արտոնագրվել կամ այլ կերպ վավերացվել են՝ մատուցելու նախածնական երկուսք և ծննդաբերություն կամ հետծննդաբերական խնամք և ծրագրում ընդգրկված ուրիշ ամբուլատոր ծառայություններ: Այս հաստատությունները հիվանդանոցներ չեն:

Ապահովագին՝ Ապահովագրության համար վճարված գումար. ապահովագրության գին:

Ապահովագրություն (ապահովագրված ծառայություններ)՝ Առողջապահական ծառայությունները, որոնք մատուցվում են L.A. Care-ի անդամներին՝ համաձայն Medi-Cal-ի ընդհանուր դրույթների, պայմանների, սահմանափակումների և բացառությունների, և ըստ այս Ապահովագրության ապացույցում (Evidence of Coverage, EOC) նշված որևէ բարեփոխման:

Ապանդամագրել՝ Այս ծրագրի օգտագործման դադարեցումը, քանի որ այլևս չէք որակավորվում դրա համար կամ անցել եք մի նոր առողջապահական ծրագիր: Պարտավոր եք ստորագրել մի ձևաթուղթ, որը նշում է, որ այլևս չէք ուզում օգտվել այս ծրագրից, կամ զանգահարել HCO և ապանդամագրվել հեռախոսի միջոցով:

Առաջնային խնամք՝ Անցեք «Սովորական խնամք»:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

7 | Կարևոր թվանշաններ և բառեր, որոնք պետք է իմանալ

Առաջնային ինսամբի մատակարար (Primary Care Provider, PCP)՝ Արտոնագրված մատակարարը, ում ունեք Ձեր հիմնական առողջական ինսամբի համար: Ձեր PCP-ը կօգնի Ձեզ, որ ստանաք Ձեզ անհրաժեշտ ինսամբը: Մի շարք ինսամբի կարիքներ պետք է առաջուց վավերացվեն, բացի այն դեպքերից, երբ՝

- Ունեք արտակարգ իրավիճակ:
- Ձեզ անհրաժեշտ է Մանկաբարձ/Գինեկոլոգի ինսամբ:
- Ձեզ անհրաժեշտ են զգայուն ծառայություններ:
- Ձեզ անհրաժեշտ է ընտանիքի ծրագրման ինսամբ:

Ձեր PCP-ը կարող է լինել՝

- Ընդհանուր բժշկության մասնագետ
- Ներքին հիվանդությունների մասնագետ
- Մանկաբույժ
- Ընտանեկան բժշկության մասնագետ
- Մանկաբարձ/գինեկոլոգ
- FQHC կամ RHC
- Առաջնային ինսամբ տրամադրող բուժքույր
- Օգնական բժիշկ
- Կլինիկա

Առողջական ապահովագրություն՝ Ապահովագրական ծածկույթ, որը վճարում է բժշկական և վիրաբուժական ծախսերը, ապահովագրված անձին փոխհատուցելով հիվանդության կամ փաստաթղթի պատճառած ծախսերը, կամ ուղղակի վճարելով ինսամբի մատակարարին:

Առողջական ինսամբի ընտրանքներ (Health Care Options, HCO)՝ Ծրագիրը, որը կարող է Ձեզ անդամագրել առողջապահական ծրագրի կամ ապանդամագրել նրանից:

Առողջական ինսամբի մատակարարներ՝ Բժիշկներ կամ մասնագետներ, ինչպես՝ վիրաբույժները, քաղցկեղ բուժող բժիշկները, կամ այն բժիշկները, ովքեր բուժում են մարմնի հատուկ մասեր և գործում են L.A. Care-ի հետ կամ գտնվում են L.A. Care-ի ցանցում: L.A. Care-ի ցանցի մատակարարները պարտավոր են արտոնագիր ունենալ Կալիֆորնիայում գործելու համար և Ձեզ մատուցել L.A. Care-ի ապահովագրած մի ծառայություն:

Ձեզ սովորաբար ուղեգիր է հարկավոր Ձեր PCP-ից՝ մասնագետի գնալու համար: Ձեր PCP-ը պարտավոր է նախավավերացում ստանալ L.A. Care-ից, նախքան Դուք ինսամբ կստանաք մասնագետից:

Ձեզ Ձեր PCP-ից ուղեգիր անհրաժեշտ է որոշ տեսակի ծառայությունների համար, ինչպես՝ ընտանիքի ծրագրումը, շտապ օգնությունը, մանկաբարձ/գինեկոլոգի ինսամբը կամ զգայուն ծառայությունները:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Առողջական խնամքի մատակարարների տեսակներ՝

- Ականջի մասնագետը լսողությունն ստուգող մատակարար է:
- Վկայագրված բուժքույր-մանկաբարձը այնպիսի բուժքույր է, ով Ձեզ խնամում է հղիության և մանկածնության ընթացքում:
- Ընտանեկան բժշկության մասնագետը մի բժիշկ է, ով դարմանում է բոլոր տարիքի մարդկանց սովորական բժշկական հարցերը:
- Ընդհանուր բժշկության մասնագետը մի բժիշկ է, ով դարմանում է սովորական բժշկական հարցերը:
- Ներքին հիվանդությունների մասնագետը ներքին բժշկության, ներառյալ՝ հիվանդությունների, մարզում հատուկ պատրաստությամբ բժիշկ է:
- Արտոնագրված պրոֆեսիոնալ բուժքույրը Ձեր բժշկի հետ գործող արտոնագրված բուժքույր է:
- Խորհրդատուն անձ է, ով Ձեզ օգնում է Ձեր ընտանեկան խնդիրների կապակցությամբ:
- Բժշկական օգնականը կամ վկայագրված բժշկական օգնականը արտոնագիր չունեցող անձ է, ով օգնում է, որ Ձեր բժիշկները բժշկական խնամք մատուցեն Ձեզ:
- Միջին մակարդակի գործնական մասնագետը անուն է, որն օգտագործվում է առողջական խնամքի մատակարարների համար, ինչպես՝ բուժքույր-մանկաբարձները, օգնական բժիշկները կամ առաջնային խնամք տրամադրող բուժքույրերը:
- Չգայագրկող բուժքույրը Ձեզ անզգայացնող բուժքույրն է:
- Առաջնային խնամք տրամադրող բուժքույրը կամ օգնական բժիշկը այն անձն է, ով գործում է կլինիկայում կամ բժշկի գրասենյակում և Ձեզ ախտորոշում, բուժում կամ խնամում է սահմանափակ չափով:
- Մանկաբարձ/Գինեկոլոգը (Ob/Gyn) բժիշկ է, ով հոգ է տանում կանանց առողջության, ներառելով հղիության և ծննդաբերության շրջանը:
- Աշխատանքային թերապևտը մատակարար է, ով օգնում է, որ վերագտնեք առօրյա հմտություններն ու գործունեությունները հիվանդությունից կամ վնասվածքից հետո:
- Մանկաբույժը երեխաներին բուժող բժիշկ է նրանց ծննդից մինչև պատանեկան տարիները:
- Ֆիզիկական թերապևտը մատակարար է, ով օգնում է, որ վերականգնեք Ձեր մարմնի հզորությունը հիվանդությունից կամ վնասվածքից հետո:
- Ոտնաբույժը Ձեր ոտքերին հոգ տանող բժիշկ է:
- Հոգեբանը անձ է, ով բուժում է հոգեկան առողջության հարցերը, բայց դեղեր չի նշանակում:
- Գրանցված բուժքույրը արտոնագրված մասնագետ բուժքույրից ավելի պատրաստություն ունեցող բուժքույր է, ով ունի Ձեր բժշկի հետ որոշ առաջադրանքներ կատարելու արտոնագիր:
- Ընչառական թերապևտը մատակարար է, ով օգնում է Ձեր շնչառության:
- Խոսքի թերապևտը մատակարար է, ով օգնում է Ձեր խոսելուն:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

7 | Կարևոր թվանշաններ և բառեր, որոնք պետք է իմանալ

Արտակարգ իրավիճակի բժշկական վիճակ՝ Մի բժշկական կամ հոգեկան վիճակ այնպիսի սուր ախտանիշներով, ինչպես՝ ակտիվ երկունքը (սահմանումը տեսնել վերևում), կամ սուր ցավը, որը առողջապահական և բժշկական գիտելիքների տեր տրամաբանող պարզ անձին կարող է հավատացնել, որ անմիջական բժշկական խնամք չստանալը կարող է՝

- Ձեր կամ Ձեր չծնված երեխայի առողջությունը ենթարկել լուրջ վտանգի
- Խանգարում պատճառել մարմնական գործառույթի
- Պատճառ դառնալ, որ մարմնի մասը կամ օրգանը լավ չգործի

Արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրություն՝ Հիվանդակառթով կամ արտակարգ իրավիճակի մեքենայով փոխադրում դեպի շտապ օգնության կայան՝ արտակարգ իրավիճակի բժշկական խնամք ստանալու համար:

Արտատարածքային ծառայություններ՝ Ծառայություններ՝ երբ անդամը գտնվում է սպասարկման տարածքից դուրս որևէ վայրում:

Արտացանցային մատակարար՝ L.A. Care-ի ցանցին մաս չկազմող մատակարար:

Բացառված ծառայություններ՝ L.A. Care-ի կողմից չապահովագրված ծառայություններ. չապահովագրված ծառայություններ:

Բժշկական տուն՝ Խնամքի մոդել, որը ավելի լավորակ խնամք կմատուցի, կբարելավի անդամների՝ իրենց սեփական խնամքի ինքնատնօրինումը և կնվազեցնի անտեղի ծախսերը ժամանակի ընթացքում:

Բժշկականորեն անհրաժեշտ (կամ բժշկական անհրաժեշտություն)՝ Բժշկականորեն անհրաժեշտ խնամքը ներկայացնում է կարևոր ծառայություններ, որոնք տրամաբանական են և պաշտպանում են կյանքը: Այս խնամքն անհրաժեշտ է արգելելու համար հիվանդների լուրջ հիվանդ կամ հաշմանդամ դառնալը: Այս խնամքը նվազեցնում է սաստիկ ցավը՝ բուժելով ախտը, հիվանդությունը կամ վնասվածքը: 21 տարեկանից փոքր անդամների համար Medi-Cal-ի ծառայությունները ներառում է բժշկականորեն անհրաժեշտ խնամքը՝ ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը ուղղելու կամ օգնելու համար, ներառյալ թմրանյութի օգտագործման խանգարումները, ինչպես սահմանվել է Միացյալ Նահանգների օրենսգրքի 42-րդ Տիտղոսի 1396d(r) բաժնում:

Բժշկի ծառայություններ՝ Ծառայություններ, որոնք մատուցվում են նահանգային օրենքի ներքո բժշկություն կամ կմախամականային թերապիա կիրառելու նպատակով արտոնագրված անձի կողմից, առանց ներառելու ծառայությունները, որոնք մատուցվում են բժշկի կողմից, երբ Ձեզ ընդունել են հիվանդանոց և դրանց համար ծախս է ներկայացվել հիվանդանոցի հաշվում:

Բողոք՝ Անդամի դժգոհության բանավոր կամ գրավոր արտահայտությունը L.A. Care-ի, մատակարարի կամ խնամքի կամ մատուցված ծառայությունների որակի նկատմամբ: Գանգատը նույնն է ինչ՝ բողոքը:

Բողոքարկում՝ Անդամի խնդրանք է, որ L.A. Care-ը վերանայի և փոխի մի որոշում, որը մենք կայացրել ենք խնդրված ծառայության ապահովագրման վերաբերյալ:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):** L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711:** Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Գանգատ՝ Անդամի դժգոհության բանավոր կամ գրավոր արտահայտությունը L.A. Care-ի, մատակարարի կամ ինսամֆի որակի կամ մատուցված ծառայությունների որակի նկատմամբ: Գանգատը նույնն է ինչ՝ բողոքը:

Գյուղական առողջապահական կլինիկա (Rural Health Clinic, RHC)՝ Առողջապահական կենտրոն մի վայրում, որտեղ չկան առողջական ինսամֆի բազմաթիվ մատակարարներ: RHC-ում կարող եք ստանալ առաջնային և կանխարգելող ինսամֆ:

Գործի կառավարիչ՝ Գրանցված բուժքույրեր կամ սոցիալական աշխատողներ, ովքեր կարող են օգնել, որ հասկանաք գլխավոր առողջական խնդիրներ և ինսամֆ դասավորեք Ձեր մատակարարների հետ:

Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (Federally Qualified Health Center, FQHC)՝ Առողջապահական կենտրոն մի վայրում, որտեղ չկան առողջական ինսամֆի բազմաթիվ մատակարարներ: FQHC-ում կարող եք ստանալ առաջնային և կանխարգելող ինսամֆ:

Դեղատոմսային դեղեր՝ Դեղ, որը դուրս գրվելու համար օրենքով պահանջում է արտոնագրված մատակարարի պատվերը, ի տարբերություն դեղադարանի (Over-The-Counter, OTC) դեղերի, որոնք դեղատոմս չեն պահանջում:

Դեղատոմսային դեղերի ապահովագրություն՝ Ապահովագրություն մատակարարի կողմից նշանակված դեղերի համար:

Դեղացանկ՝ Ցանկը դեղերի և իրերի, որոնք համապատասխանում են որոշակի չափանիշների և վավերացվել են անդամների համար:

DHCS՝ Կալիֆորնիայի Առողջական ինսամֆի սպասարկման բաժնի ծառայություններ: Սա Նահանգային գրասենյակն է, որը վերահսկում է Medi-Cal ծրագիրը:

DHCS-ից վավերացված մատակարարներ՝ Medi-Cal-ի մատակարարներ, որոնք կարող են լիազորել NEMT-ը, որը ներառում է առաջնային ինսամֆի բժիշկներ կամ մասնագետներ. օգնական բժիշկներ. առաջնային ինսամֆ տրամադրող բուժքույրեր. վկայագրված բուժքույր մանկաբարձներ. ֆիզիկական թերապևտներ. խոսքի թերապևտներ. աշխատանքային թերապևտներ. հոգեկան առողջության կամ թմրանյութի օգտագործման խանգարման մատակարարներ:

DMHC՝ Կալիֆորնիայի Կառավարվող առողջական ինսամֆի բաժին: Սա Նահանգային գրասենյակն է, որը վերահսկում է կառավարվող ինսամֆի առողջապահական ծրագրերը:

Երեխայի առողջություն և հաշմանդամության կանխում (California Health and Disability Prevention, CHDP)՝ Հանրային առողջապահական ծրագիր, որը փոխհատուցում է հանրային և մասնավոր առողջական ինսամֆի մատակարարներին վաղ առողջական գնահատումների համար, որպեսզի հայտնաբերվեն կամ կանխարգելվեն հիվանդություններն ու հաշմանդամությունը երեխաների և պատանիների մոտ: Ծրագիրը օգնում է երեխաների և պատանիների, ովքեր որակավորվում են, որ իրենց մատչելի լինի սովորական առողջական ինսամֆը: Ձեր PCP-ը կարող է մատուցել CHDP-ի ծառայություններ:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):** L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711:** Այցելեք առցանց՝ **lacare.org**:

7 | Կարևոր թվանշաններ և բառեր, որոնք պետք է իմանալ

Երկարաժամկետ ինսամբ՝ Հաստատությունում ընդունման ամսից ավելի երկար ժամանակով ինսամբ:

Չգայուն ծառայություններ՝ Բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ ընտանիքի ծրագրման, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (Sexually Transmitted Infections, STI), ՄԻԱՎ/ՁԻԱՀի, սեռական բռնության և վիժուխների համար:

Ընտանիքի ծրագրման ծառայություններ՝ Հղիությունը կանխարգելելու կամ ուշացնելու ծառայություններ:

Լուրջ հիվանդություն՝ Հիվանդություն կամ վիճակ, որը պետք է բուժել և կարող է մահացություն պատճառել:

Խարդախություն՝ Խաբելու կամ ապակողմնորոշելու միտումնավոր արարք անձի կողմից, ով գիտի, որ խաբեությունը կարող է հանգեցնել չլիազորված նպաստի տվյալ անձի կամ ուրիշի համար:

Ինսամբի շարունակում՝ Ծրագրի անդամի կարողությունը՝ շարունակելու Medi-Cal-ի ծառայություններն ստանալ իր ընթացիկ մատակարարից մինչև 12 ամիս, առանց ծառայությունների ընդմիջման, եթե մատակարարն ու L.A. Care-ը համաձայնվեն:

Ծրագիր՝ Անցեք «Կառավարվող ինսամբի ծրագիր»:

Կալիֆորնիայի Երեխաների ծառայություններ (California Children's Services, CCS)՝ Մի ծրագիր, որը ծառայություններ է մատուցում մինչև 21 տարեկան երեխաների, ովքեր ունեն որոշակի հիվանդություններ և առողջական խնդիրներ:

Կառավարվող ինսամբի ծրագիր՝ Medi-Cal-ի ծրագիր, որն օգտվում է միայն որոշակի բժիշկներից, մասնագետներից, կլինիկաներից, դեղատներից և հիվանդանոցներից՝ ծրագրին անդամագրված Medi-Cal ընդունողների համար: L.A. Care-ը կառավարվող ինսամբի ծրագիր է:

Կլինիկա՝ Մի հաստատություն, որը անդամները կարող են ընտրել որպես իրենց Առաջնային ինսամբի մատակարար (Primary Care Provider, PCP): Այն կարող է լինել Դաշնային որակավորման առողջապահական կենտրոն (Federally Qualified Health Center, FQHC), համայնքային կլինիկա, Գյուղական առողջապահական կլինիկա (Rural Health Clinic, RHC), Ամերիկյան հնդկացիների առողջապահության կլինիկա կամ առաջնային ինսամբի այլ հաստատություն:

Համայնքային հիմքով չափահասի սպասարկում (Community-Based Adult Services, CBAS)՝ Աբմուլատոր, հաստատությունում տրամադրվող ծառայություններ հմուտ բուժքույրական ինսամբի համար, սոցիալական ծառայություններ, թերապիաներ, անձնական ինսամբ, ընտանիքի անդամի և ինսամբակալի վերապատրաստում և աջակցություն, սննդային ծառայություններ, փոխադրումներ և այլ ծառայություններ որակավորվող անդամների համար:

Համավճար՝ Ձեր կատարած վճարումը, ընդհանրապես ծառայության պահին, ի հավելումս ապահովագրող կողմի վճարման: L.A. Care-ի անդամները պարտավոր չեն վճարել ապահովագրված ծառայությունների համար՝ եթե ծախսաբաժին չունեն:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):** L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Չանրային առողջապահական ծառայություններ՝ Առողջապահական ծառայություններ, որոնք ուղղված են ողջ բնակչության: Սրանք ընդգրկում են, ուրիշների կարգին, առողջական վիճակի անալիզ, առողջության հսկում, առողջության խթանում, կանխարգելիչ ծառայություններ, վարակիչ հիվանդության կառավարում, միջավայրի պաշտպանություն և սանիտացիա, աղետի պատրաստվածություն և հակազդում, և աշխատանքային առողջապահություն:

Չետ-կայունացման ծառայություններ՝ Ծառայություններ, որոնք ստանում են արտակարգ իրավիճակի բժշկական վիճակի կայունացումից հետո:

Չետևման խնամք՝ Բժշկի սովորական խնամք՝ ստուգելու հիվանդի բարելավումը հիվանդանոցային բուժումից հետո կամ բուժման ընթացքում:

Չիվանդանոց՝ Վայր, որտեղ կարող են բժիշկներից և բուժքույրերից ստանալ ստացիոնար և ամբուլատոր խնամք:

Չիվանդանոցային բուժում՝ Չիվանդանոց ընդունում՝ որպես ստացիոնար հիվանդ բուժման համար:

Չիվանդանոցի ամբուլատոր խնամք՝ Բժշկական կամ վիրաբուժական խնամք, որը հիվանդանոցում իրականացվում է առանց այնտեղ որպես ստացիոնար ընդունվելու:

Չմուտ բուժքույրական խնամք՝ Ապահովագրված ծառայություններ, որոնք մատուցվում են արտոնագրված բուժքույրերի, տեխնիկների և/կամ թերապևտների կողմից Չմուտ բուժքույրական հաստատությունում կեցության ընթացքում կամ անդամի տանը:

Չմուտ բուժքույրական հաստատություն՝ Վայր, որը մատուցում է 24-ժամյա բուժքույրական խնամք, որը կարող են տալ միայն պատրաստված առողջապահական պրոֆեսիոնալները:

Չոգեբուժական արտակարգ իրավիճակի վիճակ՝ Չոգեկան խանգարում, որտեղ ախտանիշներն այնքան են լուրջ կամ սաստիկ, որ առաջացնում են կամ անմիջական վտանգ Ձեր անձին կամ ուրիշների նկատմամբ, կամ էլ անմիջականորեն անկարող են ապահովել կամ օգտագործել սնունդ, ապաստան կամ հագուստեղեն՝ հոգեկան խանգարման հետևանքով:

Չոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ՝ Ամբուլատոր ծառայություններ անդամների համար, ովքեր ունեն մեղմից չափավոր հոգեկան առողջության վիճակներ, ներառյալ՝

- Անհատական կամ խմբային հոգեկան առողջության գնահատում և բուժում (հոգեբուժություն)
- Չոգեբանական ստուգում՝ հոգեկան առողջության վիճակի գնահատման համար, երբ կլինիկականորեն ախտորոշվել է
- Ամբուլատոր ծառայություններ, որոնք նպատակ ունեն դեղաբուժումը հսկել
- Չոգեբուժական խորհրդատվություն
- Ամբուլատոր լաբորատորային անալիզներ, պաշարներ և լրացուցիչներ



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Չեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

7 | Կարևոր թվանշաններ և բառեր, որոնք պետք է իմանալ

Հոգեկան առողջության ծառայությունների մատակարար՝ Արտոնագրված անհատներ, ովքեր հիվանդներին մատուցում են հոգեկան առողջության և վարքագծային առողջության ծառայություններ:

Հրատապ ինամբ (կամ հրատապ ծառայություններ)՝ Ծառայություններ, որոնք մատուցվում են բժշկական ինամբ պահանջող ոչ-արտակարգ իրավիճակի հիվանդության, վնասվածքի կամ վիճակի համար: Հրատապ ինամբը կարող է ստանալ արտացանցային մատակարարից, եթե ցանցի մատակարարները ժամանակավորապես տրամադրելի կամ մատչելի չեն:

Մահացու հիվանդություն՝ Բժշկական վիճակ, որը հնարավոր չէ շրջել և շատ հավանական է, որ մահացնի մեկ կամ ևս մեկ տարվա ընթացքում, եթե հիվանդությունը հետևի իր բնական ընթացքին:

Մանկաբարձական ծառայություններ՝ Նախածնական, ծննդաբերության ընթացքում և հետծննդաբերական ինամբը, ներառյալ՝ ընտանիքի ծրագրման ինամբը մոր և անմիջական ինամբը նորածնի համար, որը մատուցվում է վկայագրված բուժքույր-մանկաբարձների (Certified Nurse Midwife, CNM) և արտոնագրված մանկաբարձների (Licensed Midwife, LM) կողմից:

Մասնագետ (կամ մասնագիտացած բժիշկ)՝ Բժիշկ, ով բուժում է որոշ տեսակի առողջական ինամբի խնդիրներ: Օրինակ, ոսկրաբույժ վիրաբույժը բուժում է կոտրած ոսկորները. ալերգիաների մասնագետը բուժում է ալերգիաները. և սրտաբանը բուժում է սրտի խնդիրները: Հիմնականում, մասնագետի այցելելու համար Ձեզ անհրաժեշտ է Ձեր PCP-ից մի ուղեգիր:

Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ՝

- Ամբուլատոր ծառայություններ՝
 - Հոգեկան առողջության ծառայություններ (գնահատումներ, ծրագրի մշակում, թերապիա, վերականգնում, և աջակից մասնագետ)
 - Դեղերի աջակցության ծառայություններ
 - Ցերեկային բուժման լարված ծառայություններ
 - Ցերեկային վերականգնողական ծառայություններ
 - Ճգնաժամի միջամտության ծառայություններ
 - Ճգնաժամի կայունացման ծառայություններ
 - Նպատակային գործի կառավարման ծառայություններ
 - Թերապևտական վարքագծային ծառայություններ
 - Լարված ինամբի համակարգում
 - Տանը մատուցվող լարված ծառայություններ
 - Ինամատուի թերապևտական ինամբ



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

- Բնակության վայրում ծառայություններ՝
 - Բնակության վայրում չափահասների բուժման ծառայություններ
 - Բնակության վայրում ճգնաժամային բուժման ծառայություններ
- Ստացիոնար ծառայություններ՝
 - Սուր հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ
 - Հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային պրոֆեսիոնալ ծառայություններ
 - Հոգեբուժական առողջապահական հաստատության ծառայություններ

Մասնակից հիվանդանոց՝ Արտոնագրված հիվանդանոց, որը պայմանագիր է կնքել L.A. Care-ի հետ, որպեսզի ծառայություններ մատուցի անդամին՝ անդամի խնամք ստանալու պահին: Ապահովագրված ծառայությունները, որոնք մի շարք մասնակից հիվանդանոցներ թերևս առաջարկում են անդամներին, սահմանափակվում են L.A. Care-ի օգտագործման վերանայումով և որակի երաշխավորման քաղաքականություններով կամ հիվանդանոցի հետ L.A. Care-ի ունեցած պայմանագրով:

Մասնակից մատակարար (կամ մասնակից բժիշկ)՝ Մի բժիշկ, հիվանդանոց կամ ուրիշ արտոնագրված առողջական խնամքի պրոֆեսիոնալ կամ արտոնագրված առողջապահական հաստատություն, ներառյալ՝ ենթասուր խնամքի հաստատությունները, որոնք պայմանագիր ունեն L.A. Care-ի հետ՝ անդամներին առաջարկելու ապահովագրված ծառայություններ, երբ անդամը խնամք է ստանում:

Մատակարարների հասցեագիրք՝ L.A. Care-ի ցանցում գտնվող մատակարարների ցանկ:

Medicare՝ Դաշնային առողջության ապահովագրության ծրագիր՝ 65 տարեկան և ավելի տարեց անձանց, որոշ ավելի երիտասարդ հաշմանդամների, և վերջին շրջանի երիկամային հիվանդություն (մշտական երիկամային անբավարարություն, որը պահանջում է դիալիզ կամ երիկամի փոխպատվաստում, որը երբեմն կոչվում է ESRD) ունեցող անձանց համար:

Նախավավերացում (կամ նախօրոք լիազորում)՝ Ձեր PCP-ը պարտավոր է նախավավերացում ստանալ L.A. Care-ից, Ձեզ որոշակի ծառայություններ տրվելուց առաջ: L.A. Care-ը կվավերացնի միայն Ձեզ անհրաժեշտ ծառայությունները: L.A. Care-ը չի վավերացնի ոչ-մասնակից մատակարարների ծառայությունները, եթե L.A. Care-ը համոզված է, որ կարող եք համապատասխան կամ ավելի հարմար ծառայություններ ստանալ L.A. Care-ի մատակարարներից: Ուղեգիրը վավերացում չէ: Պարտավոր եք վավերացում ստանալ L.A. Care-ից:

Նախընտրելի դեղերի ցանկ (Preferred Drug List, PDL)՝ Ընտրված դեղերի ցանկ, որը վավերացվել է այս առողջապահական ծրագրի կողմից, որից Ձեր բժիշկը կարող է պատվեր ներկայացնել Ձեզ համար: Նույնպես կոչվում է դեղացանկ:

Նախօրոք լիազորում (նախավավերացում)՝ Մի պաշտոնական գործընթաց, որի դեպքում առողջական խնամքի մատակարարից որոշակի ծառայություններ մատուցելուց կամ գործողություններ իրականացնելուց առաջ պահանջվում է վավերացում ստանալ:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711:** Այցելեք առցանց՝ **lacare.org**:

7 | Կարևոր թվանշաններ և բառեր, որոնք պետք է իմանալ

Նպաստներ՝ Առողջական ինսամբի ծառայություններ և դեղեր, որոնք ապահովագրվում են այս առողջապահական ծրագրի ներքո:

Նպաստների համակարգում (Coordination of Benefits, COB)՝ Որոշման գործընթացը՝ թե՛ դրա ապահովագրական ծածկույթը (Medi-Cal, Medicare, առևտրային ապահովագրություն կամ այլ) ունի առաջնային բուժման և վճարման պարտավորություններ անդամների համար, ովքեր ունեն մեկից ավելի առողջական ապահովագրության ծածկույթ:

Շտապ օգնության կայանի ինսամբ՝ Քննություն, որը կատարում է բժիշկը (կամ օրենքի թույլատրության համաձայն բժշկի ցուցմունքի ներքո գործող անձնակազմը), պարզելու համար արտակարգ իրավիճակի բժշկական վիճակի առկայությունը: Բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ, որոնք հարկավոր են հաստատության հնարավորությունների ծիրում Ձեր վիճակը դարձնելու կլինիկականորեն կայուն:

Ոչ-արտակարգ իրավիճակի բժշկական փոխադրում (Non-Emergency Medical Transportation, NEMT)՝ Փոխադրում՝ երբ չէք կարող ապահովագրված բժշկական ժամադրության գնալ մարդատար մեքենայով, ավտոբուսով, գնացքով կամ տաքսիով: L.A. Care-ը վճարում է ամենից Էժան NEMT-ը Ձեր բժշկական կարիքների համար, երբ Ձեզ փոխադրություն է հարկավոր Ձեր ժամադրության համար:

Ոչ բժշկական փոխադրում՝ Փոխադրում՝ երբ Medi-Cal-ի ապահովագրված ծառայության համար Ձեր մատակարարի լիազորումով նշանակված ժամադրության եք գնում և այնտեղից վերադառնում:

Ոչ-դեղացանկային դեղ՝ Դեղերի դեղացանկում չնշված դեղ:

Ոչ-մասնակից մատակարար՝ L.A. Care-ի ցանցում չգտնվող որևէ մատակարար:

Որակյալ մատակարար՝ Բժիշկը, ով որակավորվել է Ձեր վիճակը բուժելուն հարմար պրակտիկայի մարզում:

Ուղեգիր՝ Երբ Ձեր PCP-ը հայտնում է, որ ինսամբը կարող է ստանալ ուրիշ մատակարարից: Մի շարք ապահովագրված ինսամբներ և ծառայություններ պահանջում են ուղեգիր և նախավավերացում:

Ուրիշ առողջական ապահովագրություն (Other Health Coverage, OHC)՝ Ուրիշ առողջական ապահովագրությունը վերաբերում է մասնավոր առողջական ապահովագրության: Ծառայությունները կարող են ընդգրկել բժշկական, ատամնաբուժական, տեսողական, դեղատան և/կամ Medicare-ի լրացուցիչ ծրագրերը (Մաս C և D):

Չապահովագրված ծառայություն՝ Ծառայություն, որը L.A. Care-ը չի ապահովագրում:

Պրոթեզային սարք՝ Մի արհեստական սարք, որը կցվում է մարմնին՝ մարմնի բացակա մասը փոխարինելու համար:

Սովորական ինսամբ՝ Բժշկականորեն անհրաժեշտ ծառայություններ և կանխարգելիչ ինսամբ, բաջառողջ երեխայի այցեր, կամ ինսամբ, ինչպես՝ սովորական հետևումի ինսամբը: Սովորական ինսամբի նպատակն է առողջական խնդիրների կանխարգելումը:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):** L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Սուր՝ Բժշկական վիճակ, որը հանկարծահաս է, պահանջում է արագ բժշկական ուշադրություն և երկար չի տևում:

Սպասարկման տարածք՝ L.A. Care-ի սպասարկած աշխարհագրական տարածքը: Սա ներառում է Lnu Անջելես վարչաշրջանը:

Ստացիոնար խնամք՝ Երբ պարտավոր եք գիշերել հիվանդանոցում կամ այլուր Ձեզ անհրաժեշտ բժշկական խնամքի համար:

Վաղ և պարբերաբար գնում, ախտորոշում և բուժում (Early and Periodic Screening, Diagnosis and Treatment, EPSDT)՝ EPSDT ծառայությունները նպաստ են Medi-Cal-ի՝ 21 տարեկանից փոքր անդամների համար, նրանց առողջ պահելու համար: Անդամները պարտավոր են հարմար առողջական ստուգումներն ստանալ իրենց տարիքին հարմար գնումների համար, որպեսզի վաղ հայտնաբերվեն առողջական խնդիրներն ու բուժվեն հիվանդությունները:

Վերականգնողական ծառայություններ և սարքեր՝ Առողջական խնամքի ծառայություններ, որոնք օգնում են, որ պահեք, սովորեք կամ բարելավեք ունակությունները և գործունեությունները առօրյա կյանքի համար:

Վերականգնողական վիրաբուժություն՝ Վիրահատություն՝ ուղղելու կամ վերանորոգելու մարմնի անբնականոն կառուցվածքներ, որպեսզի բարելավի գործառույթը կամ ստեղծի հնարավորինս բնականոն տեսք: Մարմնի անբնականոն կառուցվածքները նրանք են, որոնք առաջանում են մի բնածին թերությունից, զարգացական անբնականոնություններից, տրավմայից, վարակից, նորագոյացություններից կամ հիվանդությունից:

Վկայագրված բուժքույր-մանկաբարձ (Certified Nurse Midwife, CNM)՝ Մի անհատ, ով արտոնագրվել է որպես Գրանցված բուժքույր և վկայագրվել է որպես բուժքույր-մանկաբարձ Կալիֆորնիայի Գրանցված բուժքույրերի խորհրդի կողմից: Վկայագրված բուժքույր-մանկաբարձին արտոնվում է հաճախել բնականոն ծննդաբերության դեպքերի:

Վճարովի ծառայություն (Fee-For-Service, FFS)՝ Սա նշանակում է, որ Դուք անդամ չեք կառավարվող խնամքի առողջապահական ծրագրի: FFS-ի ներքո, բժիշկը պարտավոր է ընդունել «ուղղակի» Medi-Cal և հաշիվը ուղարկել ուղղակի Medi-Cal-ին, Ձեր ստացած ծառայությունների համար:

Տանը մատուցվող առողջական խնամք՝ Տանը մատուցվող հմուտ բուժքույրական խնամք և այլ ծառայություններ:

Տանը մատուցվող առողջական խնամքի մատակարարներ՝ Մատակարարներ, որոնք Ձեզ տալիս են տանը մատուցվող հմուտ բուժքույրական խնամք և այլ ծառայություններ:

Տեսակավորում (կամ գնում)՝ Ձեր առողջական վիճակի գնահատումը այն բժշկի կամ բուժքրոջ կողմից, ով հատուկ պատրաստություն ունի՝ որոշելու Ձեր խնամքի անհրաժեշտության հրատապությունը:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711:** Այցելեք առցանց՝ **lacare.org**:

7 | Կարևոր թվանշաններ և բառեր, որոնք պետք է իմանալ

Տևական օգտագործման բժշկական սարքեր (Durable Medical Equipment, DME)՝ Սարք՝ որը բժշկականորեն անհրաժեշտ է և այն պատվիրել է Ձեր բժիշկը կամ ուրիշ մատակարար: L.A. Care-ը կորոշի, թե DME-ը վարձել է պետք, թե՞ գնել: Վարձի գները չպետք է գերազանցեն գնման գինը: Բժշկական սարքերի վերանորոգումն ապահովագրվում է:

Ցանց՝ Բժիշկների, կլինիկաների, հիվանդանոցների և ուրիշ մատակարարների մի խումբ, որը ինսամբի մատուցման համար պայմանագիր է կնքել L.A. Care-ի հետ:

Ցանցի մատակարար (կամ ներցանցային մատակարար)՝ Անցեք «Մասնակից մատակարար»:

Ցավամոքիչ ինսամբ՝ Լուրջ հիվանդություն ունեցող անդամի համար ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհանգստությունները նվազեցնող ինսամբ:

Քրոնիկ վիճակ՝ Մի հիվանդություն կամ ուրիշ բժշկական վիճակ, որը հնարավոր չէ լրիվ բուժել կամ որը վատանում է ժամանակի ընթացքում կամ անհրաժեշտ է այն դարմանել, որպեսզի ավելի չվատանաք:

Օրթոգային սարք՝ Որպես հենարան օգտագործվող մի սարք կամ դրսից մարմնին ամրացված ամրակ՝ նեցուկ ընծայելու կամ ուղղելու մի խիստ շատ փասված կամ ախտահարված մարմնի մաս և որը բժշկականորեն անհրաժեշտ է անդամի բժշկական ապաքինման համար:



Ձանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

8. Խորհուրդներ L.A. Care-ի անդամների համար

Ինչպես ստանալ Ձեր դեղատոմսային դեղերը

Թերևս Ձեր բժիշկը Ձեզ տա մի դեղատոմս, երբ հիվանդ եք կամ ունեք առողջական մի վիճակ, ինչպես՝ արյան բարձր ճնշումը կամ շաքարախտը: Դեղատոմսը հիմնվում է Ձեր առողջական կարգավիճակի վրա:

Նոր դեղատոմսերի համար՝

Եթե դեղատոմսն առաջին անգամ եք լցնում, պարտավոր եք գնալ մի դեղատուն, որը գործում է L.A. Care-ի հետ: Ձեր առողջապահական ծրագրի հետ գործող դեղատների ցանկը գտնվում է L.A. Care-ի մատակարարների հասցեագրքում: Ձեզ մոտակա դեղատուն գտնելու համար այցելեք մեր կայքը՝ **lacare.org** կամ անվճար զանգահարեք **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)** համարով սովորական աշխատանքային ժամերի ընթացքում, երկուշաբթիից ուրբաթ, կ.ա. 7-ից կ.հ. 7-ը: Արտակարգ իրավիճակ կամ հրատապ հարց ունենալու դեպքում, մենք ունենք անձնակազմ, որը կարող է Ձեզ օգնել օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառած տոնական օրերը: Կարող եք զանգահարել **1-888-839-9909 (TTY 711)** համարով: Որոշ պարագաներում կարող եք նաև արտակարգ իրավիճակի պաշար ստանալ դեղատնից:

Դեղատոմսերի վերալցման համար՝

Եթե վերալցնում եք արդեն իսկ Ձեր ունեցած դեղատոմսը, պարտավոր եք գնալ մի դեղատուն, որը գործում է L.A. Care-ի հետ: Նույնպես, մի շաբաթ տեղական դեղատներում կամ փոստային պատվերի միջոցով կարող եք այժմ ստանալ վիճակը կայունացնող դեղերի մինչև 90-օրյա պաշար: 90-օրյա պաշար ստանալու համար, խնդրվում է Ձեր բժշկից խնդրել, որ դեղատոմսը նշանակի 90-օրյա պաշարի համար, վերալցումներով, Ձեր վիճակը կայունացնող դեղի համար: L.A. Care-ը այս ծառայությունը մատուցելու համար գործում է ողջ Լոս Անջելես վարչաշրջանում տարածված դեղատների հետ:

Փոստային պատվերով դեղատուն՝

Որպեսզի 90-օրյա պաշարով վիճակը կայունացնող դեղը փոստով ուղարկվի Ձեր տունը կամ աշխատավայրը, Դուք պարտավոր եք օգտագործել L.A. Care Health Plan-ի փոստային պատվերով դեղատան ծառայությունը: Խնդրում ենք զանգահարել **Անդամների սպասարկում** անվճար **1-888-839-9909 (TTY 711)** համարով, որպեսզի փոստային պատվերով դեղատան դիմումի ձևաթուղթը



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

8 | Խորհուրդներ L.A. Care-ի անդամների համար

փոստով Ձեր տուն ուղարկվի: Փոստային պատվերով դեղատան դիմումի ձևաթուղթը կարող եք նաև գտնել համացանցում՝ **lacare.org** կայքում:

- Գնացեք «For Members» (Անդամների համար)
- Ձախ կողմում Անդամների ծառայությունների (Member Services) ներքո կտեսնեք «Pharmacy Services» (Դեղատան ծառայություններ)
- Դեղատան ծառայությունների էջում ուղղվեք ներքև մինչև տեսնեք «An Online Option to Order Prescriptions» (Դեղատոմսեր պատվիրելու առցանց ընտրանք) խորագրով բաժինը
- Կտեսնեք «Mail Order Pharmacy Form» (Փոստային պատվերով դեղատան ձևաթուղթ) և հետևեք հրահանգներին

Փոստային պատվերը ընտրովի ծառայություն է, եթե որոշեք օգտվել նրանից:

Մասնագիտացված դեղատուն՝

L.A. Care-ը կարող է պահանջել, որ մի շարք դեղեր ստանաք մեզ հետ պայմանագիր կնքած մասնագիտացված դեղատներից, որոնք ունեն մասնագիտացված դեղերով զբաղվելու փորձ:

- Մասնագիտացված դեղատներն ունեն խորը պատրաստված դարմանագետներ և անձնակազմ, որպեսզի անդամներին մատուցեն անձնականացված աջակցություն իրենց քրոնիկ հիվանդությունների և բարդ հիվանդությունների համար:
- Մասնագիտացված դեղերը տրամադրելի են միայն միամսյա պաշարով իրենց բարձր գնի և օգտագործման պատճառով:
- Մասնագիտացված դեղատները մասնագիտացված դեղերը փոստով կուղարկեն Ձեր տուն:
- Մասնագիտացված դեղերը, որոնք պետք է մատակարարվեն որոշակի մասնագիտացված դեղատների կողմից, նշվել են այս ապահովագրված դեղերի ցանկում, որը ծանոթ է որպես դեղացանկ:
- Մեր դեղացանկը կարող եք գտնել **lacare.org** կայքում:
 - Գնացեք «For Members» (Անդամների համար)
 - Ձախ կողմում Անդամների ծառայությունների (Member Services) ներքո կտեսնեք «Pharmacy Services» (Դեղատան ծառայություններ)
 - Մեր Medi-Cal-ի Դեղացանկը նշվել է «Resources»-ի (Աղբյուրներ) ներքո

Դեղատոմսը ինչպես լցնել տալ դեղատանը՝

1. Ընտրեք Ձեզ մոտակա պայմանագիր կնքած մի դեղատուն:
2. Ձեր դեղատոմսը տարեք դեղատուն:
3. Դեղատոմսը դեղատան անձնակազմին տվեք Ձեր L.A. Care-ի անդամի ճանաչողական քարտի հետ: Սա կօգնի, որ դեղատունը լցնի Ձեր դեղատոմսը:
4. Անպայման դեղատան հանձնեք Ձեր ճշգրիտ հասցեն և հեռախոսի համարը:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):**
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

5. Ստուգեք, որ դեղատոմսն անպայման իմանա Ձեր ստացած բոլոր դեղերի և որևէ դեղի նկատմամբ Ձեր ունեցած ավերգիայի մասին:
6. Եթե Ձեր դեղատոմս(եր)ի մասին ունեք որևէ հարց, անպայման հարցրեք դեղագործին:

Medi-Cal-ի անդամներից վճարում չպետք է պահանջվի դեղատոմսային դեղերի համար: Եթե անդամ եք Medi-Cal-ի և Ձեզանից պահանջվում է վճարել դեղատոմսի համար, զանգահարեք L.A. Care 1-888-839-9909 (TTY 711) համարով:

Արտակարգ իրավիճակ կամ հրատապ հարց ունենալու դեպքում, մենք ունենք անձնակազմ, որը կարող է Ձեզ օգնել օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառած տոնական օրերը: Կարող եք զանգահարել **1-888-839-9909 (TTY 711)** համարով:

Ինչ է դեղացանկը

L.A. Care-ը օգտագործում է «Դեղացանկ» կոչվող վավերացված դեղերի ցանկ: Բժիշկների և դեղագործների մի հանձնաժողով յուրաքանչյուր երեք (3) ամիսը մեկ վերանայում է, թե ինչ դեղեր անհրաժեշտ է ավելացնել այս դեղացանկին կամ հեռացնել նրանից: Դեղերը դեղացանկում ներառվում են հետևյալ բոլոր պայմանների առկայության դեպքում՝

- Վավերացվել են Սննդի և դեղորայքի վարչության (Food and Drug Administration, FDA) կողմից
- Ընդունվել են որպես անվտանգ և արդյունավետ

Ձեր PCP-ը սովորաբար դեղեր է նշանակում L.A. Care-ի դեղացանկից: Ձեր PCP-ը դեղատոմս կգրի միայն հիմք ընդունելով Ձեր առողջական գոյավիճակը և եթե դեղը անհրաժեշտ է Ձեր առողջությունը բարելավելու համար: Կարող եք զանգահարել L.A. Care, եթե ցանկանում եք, որ դեղացանկը տրամադրվի Ձեր լեզվով, խոշոր տառատեսակով, ձայնագրված կամ այլընտրական ձևաչափով: Կարող եք նաև զանգահարել L.A. Care՝ առողջապահական ծրագրի բոլոր գործընկերների դեղացանկերի համեմատական ցանկը ստանալու համար:

Ապրանքանիշով/Քիմիական անունով (ջեներիկ) դեղեր

Քիմիական անունով դեղն ունի նույն ակտիվ բաղադրամասերն, ինչ դեղի ապրանքանիշով տարբերակը: Քիմիական անունով դեղերը վավերացված են Սննդի և դեղորայքի վարչության (FDA) կողմից և սովորաբար ապրանքանիշով դեղերից ավելի արդյունավետ են ծախքի տեսանկյունից: Քիմիական անունով դեղեր են տնօրինվում եթե չկա փաստագրված բժշկական պատճառ, որն արգելում է քիմիական անունով տարբերակի օգտագործումը կամ ապրանքանիշով դեղի համար չկա քիմիական անունով դեղ: Ձեր բժիշկը կապ պետք է հաստատի L.A. Care-ի հետ՝ ապրանքանիշով դեղի նշանակման համար համաձայնություն ստանալու նպատակով, եթե քիմիական անունովը տրամադրելի է:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711):** L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

8 | Խորհուրդներ L.A. Care-ի անդամների համար

Ո՞ր դեղերն են ապահովագրված

Կարող եք ձեռք բերել հետևյալ դեղերն ու այլ իրեր, եթե դրանք նշանակված են Ձեր բժշկի կողմից և բժշկականորեն անհրաժեշտ են՝

- L.A. Care-ի դեղացանկում նշված դեղատոմսային դեղերը
- Առանց դեղատոմսի կամ դեղադրանից գնվող դեղեր (օրինակ՝ հազի/ցրտառության օշարակ, հազի կաթիլներ կամ ասպիրին), որոնք նշված են L.A. Care-ի դեղացանկում
- Դեղացանկի շաքարախտային պաշարներ՝ ինսուլին, ինսուլինի ներարկիչներ, գլյուկոզայի ստուգման երիզներ, նշտարներ ու նշտարային ծակիչ սարքեր, գրչածև ներարկման համակարգեր, արյան գլյուկոզայի պարունակությունը որոշող սարքեր, ներառյալ թույլ տեսողություն ունեցողների համար ցուցասարքեր և մեզի մեջ կետոնային մարմինները որոշող երիզներ
- FDA-ի կողմից վավերացված հակաբեղմնավորիչ սարքեր, հակաբեղմնավորիչ դեղեր, պահպանակներ և հակաբեղմնավորիչ քսուլներ, որոնք գտնվում են L.A. Care-ի դեղացանկում
- Շտապ հակաբեղմնավորիչներ
- EpiPen-ներ, շնչահոսքի ուժգնությունը չափող սարքեր և չափված դեղաբանակը առաքող սարքեր

Ո՞ր դեղերը չեն ապահովագրված

- Ցանցին մաս չկազմող դեղատնից ստացված դեղերը, բացառությամբ՝ արտակարգ իրավիճակի դեպքում անհրաժեշտ դեղերի
- Դեղացանկում չընդգրկված դեղերը, բացառությամբ՝ սախօրոք լիազորումով L.A. Care-ի թույլատրած դեղերի
- Փորձնական կամ հետազոտական բնույթի դեղերը, բացի երբ կիրառելի են բոլոր հետևյալները՝
 - Ավանդական թերապիան չի բուժի սախատեսված վիճակը
 - Ավանդական թերապիան չի կանխարգելի զարգացող հաշմանդամությունը կամ վաղաժամ մահը
 - Առաջարկվող դեղի մատակարարը ունի անվտանգության և հաջողության այնպիսի արձանագրություն, որը նույնն է կամ ավելի լավ՝ քան ուրիշ փորձնական կամ հետազոտական դեղերի մատակարարներինը
 - Փորձնական դեղը ամենից էժան բանն է, որը բավարարում է անդամի կարիքները և նվազ թանկ է՝ քան վավերացված այլընտրանքները
 - Դեղը չի մատուցվում հետազոտական ուսումնասիրության ծիրում
 - Տրամաբանորեն ակնկալվում է, որ փորձնական/հետազոտական դեղը նշանակալիորեն կերկարաձգի անդամի կյանքը. կվերականգնի կամ կպահպանի առօրյա կյանքի պահանջվող գործունեությունների համար անհրաժեշտ գործառույթները



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**:
L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Փորձական/հետազոտական դեղերը նախօրոք լիազորում են պահանջում: Եթե փորձական կամ հետազոտական դեղի հարցում մերժում եք ստացել, իրավունք ունեք խնդրելու Անկախ բժշկական վերանայում (IMR): Այս մասին կարող եք իմանալ այս տեղեկագրի «Խնդիրների հաղորդում և լուծում» բաժնից:

- Գեղարարական դեղեր, բացառությամբ՝ բժշկականորեն անհրաժեշտ վիճակների համար նշանակվածներից
- Առնանդամի լարման խանգարումը և կամ սեռական խանգարումը բուժելու նպատակով օգտագործվող դեղեր
- Դեղացանկում չգտնվող դիետային կամ սնուցողական արտադրանքներ, բացի երբ բժշկականորեն անհրաժեշտ կամ Ֆենիլկետոնուրիայի բուժման համար են
- Որևէ սրսկվող դեղ, որը բժշկականորեն անհրաժեշտ չէ և բժշկի կողմից չի նշանակվել
- Ախորժակը ճնշող դեղեր, բացի բժշկականորեն անհրաժեշտ դեպքերից՝ հիվանդագին գիրության համար
- Կորած կամ փչացած դեղերի փոխարինումը յուրաքանչյուր օրացուցային տարվա (հունվարից դեկտեմբեր) ընթացքում երկու (2) անգամից ոչ ավելի
- Անպտղության դեղեր

Շտապ հակաբեղմնավորում (Plan B)

Շտապ հակաբեղմնավորման դեղեր կարող եք ստանալ՝

- Ձեր PCP-ից
- Դեղատնից՝ Ձեր PCP-ի դեղատոմսով, եթե 17 տարեկանից փոքր եք
- Դեղատնից՝ առանց բժշկի դեղատոմսի, եթե 17 տարեկան կամ ավելի տարեց եք
- L.A. Care-ի ցանցում չգտնվող դեղատնից: Նման դեպքում, Ձեզանից կպահանջվի վճարել մատուցված ծառայությունների դիմաց: L.A. Care-ը կփոխհատուցի այս ծախսը:
- Տեղական ընտանեկան ծրագրման կլինիկայից

Չանգահարեք L.A. Care **1-888-839-9909 (TTY 711)** համարով՝ շտապ հակաբեղմնավորման դեղեր մատուցող դեղատների ցանկի համար:

Դեղացանկում չընդգրկված դեղեր

Ձեր բժիշկը երբեմն կարող է ստիպված լինել դեղացանկում չգտնվող դեղեր նշանակել: Ձեր բժիշկը կապ պետք է հաստատի L.A. Care-ի հետ՝ հավանություն ստանալու նպատակով նախօրոք լիազորում խնդրելու համար: Դեղի ապահովագրված լինելու մասին որոշում կայացնելու համար, L.A. Care-ը կարող է հավելյալ տեղեկություններ ստանալու նպատակով դիմել Ձեր մատակարարին: Նախօրոք լիազորման խնդրանքը ստանալուն հետո 24 ժամվա ընթացքում,



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

8 | Խորհուրդներ L.A. Care-ի անդամների համար

L.A. Care-ը Ձեր մատակարարին և դեղատան կիմացնի, որ արդյո՞ք լիազորվել է դեղը: L.A. Care-ը և/կամ Ձեր մատակարարը կամ դեղատունը այնուհետև Ձեզ կիմացնի, որ Ձեր դեղը ապահովագրվում է, թե՛ ոչ: Եթե դեղը վավերացվել է, ապա դեղը կարող է ստանալ մի դեղատնից, որը գործում է L.A. Care-ի հետ: Եթե դեղը չի վավերացվել, իրավունք ունեք բողոքարկելու այդ որոշումը կամ բողոք ներկայացնելու: «Բողոքարկում» նշանակում է, որ պահանջում եք վերանայել որոշումը: Այս մասին կարող եք ավելին իմանալ այս տեղեկագրի «Խնդիրների հաղորդում և լուծում» բաժնից:

Դեղերն ինչպե՞ս ստանալ արտակարգ իրավիճակի ժամանակ, աշխատանքային ժամերից հետո և տոնական օրերին

- L.A. Care-ի անդամներին մատչելի են «24 ժամյա» դեղատներ, որոնք գործում են L.A. Care-ի հետ և բաց են օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
- Մոտակա «24 ժամյա» դեղատուն կարող է գտնել այցելելով մեր կայքը՝ **lacare.org**:
- L.A. Care-ի հետ գործող դեղատները կարող են Ձեր դեղամիջոցները լցնել որևէ ժամանակ և արտակարգ իրավիճակի ընթացքում:
- Արտակարգ իրավիճակի դեպքում Ձեր դեղագործին թույլատրվում է նաև դուրս գրել երեք (3) օրվա կամ 72 ժամվա դեղի պաշար՝ խուսափելու համար Ձեր ընթացիկ դեղատոմսային դեղով բուժման ընդհատումից:

Medicare-ի Մաս D՝ Դեղատոմսային դեղերի ապահովագրում նպաստառուների համար, ովքեր ունեն և՛ Medicare, և՛ Medi-Cal

Medicare-ը տնօրինում է դեղատոմսային դեղերի դաշնային ծրագիրը, որը կոչվում է Medicare-ի Մաս D: Եթե օգտվում եք Medi-Cal-ի նպաստներից և ապահովագրված եք Medicare-ով, ապա դեղատոմսային դեղերի մեծ մասը կստանաք Medicare-ից: Կան մի շարք դեղատոմսային դեղեր, որոնք չեն ապահովագրվում Medicare-ի կողմից, բայց ապահովագրվում են Medi-Cal-ի կողմից և որոնք կարող եք ստանալ Medi-Cal-ի միջոցով: Սակայն եթե ունեք Medi-Cal L.A. Care-ի մոտ և Medicare-ի Մաս D-ի ապահովագրություն մեկ ուրիշ առողջապահական ծրագրի մոտ, Ձեր դեղատունը չի կարողանա Ձեր Medicare-ի Մաս D-ի դեղատոմսերը լցնել Ձեր L.A. Care-ի Medi-Cal ապահովագրությամբ: Խնդրվում է կապ հաստատել Ձեր Medicare-ի Մաս D ծրագրի հետ: Հավելյալ տեղեկության համար խնդրվում է զանգահարել L.A. Care: Medicare-ի Մաս D-ի ծրագրի մասին հավելյալ տեղեկության և Medicare-ի Դեղատոմսային դեղերի ծրագիր (Medicare Prescription Drug Plan) ընտրելու համար զանգահարեք **1-800-633-4227** (TTY **1-877-486-2048**) համարով կամ գնացեք առցանց **medicare.gov** կայքը:



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909** (TTY **711**): L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

Ձեր լեզվով և հաշմանդամներին տրամադրվող օգնություն՝ Ինչպես կարող եմ օգնություն ստանալ

Գրավոր նյութեր Ձեր լեզվով և ձևաչափով

Իրավունք ունեք հետևյալ լեզուներից որևէ մեկով գրավոր տեղեկություն ստանալու L.A. Care-ից՝ իսպաներեն, արաբերեն, հայերեն, չինարեն, պարսկերեն, իմերերեն, կորեերեն, տագալերեն, ռուսերեն, վիետնամերեն և անգլերեն: Կարող եք նաև գրավոր տեղեկություն ստանալ խոշոր տպատառերով, ձայնագրված և ուրիշ ձևաչափերով:

Անվճար բանավոր թարգմանչական օգնություն

Առողջական ինսամբ ստանալիս իրավունք ունեք ստանալու անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ: L.A. Care-ը անվճար բանավոր թարգմանչական օգնություն է մատուցում Ձեր լեզվով և Ամերիկյան խուլուհամրերի լեզվով: Այս օգնությունը անվճար է օրը 24 ժամ, շաբաթը յոթ (7) օր: Դուք Ձեր բժշկի այցի պահերին պետք է օգտվեք պատրաստված բանավոր թարգմանչից: Բանավոր թարգմանիչը անձ է, որի պարտականությունն է խոսակցական կամ խուլուհամրերի լեզուն վերածել ուրիշ խոսակցական կամ խուլուհամրերի լեզվի: Ձեր բժիշկը կհասկանա Ձեզ, և Դուք կհասկանաք Ձեր առողջությունն ու ավելի լավ կխնամեք Դուք Ձեզ: Բանավոր թարգմանիչները պատրաստված պրոֆեսիոնալներ են: Նրանք գիտեն առողջական ինսամբի բառերը: Նրանք ճիշտ կերպով բանավոր կթարգմանեն Ձեր և Ձեր բժշկի միջև բոլոր ասվածները: Նրանք Ձեր բժշկի հետ Ձեր գրույցը գաղտնի կպահեն: Պետք չէ օգտագործեք ընկերների, ընտանիքի անդամների կամ հատկապես երեխաների՝ բանավոր թարգմանություն կատարելու Ձեզ համար, բացի արտակարգ իրավիճակներից:

Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում**, եթե բանավոր թարգմանչական օգնության կարիք ունեք: Մենք կարող ենք հեռախոսով և Ձեր լեզվով օգնել Ձեզ և ապահովել բանավոր թարգմանչի առկայությունը Ձեր հաջորդ այցի համար:

1-ին քայլ՝ Ժամադրություն դասավորեք Ձեր բժշկին այցելելու համար

2-րդ քայլ՝ Չանգահարեք L.A. Care՝ **1-888-839-9909 (TTY 711)** համարով Ձեր ժամադրությունից առնվազն տասնաչորս ամսվա առաջ:

Պատրաստի ունեցեք այս տեղեկությունները՝

- Ձեր անունը
- Ձեր ծրագրի ճանաչողական համարը
- Ձեր ժամադրության ամսաթիվն ու ժամը
- Բժշկի անունը
- Բժշկի հասցեն և հեռախոսի համարը

Ձեր բժշկի հետ Ձեր ժամադրությունը փոխվելու կամ ջնջվելու դեպքում հնարավորինս շուտ զանգահարեք L.A. Care **1-888-839-9909 (TTY 711)** համարով:



Չանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգն անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:

8 | Խորհուրդներ L.A. Care-ի անդամների համար

Խոլ և դժվար լսող անդամները կարող են զանգահարել **711** համարով, օգտվելով TTY սարքից: Այս համարը Ձեզ շփման մեջ կդնի Կալիֆորնիայի փոխանցման ծառայության (California Relay Service, CRS) հետ: CRS-ում մարզված հեռախոսավարներ Ձեզ կօգնեն կապ հաստատել L.A. Care-ի կամ Ձեր բժշկի հետ:

Մատչելիության տեղեկություն հաշմանդամների համար

Բժիշկների գրասենյակներից և կլինիկաներից շատերը մատուցում են բժշկական այցերը պարզապես ավելի հեշտ դարձնող օգնություն: Նրանք կարող են մատչելի կայանատեղիներ, թեքահարթակներ, քննության ընդարձակ սենյակներ և անվաթոռի հարմար կշեռքներ առաջարկել: Այսպիսի օգնություն առաջարկող բժիշկների կարող է գտնել Մատակարարների հասցեագրքում: L.A. Care-ի **Անդամների սպասարկումը** կարող է նաև օգնել, որ գտնեք մի բժշկի, ով կարող է բավարարել Ձեր հատուկ կարիքները:

Բժշկի գրասենյակը, կլինիկան կամ հիվանդանոցը չի կարող օգնությունը մերժել Ձեզ համար Ձեր հաշմանդամության պատճառով: Անմիջապես զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում**, եթե չեք կարող ձեռք բերել Ձեզ անհրաժեշտ օգնությունը կամ եթե այն դժվար է ձեռք բերվում:

Մի մոռացեք՝ Ձեր այցի ընթացքում բժշկի գրասենյակին հայտնեք, եթե Ձեզ հավելյալ ժամանակ կամ հավելյալ օգնություն է հարկավոր:

Գանգատներ

Կարող եք գանգատ ներկայացնել, եթե՝

- Գտնում եք, որ Ձեզ մերժել են ծառայություններ մատուցել Ձեր հաշմանդամության կամ անգլերեն չիմանալու պատճառով
- Չեք կարողանում բանավոր թարգմանիչ ձեռք բերել
- Գանգատ ունեք բանավոր թարգմանիչ նկատմամբ
- Տեղեկություն չեք կարողանում ստանալ Ձեր լեզվով
- Ձեր մշակութային կարիքները չեն բավարարվել

Գանգատ ներկայացնելու կերպի մասին կարող եք ավելին իմանալ: Գնացեք այս տեղեկագրքի «Խնդիրների հաղորդում և լուծում» բաժինը:



Զանգահարեք L.A. Care-ի **Անդամների սպասարկում՝ 1-888-839-9909 (TTY 711)**: L.A. Care-ը այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ՝ տոնական օրերը: Հեռախոսազանգ անվճար է: Կամ զանգահարեք Կալիֆորնիայի փոխանցման հեռախոսագիծ՝ **711**: Այցելեք առցանց՝ **lacare.org**:



Անվճար հեռախոսահամար՝ **1.888.839.9909** | TTY 711



lacare.org

